ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՋԻԼ ՀԵՄՄՈՆԳ

ԳՆԱՃԻ ՆՊԱՏԱԿԱԳՐՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

ՁԵՌՆԱՐԿ ԹԻՎ 29

2010

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՉԵՌՆԱՐԿ ԹԻՎ 29

ԳՆԱՁԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

(վերանայվել է 2010 թ. հունվարին)

ՀԵՂԻՆԱԿ՝ ՋԻԼ ՀԵՄՈՆԴ

Անգլիայի բանկ

2010

Ձեռնարկը առաջին անգամ հրապարակվել է 2009 թ. հունիսին. պարբերաբար վերանայումը նպատակ է հետապնդում թարմացնել տեղեկությունները (ccbsinfo@bankofengland.co.uk):

Հեղինակի՝ ձեռնարկում արտահայտված կարծիքներն ու տեսակետները կարող են չհամընկնել Անգլիայի բանկի կարծիքներին ու տեսակետներին:

Շարքի խմբագիրներ՝ Էնդրյու Բլեյք (էլ-փոստ՝ Andrew.blake@bankofengland.co.uk) և Ֆրանչեսկո Զանետտի (էլ-փոստ՝ Francesco.zanetti@bankofengland.co.uk):

Կենտրոնական բանկերի գործունեության հետազոտությունների կենտրոն, Անգլիայի բանկ, Թրեդնիդլ Սթրիթ, Լոնդոն, EC2R 8AH:

Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակի հասցեն է՝ www.bankofengland.co.uk/education/ccbs/handbooks_lectures.htm:

© Անգլիայի բանկ (Bank of England), 2010 թ.:
© ՀՀ կենտրոնական բանկ, թարգմանության համար, 2010 թ.:

ԳՆԱՀԻ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ջիլ Հեմոնդ
(gill.hammond@bankofengland.co.uk)

Աշխարհում մեծանում է այն կենտրոնական բանկերի թիվը, որոնք գնաճի նպատակադրումն ընդունում են որպես իրենց դրամավարկային քաղաքականության ռազմավարություն: 2010 թ. սկզբի դրությամբ 27 կենտրոնական բանկեր համարվել են լիարժեք գնաճի նպատակադրում իրականացնողներ, և շատ երկրներ գտնվում են լիարժեք գնաճի նպատակադրման քաղաքականության անցնելու գործընթացում:

Սույն ձեռնարկում ներկայացրել ենք հիշյալ 27 կենտրոնական բանկերի կողմից իրականացվող գնաճի նպատակադրման քաղաքականության ամենակարևոր առանձնահատկությունները: Այդ տվյալները հնարավորություն են տալիս վերլուծելու գնաճի նպատակադրման նորագույն մոտեցումները, այսինքն՝ իրավական և ինստիտուցիոնալ կայացվածությունը, գնաճի նպատակային ցուցանիշի ձևավորումը, որոշումներ կայացնող մարմինը և որոշումների կայացման գործընթացը, կենտրոնական բանկերի կողմից օգտագործվող մոդելները և կանխատեսումները, հաշվետվելիության մեխանիզմները, ինչպես նաև հաղորդակցման և հրապարակայնության ռազմավարությունները:

2008 թվականին ամբողջ ուժգնությամբ ու ծավալով դրսևորված ֆինանսատնտեսական ճգնաժամը հստակ հարցադրումներ է առաջադրել դրամավարկային քաղաքականությանը, և գնաճի նպատակադրման ռազմավարությունն այս առումով բացառություն չէ:

Հայերեն հրատարակության առիթով

Ուրախ եմ, որ գնաճի նպատակադրման վերաբերյալ այս ձեռնարկը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի շնորհիվ թարգմանվել է հայերեն: ՀՀ կենտրոնական բանկն այն 27 կենտրոնական բանկերից է, որը գնաճի նպատակադրման ռազմավարություն է իրականացնում:

Գնաճի նպատակադրման ներքո կենտրոնական բանկերն ունեն գնաճի թիրախ, որի մակարդակը հրապարակվում է: Այնուհետև, կիրառելով դրամավարկային քաղաքականության գործիքներ, ինչպիսիք են տոկոսադրույքները, կենտրոնական բանկերն ազդում են տնտեսության վրա այնպես, որպեսզի ապահովվի գնաճի նպատակային մակարդակը: Ցածր և կայուն գնաճի ապահովումը ժամանակակից կենտրոնական բանկերի հիմնական գործառույթներից է, քանի որ դրա միջոցով ձեռք են բերվում կայունության համար անհրաժեշտ պայմաններ, որոնք կնպաստեն տնտեսական աճի և զբաղվածության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը գնաճի նպատակադրման ռազմավարությունն ընդունել է 2006 թվականի հունվարին: Բանկն ունի դրամավարկային քաղաքականության ռազմավարության հստակ և համապարփակ շրջանակ, ինչը կարող է օրինակելի մոդել հանդիսանալ տարածաշրջանի այն կենտրոնական բանկերի համար, որոնք անցում են կատարում գնաճի նպատակադրման: Սույն ձեռնարկում նկարագրված է ՀՀ ԿԲ-ի և գնաճի նպատակադրման ռազմավարություն ընդունած մյուս 26 կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականության շրջանակը: Այն ներառում է նպատակադրվող գնաճի ճշգրիտ սահմանումը, որոշումների կայացման և հաղորդակցման գործընթացները, կենտրոնական բանկերի կողմից կիրառվող մոդելները և կանխատեսումները:

Մինչև այժմ գնաճի նպատակադրման ռազմավարությունը փոփոխություններ հանդուրժել է այնքանով, որքանով իրականացվել է դրամավարկային քաղաքականություն, ընդ որում, գնաճի թիրախներն ինքնին արժեքավոր խարիսխներ են առավել տատանողական գնաճային միջավայրի պայմաններում:

Չիլ Հեմոնդ

Կենտրոնական բանկերի գործունեության
հետազոտությունների կենտրոն, Անգլիայի բանկ

Շնորհակալական խոսք

Սույն ձեռնարկի տվյալներն ի մի են բերվել հիմնականում կենտրոնական բանկերի կայքերից: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ***Ջոյս Չենին***՝ անգնահատելի աջակցության համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև մյուս կենտրոնական բանկերի մեր գործընկերներին, ովքեր ստուգել և ճշտել են տվյալները, լրացրել բացթողումները:

Շնորհակալություն՝

Հասմիկ Ղահրամանյանին
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

Էնթոնի Ռիչարդսին
Ավստրալիայի պահուստային բանկ,

Վագներ Գալիանոներին և Անդրե Միներալային
Բրազիլիայի կենտրոնական բանկ,

Ագատե Կոտեին
Կանադայի բանկ,

Մարիանա Գարսիային և Պաբլո Գարսիային
Չիլիի կենտրոնական բանկ,

Ալդոլֆո Կոբոյին և Լավան Մահադևային
Կոլումբիայի Հանրապետության բանկ,

Դանա Հաջկովային
Չեխիայի ազգային բանկ,

Բենջամին Ամոային
Գանայի բանկ,

Խուան Կառլոս Կաստանյեդա Ֆուենտեսին
Գվատեմալայի բանկ,

Բալաշ Վոննակին և Դանիել Ֆելցերին
Հունգարիայի բանկ,

Թորարին Պետուրսոնին
Իսլանդիայի բանկ,

Պրիբադի Սանտոսոյին
Ինդոնեզիայի բանկ,

Էդ Օֆենբախերին
Իսրայելի բանկ,

Սանգ-Վու Հանին
Կորեայի Հանրապետության բանկ,

Կարլո Էդուարդո Ալկարազին
Մեքսիկայի բանկ,

Սատիշ Ռենչհոդին
Նոր Զելանդիայի պահուստային բանկ,

Կյետիլ Օլսենին
Նորվեգիայի բանկ,

Էդրիեն Արմասին
Պերուի կենտրոնական բանկ,

Ֆրանցիսկո Դակիլային
Ֆիլիպինների կենտրոնական բանկ,

Յուլիուշ Յաբլեչկիին և Վիտոլդ Գրոստալին
Լեհաստանի ազգային բանկ,

Դորինա Անտոհիին
Ռումինիայի ազգային բանկ,

Լիլյանա Դյուրջևիչին
Սերբիայի ազգային բանկ,

Մամֆո Մոդիսեհի և Գրեգ Ֆարելին
Հարավաֆրիկյան Հանրապետության պահուստային բանկ,

Հանս Դելմոյին
Շվեդիայի բանկ,

Կոբսակ Պոոտրակուլին և Արունրատ Նգամյարուսպոնգին
Թաիլանդի բանկ,

Հուսեին Սոնգուլին, Մեհթափ Կեսրիյելիին և Օլչայ Յուչել Քուլհայիին
Թուրքիայի Հանրապետության կենտրոնական բանկ:

Բովանդակություն

Ներածություն 9

Գնաճի նպատակադրման զարգացումը որպես դրամավարկային քաղաքականության ռազմավարություն 9
Գնաճի նպատակադրման սահմանումը 9
Գնաճի նպատակադրման հայեցակարգային և գործնական զարգացումներ 10
Գնաճի նպատակադրման փորձի ուսումնասիրություններ 13
Գնաճի լիարժեք նպատակադրում իրականացնողներ 15

Գնաճի նպատակադրման ռազմավարություններ 17
Իրավական մանդատ և կենտրոնական բանկի անկախություն 17
Ինչ մակարդակի վրա պետք է լինի նպատակային ցուցանիշը 20
Նպատակային հորիզոն 23
Նպատակային ցուցանիշ 24
Նպատակային կե՞տ, թե՞ նպատակի միջակայք 25

Որոշումների կայացումը գնաճի նպատակադրման ժամանակ 26
Որոշումներ կայացնող մարմին 27
Հանձնաժողովի չափը և կազմը 28
Որոշումների կայացման գործընթաց 29
Որոշումների կայացման պարբերականություն 30

Մոդելներ և կանխատեսումներ 30
Դրամավարկային քաղաքականության համար օգտագործվող մոդելներ 30
Կանխատեսումներ 33

Հաշվետվելիություն և թափանցիկություն 37
Հաշվետվելիության մեխանիզմներ 37
Հրապարակումներ և հրապարակայնություն 41

Գնաճի նպատակադրման մարտահրավերներ 44
Գնաճի նպատակադրում և ակտիվների գներ 45
Գնաճի նպատակադրման առանձնահատկությունը 46
Գնաճի նպատակադրում զրոյական միջակայքում 46

Եզրակացություն 48

Առանձին երկրների ռազմավարություններ 49
Հայաստան 49
Ավստրալիա 51
Բրազիլիա 53
Կանադա 55
Չիլի 57
Կոլումբիա 59
Չեխիա 61
Գանա 63
Գվատեմալա 66
Հունգարիա 68
Իսլանդիա 70
Ինդոնեզիա 72
Իսրայել 74
Մեքսիկա 76
Նոր Զելանդիա 78
Նորվեգիա 81
Պերու 83
Ֆիլիպիններ 85
Լեհաստան 88
Ռումինիա 91
Սերբիա 94
Հարավային Աֆրիկա 96
Կորեայի Հանրապետություն 98
Շվեդիա 100
Թաիլանդ 102
Թուրքիա 104
Միացյալ Թագավորություն 106

Օգտագործվող գրականություն 109
Կենտրոնական բանկերի վերաբերյալ ձեռնարկներ 110
Ձեռնարկներ. Տեխնիկական շարքեր 111
ԿԲԳՀԿ վերջին հրապարակումներ 111

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնաճի նպատակադրման զարգացումը որպես դրամավարկային քաղաքականության ռազմավարություն

Գնաճի նպատակադրման սահմանումը

Գնաճի նպատակադրումը ընկալվում է որպես ռազմավարություն, այլ ոչ թե պարզապես դրամավարկային քաղաքականության համար նախատեսված կանոնների ամբողջություն: Այնուամենայնիվ գոյություն ունեն գնաճի նպատակադրման ռազմավարության մի շարք առանցքային տարրեր.

1. գների կայունությունը միանշանակ ընդունվում է որպես դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակ,[1]
2. գնաճի նպատակային ցուցանիշները հայտարարվում են հանրությանը,
3. դրամավարկային քաղաքականությունը հիմնված է մեծածավալ տեղեկատվության, այդ թվում՝ գնաճի կանխատեսումների վրա,
4. թափանցիկությունը,
5. հաշվետվելիության մեխանիզմները:

Գնաճի նպատակադրման ռազմավարության շոշափելի առավելությունը կայանում է նրանում, որ նա պարունակում է դրամավարկային քաղաքականության ինչպես «կանոնի», այնպես էլ «հայեցողականության» տարրեր, այդ պատճառով հիշյալ ռեժիմը հաճախ բնութագրվում է որպես «սահմանափակված հայեցողականության» ռեժիմ: Քինգը 2005 թ. հրապարակած աշխատությունում նշել է. «Գնաճի նպատակադրման ռազմավարությունը պարունակում է երկու հստակորեն տարանջատված տարրեր. ա) միջինժամկետ հատվածում գնաճի համար սահմանված ստույգ թվային թիրախ և բ) արձագանք տնտեսական ցնցումներին՝ կարճաժամկետ հատվածում: Գնաճի նպատակը ենթադրում է կանոնայնությանը հակված համակարգի

---

[1] Թեպետ գների կայունությունը համարվում է դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակ, այնուամենայնիվ ընդունված է հաշվի առնել նաև տնտեսական աճին ու զբաղվածությանն ուղղված օժանդակ նպատակները: Առավել մանրամասն տե՛ս Երկրի բնութագրիչների մանրամասներ հատվածը:

գոյություն, որի վրա մասնավոր հատվածը կարող է խարսխել հետագա գնաճի մասին իր ակնկալիքները»: Կանոնին հակված նման համակարգի պայմաններում կենտրոնական բանկը դրսևորում է ցնցումներին արձագանքելու սեփական հայեցողականություն, օրինակ՝ ինչ ժամանակահատվածում գնաճի ցուցանիշը վերադարձնել նպատակային մակարդակ:

Վուդֆորդը (2003 թ.) և Սվենսոնը (2007 թ.) ցույց են տվել, որ գնաճի նպատակադրումը կարող է մոտարկվել քառակուսային կորստի ֆունկցիայով, որը կազմված է նպատակից գնաճի ցուցանիշի շեղման քառակուսու գումարից և կշռից՝ բազմապատկված ՀՆԱ-ի ճեղքվածքի քառակուսով: Գործնականում գնաճի և ՀՆԱ-ի կայունացման համար տրված համապատասխան կշիռները հավանական է տատանվեն ժամանակի ընթացքում: Հավանական է նաև, որ դրանք պայմանավորված լինեն կենտրոնական բանկի վարկունակությամբ. երբ կենտրոնական բանկը ձգտում է ձեռք բերել վարկունակություն, ապա այն անպայման ավելի մեծ կշիռ կտա գնաճի կայունացմանը:

Գնաճի նպատակադրման հայեցակարգային և գործնական զարգացումներ

Գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունումը պատասխան է ոչ թե նոր տնտեսագիտական մտածողությանը, այլ իրատեսական պատասխան դրամավարկային մյուս ռազմավարությունների ձախողմանը: Տեսականը և գործնականը վերջին մի քանի տասնամյակներում միասին են զարգացել, և այժմ գնաճի նպատակադրման մասին ակադեմիական գրականության մեծ պաշար է ձևավորվել:[2] Գների կայունության նպատակին հասնելու համար դրամավարկային քաղաքականությունը պահանջում է անվանական խարսխի առկայություն: Անվանական խարիսխը անվանական փոփոխականի ամրագրումն է՝ գնաճը երկարատև ժամանակահատվածում ցածր պահելու համար: Պատմականորեն կենտրոնական բանկերը որպես անվանական խարիսխ օգտագործել են ոսկու չափորոշիչը կամ ազգային արժույթի ամրակցումը մեկ այլ ուժեղ արժույթի: Ամրագրված փոխարժեքների Բրետոնվուդյան համակարգի փլուզումը յոթանասունա-

[2] *Տեսության և գործնականության փոխազդեցությունը քննարկվում է Հեմոնդի, Քանբուրի և Պրասադի հետազոտություններում (2009 թ.):*

կաններին, զուգակցվելով բարձր գնաճով, հանգեցրել է նոր խարիսխներ փնտրելու անհրաժեշտության: Այդպիսի նոր խարիսխ էր փողի առաջարկը: Ութսունականներին մոնետարիզմը համարվում էր դրամավարկային քաղաքականության գերակա ուղղություն, որի պայմաններում կենտրոնական բանկերը տնտեսությունում փողի առաջարկը վերահսկելու միջոցով հսկում էին գների մակարդակը: Դա պայմանավորված էր անվանական ծախսերի և փողի քանակի միջև կայուն կապի գոյությամբ, որը հայտնի է որպես Փողի քանակական տեսություն: Միլթոն Ֆրիդմանը զարգացնելով քանակական տեսությունը՝ պնդել է, որ փողի պահանջարկը պայմանավորված է, ինչպես և ակնկալվում էր, մի շարք մակրոտնտեսական փոփոխականներով, հետևաբար, կենտրոնական բանկերը կարող են վերահսկել ծախսումները և գնաճը՝ տնտեսությունում փողի առաջարկը փոփոխելու միջոցով:

Ֆրիդմանի ամրագրված փողի տեսությունը ենթադրում է, որ գնաճի կոնկրետ մակարդակը նպատակադրելու համար կենտրոնական բանկերը պետք է փողի առաջարկը հաշվարկեն՝ ելնելով մակրոտնտեսական փոփոխականների հետ դրա ունեցած կապից: Այս կանոնը կենտրոնական բանկերին լոկ փոքր հայեցողականության հնարավորություն է տալիս սեփական դատողություններն ունենալ տնտեսությանն անհրաժեշտ փողի առաջարկը գնահատելու գործում: Դրամավարկային քաղաքականության հաջողակ ծավալային կարգավորում իրականացնողները գործնականում հաշվի են առել փողի առաջարկի և տնտեսական երևույթների միջև տատանողականության հանգամանքը: Բերնանկեն փաստարկում է, որ գնաճի նպատակադրման ռազմավարությունը շատ առումներով պարտական է այն պրագմատիզմին (իրատեսական), որով Բունդեսբանկն իր դրամավարկային քաղաքականությունն էր իրականացնում դեռևս ութսունականներին. «Բունդեսբանկն անուղղակիորեն իրականացնում էր գնաճի նպատակադրում՝ փողի աճը դիտարկելով որպես ծավալային ցուցանիշ, ինչը հնարավորություն էր տալիս նախանշել իր քաղաքականության ուղղությունները: Մասնավորապես, երբ հակասություններ էին ի հայտ գալիս փողի աճի և գնաճի նպատակային ցուցանիշների միջև, Բունդեսբանկը հիմնականում նախընտրում էր մեծ կշիռ տալ գնաճի նպատակային ցուցանիշներին» (Բերնանկե և Միհով (1997 թ.)):

Ի վերջո, դրամավարկային քաղաքականության ծավալային կարգավորումը շատ երկրներում ձախողվում է, որովհետև կայուն չէր

փողի պահանջարկի գործառույթը: Այս անկայունության առաջացմանը նպաստող հանգամանքներից էին ապականոնակարգումը, ինչպես նաև ֆինանսական նորարարությունները, ակտիվների նոր տեսակները, բանկային համակարգի ապամիջնորդության աճը: Ինչպես նշել է Կանադայի բանկի նախկին կառավարիչ Ջոն Քրոուն իր հայտնի մեկնաբանությունում՝ «մենք չլքեցինք դրամական ագրեգատները, այլ դրանք լքեցին մեզ»:

Ութսունականների կեսին փողի ծավալային կարգավորման ձախողմանը և իննսունականներին ամրագրված փոխարժեքային ամրակցումների քաղաքականության տապալմանը հետևում է դրամավարկային քաղաքականության նոր՝ գնաճի նպատակադրման ռազմավարությունը՝ լողացող փոխարժեքներով: Վերջինս համահունչ էր այդ ժամանակ գերակայող այն ակադեմիական համակարծությանը, որը քարոզում էր, թե ինչ կարող է և ինչ չի կարող կատարել դրամավարկային քաղաքականությունը:

Ինչ է մեզ ասում մոնետարիստական տեսությունը: Առաջին. ինչպես ցույց են տվել Ֆրիդմանը և Ֆելպսը, մշտապես բարձր գնաճի մակարդակը չի հանգեցնում բարձր տնտեսական աճի և զբաղվածության: Այս համոզմունքի ընդունումը որոշակիորեն օգնում է հրաժարվել կարճաժամկետ պահանջարկ կառավարող կամ ճշգրտող դրամավարկային քաղաքականությունից և կենտրոնանալ գների կայունության միջնաժամկետ խնդրի վրա, ինչն էլ ընկած է գնաճի նպատակադրման ռազմավարության հիմքում:[(1)] Երկրորդ. գնալով ավելի մեծ ճանաչում են ստանում ցածր և կայուն գնաճի առավելությունները, ինչպես նաև գնաճի ծախսատարության մասին իրազեկվածությունը, եզրակացնելով, որ ցածր գնաճը սոցիալական բարիք է: Գնաճի նպատակի սահմանման ռեժիմներում գների կայունությունը կենտրոնական բանկերի հիմնական նպատակն է: Երրորդ. ներկայումս գրականության մեջ մեծ կարևորություն է տրվում դրամավարկային (քաղաքականության մեջ գնաճի սպասումների խնդրին: Մասնավոր հատվածի սպասումների վրա դրամավարկային քաղաքականության կայացրած որոշումների ազդեցությունը կարևոր նկատառում է դարձել

(1) Այս պնդումը, անշուշտ, չի ենթադրում, թե դրամավարկային քաղաքականությունը ներգործություն չի ունենում տնտեսական աճի և գնաճի վրա կարճաժամկետ հատվածում. պարզապես դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմներում առկա երկար և փոփոխական լագերը խոսում են այն մասին, որ դրամավարկային քաղաքականությունը իդեալական քաղաքականություն չէ կարճաժամկետ պահանջարկի կառավարման համար:

(քաղաքականություն իրականացնողների համար: Տնտեսագետների (շրջանում առկա համակարծության ֆոնի վրա գնաճի նպատակադրումը դիտվել է որպես (գնաճի սպասումները խարսխելու արդյունավետ եղանակ:

Գնաճի նպատակադրման փորձի ուսումնասիրություններ

Կան մի շարք ուսումնասիրություններ, որոնք կենտրոնական բանկերի կողմից իրականացվող գնաճի նպատակադրման ռազմավարությունը համեմատում են ոչ գնաճային նպատակներ հետապնդող քաղաքականությունների հետ: Բոլը և Շերիդանը (2003 թ.) համեմատել են ՏՀՋԿ երկրներում իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունքները և հայտնաբերել, որ այն երկրները, որոնք մինչև իննսունականները ունեցել են բարձր գնաճ, հաջորդ տարիներին գրանցել են գնաճի նվազեցման ավելի բարձր մակարդակ, քան այն երկրները, որտեղ պատմականորեն արձանագրվել է ցածր գնաճ: Նրանց փաստարկն այն է, որ. «Եթե ոմանք աշխատում են նվազեցնել գնաճը մինչև միջին մակարդակ, դա չի նշանակում, թե գնաճի նպատակադրումը բարելավում է իրավիճակը»:

Մյուս ուսումնասիրությունները պնդում են հակառակը: Հիվոնենը (2004 թ.) զարգացնելով Բոլի և Շերիդանի վերլուծությունը՝ պարզել է, որ գնաճի նպատակադրման ռազմավարության որդեգրումը մասնակիորեն է նպաստել իննսունականներին արձանագրված գնաճի նվազեցմանը: Վեգան և Վինկերլիդը (2005 թ.) բացահայտել են, որ գնաճի նպատակադրման ռազմավարության կիրառումն օգնել է կրճատելու նման ռազմավարություն որդեգրած երկրների գնաճի մակարդակը և տատանողականությունը:

Եթե ընդունենք, որ հիմնավորված չէ այն վկայությունը, թե գնաճ նպատակադրողները գների կայունության ապահովման հարցում ավելի լավ են կատարում իրենց առաքելությունը գնաճ չնպատակադրողների համեմատությամբ, ավելի համոզիչ է դառնում այն էմպիրիկ վկայությունը, թե գնաճի նպատակային ցուցանիշը կարող է ուղղորդիչ լինել և խարսխել գնաճի սպասումները: Օրֆանիդեսը և Ուիլյամսը (2003 թ.) ցույց են տվել, որ գնաճի նպատակադրման ռազմավարության հանդեպ ցուցաբերվող համակարգային մոտեցումն ավելի կանխատեսելի է դարձնում այդ ռազմավարությունը և մեծացնում է սպասումների վրա հնարավոր ազդեցությունը: Ուսումնասիրելով, թե

որքանով է ակնկալվող գնաճը տեղաշարժվում ի պատասխան տնտեսական նորությունների, Լևինը և այլոք (2004 թ.) ապացուցել են, որ գնաճի նպատակադրում իրականացնող երկրներում գնաճի տևականությունն ավելի կարճ է, իսկ սպասումներն ավելի լավ են խարսխվում:[2]

Համեմատաբար վերջերս առկա են էմպիրիկ վկայություններ զարգացող շուկայական տնտեսություններում գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացման վերաբերյալ: ԱՄՀ-ի կատարած հետազոտությունը[3] պարզել է, որ «…գնաճի նպատակադրումը, ըստ էության, զուգորդվում է ցածր գնաճի, ցածր գնաճի սպասումների և գնաճի ցածր տատանողականության հետ՝ ի հակադրումն այլ ռազմավարությունների»: Ավելին, գնաճի նման արդյունքները ձեռք են բերվել առանց տնտեսական աճի վրա ունեցած բացասական ներգործությունների և տոկոսադրույքների տատանողականության: Վերջերս ԱՄՀ-ն փորձել է ճշտել, թե դրամավարկային քաղաքականության որ ռազմավարությունն է առավել հաջողված 2007 թ. նավթի ու սննդամթերքի գնային ցնցումների հետևանքով առաջացած գնաճային սպասումները խարսխելու գործում, և եզրակացրել, որ «զարգացող տնտեսություններում սպասումները խարսխելու գործում գնաճի նպատակադրումը ըստ էության ավելի արդյունավետ քաղաքականություն է եղել, քան դրամավարկային քաղաքականության այլընտրանքային մեխանիզմները»:[4]

Գնաճի նպատակադրման ռազմավարության վերաբերյալ առկա էմպիրիկ վկայությունը միանշանակ չէ, բայց հիմնականում խոսում է այն մեխանիզմի արդյունավետության օգտին, որն ապահովում է ցածր գնաճ և իր շուրջը խարսխում գնաճի սպասումները ինչպես զարգացած արդյունաբերական երկրներում, այնպես էլ զարգացող շուկայական տնտեսություններում: Այնուամենայնիվ, հարկ է նկատի առնել այդ ռազմավարության ընդունման անհրաժեշտության հանգամանքը: Գնաճի նպատակադրման ռազմավարություն ընդունած շատ երկրներ այդ քայլին դիմել են՝ ի կատարումն քաղաքական ու տնտեսական բարեփոխումների ավելի լայն գործընթացի, որը հաճախ ենթադրում է տվյալ երկրի ինստիտուցիոնալ կառուցվածքը բարելավելու, օրինակ՝ կենտրոնական բանկին կանոնադրական անկախություն տալու նպատակ:

---

[2] Տե՛ս նաև Գյուրքայնակ և այլք (2006 թ.):
[3] Տե՛ս ԱՄՀ-ի World Economic Outlook, (2005 թ. ամառ):
[4] Տե՛ս ԱՄՀ-ի World Economic Outlook, (2005 թ. հոկտեմբեր):

Որոշ երկրներում գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունումը որպես դրամավարկային քաղաքականության նոր մեխանիզմ ուղեկցվել է նաև ավելի լավ հարկաբյուջետային քաղաքականություններով (մասնավորապես՝ Լատինաամերիկյան երկրներում): Գնաճի նպատակադրման ռեժիմի ընդունումը հաճախ ուղեկցվել է կենտրոնական բանկի կառուցվածքում տեխնիկական հնարավորության ստեղծմամբ, ինչպես նաև մակրոտնտեսական տվյալների որակի բարելավմամբ: Քանի որ գնաճի նպատակադրումն ընդհանուր առմամբ պայմանավորված է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի փոխանցման լծակի կիրառմամբ, որոշ զարգացող շուկայական տնտեսություններ քայլեր են ձեռնարկել ֆինանսական հատվածն ուժեղացնելու և զարգացնելու ուղղությամբ: Հետևաբար, հավանական է, որ գնաճի նպատակադրման ռազմավարությանն անցնելուց հետո դրամավարկային քաղաքականության արդյունքների բարելավումը լայն իմաստով կպայմանավորի տնտեսական քաղաքականության զարգացումը:[5]

Գնաճի լիարժեք նպատակադրում իրականացնողներ

Գծանկարում ցույց են տրվում 2009 թվականի դրությամբ գնաճի լիարժեք նպատակադրման ռազմավարություն որդեգրած 27 երկրները, ռազմավարությանն անցնելու տարեթվերը[6], ինչպես նաև ռազմավարության որդեգրման պահին գրանցված գնաճի մակարդակը:

Գնաճի նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերից 9-ը ներկայացնում են զարգացած արդյունաբերական երկրները, իսկ 18-ը՝ զարգացող երկրները: Գնաճի նպատակադրման ռազմավարություն ընդունած առաջին երկիրը Նոր Զելանդիան է՝ 1989 թվականին, իսկ վերջինը՝ Սերբիան, որն այդ ռազմավարությունն ընդունել է 2009 թվականին: Միայն երեք երկրների (Ֆինլանդիա, Իսպանիա և Սլովակիա) կենտրոնական բանկեր դուրս են եկել գնաճի նպատակադրման


---

[5] ԱՄՀ-ն նշում է, որ «գնաճի նպատակադրման ակնհայտ օգուտները կարող են մասնակիորեն արտացոլել այդ երկրներում իրականացվող ներքին մոնետար կառավարման համընդհանուր որակը և դրանց զարգացման մակարդակը»:

[6] Գծանկար 1-ում ցույց են տրվում գնաճի նպատակադրման քաղաքականության պաշտոնապես ընդունման տարեթվերը: Որոշ երկրներ, նախքան պաշտոնապես մեկնարկելը, իրականացրել են գնաճի նպատակադրման անուղղակի կամ ոչ ֆորմալ քաղաքականություն:

ռազմավարությունից՝ կապված եվրոյի ընդունման հետ: Որոշ երկրներ, լինելով անցումային տնտեսություններ, անցել են գնաճի նպատակադրման ռազմավարության. դրանք են՝ Չեխիայի Հանրապետությունը, Հունգարիան, Լեհաստանը և, վերջերս՝ Հայաստանը: Զարգացող մի քանի երկրներ գնաճի նպատակադրման ռազմավարություն ընդունել են 1997 թ. ճգնաժամից հետո, ինչի պատճառով այդ երկրների արժույթները այլևս չէին կցվում որևէ արժույթի:

Գծանկար 1. Գնաճի լիարժեք նպատակադրման քաղաքականություն իրականացնող 27 երկրները



Աղբյուրը՝ Անգլիայի բանկ և այլ կենտրոնական բանկերի ինտերնետային կայքեր:

Երկրների մեծ մասը գնաճի նպատակադրման ռազմավարություն ընդունել է արդեն իսկ ունենալով ցածր գնաճի միջավայր և անգամ

բացասական մեծություն (Պերու): Սա խոսում է այն փաստարկի օգտին, որ գնաճի նպատակադրումը կարող է և չլինել գնաճի նվազեցման օպտիմալ դրամավարկային քաղաքականություն, սակայն, ըստ էության, արդյունավետ է գնաճի սպասումները նպատակային ցուցանիշի շուրջ խարսխելու և, հետևաբար, գնաճը ցածր ու կայուն մակարդակի վրա պահելու համար:

Ցածր գնաճի միջավայրը հաճախ է համարվում գնաճի նպատակադրման նախապայման՝ հիմնականում պայմանավորված բարձր և տատանողական գնաճի պայմաններում այն կանխատեսելու, ինչպես նաև գնաճի նպատակային թիրախին հասնելու դժվարությամբ: Այս պարագայում, գնաճի թիրախը չապահովելու դեպքում, մեծանում է կենտրոնական բանկի՝ սեփական վարկունակությունը կորցնելու ռիսկը: Ահա թե ինչու, շատ կենտրոնական բանկեր, նախքան գնաճի նպատակադրման ռազմավարությանը պաշտոնապես անցնելը, նախընտրեցին սպասել մինչև գնաճի կառավարելիության վերականգնման պահը: Այնուամենայնիվ, Իսրայելի ու Գվատեմալայի փորձը ցույց է տալիս, որ գնաճի նպատակադրման ռազմավարությունը հաջողությամբ իրականացվել է որպես գնաճի նվազեցման ռազմավարություն (Իսրայելի դեպքում դա տեղի է ունեցել գնաճի նպատակադրման ոչ պաշտոնական ռեժիմի պայմաններում):

Գնաճի նպատակադրման ռազմավարություններ

Իրավական մանդատ և կենտրոնական բանկի անկախություն

Գնաճի նպատակադրման վերաբերյալ հիմնական սահմանումներում առկա է այն պահանջը, ըստ որի՝ գների կայունությունը դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակն է: Դա սովորաբար ամրագրվում է կենտրոնական բանկի մասին օրենքում: Հաճախ կենտրոնական բանկի մասին օրենքում որպես օժանդակ խնդիր ամրագրվում է նաև այն, որ կենտրոնական բանկը լայնորեն օժանդակում է տնտեսության բարգավաճմանը և բարեկեցության ամրապնդմանը: Առանձին երկրներ ներկայացնող աղյուսակներից երևում է գնաճ նպատակադրող կենտրոնական բանկերի իրավական լիազորությունների նշանակալի բազմազանությունը: Օրինակ, Ավստրալիայի բանկը երկակի լիազորություն ունի գների կայունության և

զբաղվածության ապահովման համար, մինչդեռ Կանադայում կենտրոնական բանկի հիմնական խնդիրը «Կանադայի տնտեսական ու ֆինանսական բարեկեցությանը սատար կանգնելն է»:

Գնաճի նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերի մեծամասնությունն օժտված է կանոնադրային անկախության իրավասությամբ:[7] Կենտրոնական բանկի անկախության վերաբերյալ գրականության մեջ հաճախ է առանձնացվում «նպատակի սահմանման անկախություն» հասկացությունը, երբ կենտրոնական բանկն ինքնուրույն է սահմանում դրամավարկային քաղաքականության խնդիրը/նպատակը՝ ելնելով «գործառնական անկախություն» հասկացությունից (կենտրոնական բանկը կառավարության ազդեցությունից անկախ դրամավարկային քաղաքականություն է իրականացնում գնաճի նպատակին հասնելու համար): Իրականում այս տարանջատումն այնքան էլ հստակ չէ: Դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը գների կայունությունն է, ինչը սովորաբար ամրագրվում է օրենքում, և «նպատակի սահմանման անկախությունը» այդ դեպքում դառնում է գների կայունությունը (այսինքն՝ գնաճի նպատակը[8]) սահմանող երկրորդ կարգի խնդիր:

Երբ գնաճն իր կայուն միջավայրում չէ, ինչպես դա եղել է զարգացող շուկայական տնտեսություններում գնաճի նպատակադրման ռազմավարություն որդեգրելու ժամանակ, գնաճի նպատակային ցուցանիշ սահմանելը, ինչպես նաև գնաճի նվազեցման ուղին և արագությունը որոշելը քաղաքականության ամենաէական հարցերն են: Գնաճի նպատակային ցուցանիշ սահմանելու կարողությունը կենտրոնական բանկի անկախության էական տարրն է: Մյուս կողմից, ակներև է, որ կառավարության համար շահավետ է, երբ գնաճի ցուցանիշը նպատակադրվում է բացահայտորեն, ինչն ըստ էության ավելի հեշտ է անել համատեղ ջանքերով՝ խրախուսելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների համադրումը կամ փորձելով բացառել այդ երկու քաղաքականությունների միջև

---


[7] Բրազիլիայի կենտրոնական բանկը բացառություն է ընդհանուր կանոնից. նա չունի կանոնադրային անկախության իրավասություն, իսկ կենտրոնական բանկի կառավարիչը կամ կառավարչի տեղակալները չեն ունենում պաշտոնավարման ամրագրված ժամկետներ:

[8] Եվրոպայի կենտրոնական բանկը (ԵԿԲ) համարվում է ամենաանկախ կենտրոնական բանկերից մեկը: Այստեղ դրամավարկային քաղաքականության նպատակը սահմանված է կենտրոնական բանկերի եվրոպական համակարգի դաշնագրում և կանոնադրությունում: ԵԿԲ-ի դերն է՝ սահմանել գների կայունության մակարդակը, որը ներկայումս տարեկան 2 տոկոսից ցածր է, բայց մոտ է այդ մեծությանը:

հնարավոր հակասությունները: Բացի այդ, գնաճի նպատակային ցուցանիշ սահմանելու գործում կառավարության մասնակցությունը դրամավարկային քաղաքականությանը հաղորդում է ժողովրդավարական օրինականության տարր, ինչը կարևոր հանգամանք է հանրային օժանդակությունը վայելելու տեսանկյունից:

Գնաճի նպատակադրում իրականացնելիս առանցքային պահանջ է գործիքային կամ գործառնական անկախությունը: 27 երկրների գնաճ նպատակադրող կենտրոնական բանկերն օժտված են գործառնական անկախությամբ:[9] Նշված երկրներից մեծամասնությունում (16-ում) գնաճի նպատակային ցուցանիշը համատեղ սահմանվում է կառավարության և կենտրոնական բանկի կողմից: Ինը երկրում ցուցանիշը սահմանվում է կենտրոնական բանկի կողմից, երկուսում (Նորվեգիայում և Միացյալ Թագավորությունում)՝ կառավարության կողմից (գծ. 2): Ինը զարգացած արդյունաբերական երկրների շարքում Շվեդիան միակ երկիրն է, որտեղ կառավարությունը ներգրավված չէ (թե՛ միանձնյա, թե՛ կենտրոնական բանկի հետ համատեղ) գնաճի նպատակային ցուցանիշի սահմանման գործընթացում:

Գծանկար 2. Ո՞վ է սահմանում գնաճի նպատակային ցուցանիշը



Աղբյուրը՝ Անգլիայի բանկի և այլ կենտրոնական բանկերի ինտերնետային կայքեր:

[9] Այս կանոնից բացառություն է կազմում Միացյալ Թագավորությունը, որտեղ 1992 և 1997 թվականներին տոկոսադրույքների վերաբերյալ որոշումները կայացրել է Կառավարությունը:

Զարգացած արդյունաբերական երկրների գնաճի նպատակային ցուցանիշները գտնվում են 1-3 տոկոսների միջակայքում (գնաճի տ/տ աճ): Սա արտացոլում է գների կայունությունը բնութագրող գնաճի վերաբերյալ համակարծությունը: Այս երկրների կառավարությունների համար դժվար կլինի ընդունել գնաճի նպատակային ավելի բարձր ցուցանիշ, քանի որ դա կվտանգի վարկունակությունը: Նույնիսկ եթե կառավարությունը ինքն է սահմանում նպատակային ցուցանիշը, այնուամենայնիվ իրավասու չէ գների կայունությանը գործառնական սահմանում տալ:

Զարգացող և անցումային տնտեսություններ ունեցող երկրներում կենտրոնական բանկերն իրավական տեսանկյունից ունեն անկախության ավելի բարձր աստիճան: Հիմնականում Լատինաամերիկյան երկրներում[10] գնաճի նպատակային ցուցանիշը սահմանվում է կենտրոնական բանկի կողմից, իսկ մնացած տասը երկրներում՝ համատեղ: Իրականում պատկերը շատ ավելի բարդ է: Կոլումբիայում և Գվատեմալայում, օրինակ, Ֆինանսների նախարարը կենտրոնական բանկի որոշում կայացնող խորհրդի անդամ է, իսկ դա նշանակում է, որ գնաճի նպատակային ցուցանիշ սահմանելու գործընթացի վրա առկա է կառավարության որոշ ազդեցությունը:

Ինչ մակարդակի վրա պետք է լինի նպատակային ցուցանիշը

Այս հարցադրման շուրջ որոշակի անհամապատասխանություն կա տեսության և գործնականի միջև: Տեսությունն ասում է, որ գնաճի օպտիմալ մակարդակը պետք է լինի զրո (ըստ Նորքեյնսյան օրինաչափության) կամ բացասական (ըստ Ֆրիդմանի կանոնի)[11]: Գործնականում գնաճ նպատակադրող բոլոր կենտրոնական բանկերն ունեն դրական նպատակային ցուցանիշներ: Ինչպես կարելի է բացատրել տեսության և գործնականի միջև տարաձայնությունները: Պատճառները, ըստ էության, հիմնականում գործնական են:

Առաջին պատճառը լոկ վիճակագրական է: Գնահատված գնաճն ունի փաստացի գնաճը շուրջ 0.5 տոկոսային կետով գերագնահա-

---

[10] Չիլի, Կոլումբիա, Չեխիայի Հանրապետություն, Գվատեմալա, Հունգարիա, Մեքսիկա, Պերու և Լեհաստան:

[11] Ֆելփսը փաստում է, որ Ֆրիդմանի կանոնն անտեսում է հարկման ազդեցությունը. գնաճը հարկային եկամտի աղբյուր է: Գնաճի ցածր մակարդակի պայմաններում գնաճի հարկման հետ կապված անհամաչափությունները կարող են աննշան լինել:

տելու հակվածություն,[12] հետևաբար զրոյից բարձր արժեքը պետք է փոխհատուցի այդ ազդեցությունը: Մեկ այլ փաստարկ է այն, որ գնաճի դրական նպատակային ցուցանիշը նվազեցնում է անվանական տոկոսադրույքների զրոյից ցածր մակարդակի հասնելու հավանականությունը, հանգամանք, որ գործառնական նշանակություն էր ստացել 2008-2009 թթ. համընդհանուր տնտեսական անկման ժամանակներում: Հավանականություն կա, որ գնանկման ծախսը ավելի մեծ է, քան գնաճի ծախսը, հետևաբար գնաճի դրական նպատակը ցանկալի է գնանկման ռիսկի դրսևորումը, ինչպես նաև դրանից բխող պարտք-գնանկում[13] երևույթը կանխելու համար: Բացի այդ, վերջին տարիներին կուտակված փորձառությունը հիմք է տալիս ենթադրելու, որ գնաճի դրական նպատակը ցանկալի է, եթե կա անվանական աշխատավարձի վայրընթաց հակազդեցություն: Հատկանշական է, որ 2008-2009 թթ. համընդհանուր տնտեսական անկման առաջին դրսևորումները վկայում են, որ աշխատավարձի վայրընթաց տեղաշարժն ավելի մեծ ճկունություն է հանդես բերել, քան նախկինում ենթադրվում էր:[14]

Գների կայունության վերաբերյալ ճշգրիտ սահմանում չունենալու պարագայում կենտրոնական բանկերը հիմնական ուշադրությունը դարձրել են գնաճն այնպիսի մակարդակի նվազեցնելու խնդրի վրա, որի դեպքում մարդիկ չեն անհանգստանա: Ընդհանուր համաձայնությունը, ըստ էության, կայանում է նրանում, որ 3-4 տոկոս շեմից բարձր լինելու դեպքում գնաճը հանգեցնում է սոցիալական ապահովության ծախսերի ավելացմանը, իսկ գնաճը շուրջ 2 տոկոսից ցածր իջեցնելու շոշափելի օգուտները հազիվ թե կարողանան փոխհատուցել գնաճի դրական նպատակի առավելությունները:

Գրականության մեջ շատ ավելի փոքր տեղ է հատկացված զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում գնաճի օպտիմալ մակարդակի վերաբերյալ աշխատություններին, թեպետ Բալասա-Սամուելսոնի էֆեկտը նշանակում է, որ այս երկրներում օպտի-

---

[12] Բոսկինի հանձնաժողովը 1996 թ. պարզել է, որ ՍԳԻ-ն Միացյալ Նահանգներում գնաճը գերագնահատել է շուրջ 1.1 տոկոսային կետով: Ըստ Անգլիայի բանկի գնահատումների՝ նման շեղումը Միացյալ Թագավորությունում կազմել է 0.5-0.75 տոկոսային կետ: Տե՛ս Անգլիայի բանկի Աշխատանքային փաստաթուղթը. թիվ 47:

[13] Գնանկում է համարվում այն երևույթը, երբ ակտիվի անվանական արժեքը նվազում է, սակայն չի նվազում պարտքի անվանական արժեքը, ինչի արդյունքում աճում է պարտքի սպասարկման իրական գինը:

[14] Տե՛ս, օրինակ, Եվրոպայի կենտրոնական բանկի նախագահության իրավասության ներքո գտնվող Wage Dynamics Network-ի կողմից հրապարակված հետազոտությունը:

մալ գնաճը պետք է մի փոքր ավելի բարձր լինի, քան զարգացած արդյունաբերական երկրներում:

Աղյուսակում ցույց են տրվում 2010 թ. սկզբի համար սահմանված գնաճի նպատակային ցուցանիշները: Զարգացած արդյունաբերական երկրներում գնաճի նպատակային ցուցանիշները գտնվում են 1 - 3 տոկոսի միջակայքում: Կորեան 3 տոկոս $\pm$ 0.5 տոկոսային կետ ցուցանիշով գտնվում է նեղ միջակայքի վերին մասում: Որոշ ոչ արդյունաբերական երկրներ նույնպես ունեն այս միջակայքում սահմանված գնաճի նպատակներ. Պերուն և Չեխիայի Հանրապետությունը՝ 2 տոկոս, Լեհաստանը՝ 2.5 տոկոս: Երեք այլ երկրներ՝ Չիլին, Հունգարիան և Մեքսիկան, սահմանել են գնաճի 3 տոկոս նպատակային ցուցանիշ, իսկ Կոլումբիան իր ցուցանիշը սահմանել է 2-4 տոկոսի միջակայքում: Գնաճի նպատակային ցուցանիշները սահմանել են 5 տոկոսից բարձր մակարդակում (բոլորն էլ միանիշ թվային տիրույթում) Գանան, Սերբիան և Թուրքիան, ինչը պայմանավորված է գնաճի նվազեցման ավելի երկար ռազմավարություն ունենալու հանգամանքով:

Աղյուսակ 1. Երկրների գնաճի նպատակային ցուցանիշները

Երկիրը	Նպատակային սահմանվում է ըստ միութային	Նպատակային միավորիչ	2010 թ. նպատակ	Նպատակի մոտեցում	Ժամկետի փոփոխություն	Նպատակի փոփոխության ընթացիկ
Հայաստան	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	4% $\pm$1.5 pp	P + T	Նոր նպատակ 2011 թ. համար	Տասներկու ամիս
Ավստրալիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	2%–3%	Միջակայք	–	Միջին ժամկետ
Բրազիլիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	4.5% $\pm$2 pp	P + T	2010 և 2011 թթ.	Տարեկան նպատակ
Կանադա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	2% միջնակետ	P + T	–	Վեց-ութ եռամսյակ, ներկայիս նպատակը կիրառելի է մինչև 2011 թ. դեկտեմբեր
Չիլի	ԿԲ	Ը ՍԳԻ	3% $\pm$1 pp	P + T	–	Շուրջ երկու տարի
Կոլումբիա	ԿԲ	Ը ՍԳԻ	2%–4%	Միջակայք	Տարեկան նպատակ	Միջին ժամկետ
Չեխիայի Հանրապետություն	ԿԲ	Ը ՍԳԻ	2% $\pm$1 pp	P + T	Նոր նպատակ 2010-ից սկսած	Միջին ժամկետ, 12-18 ամիս
Գանա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	9.2% $\pm$3 pp	P + T	2010 և 2012 թթ. վերջ	18-24 ամիս
Գվատեմալա	ԿԲ	Ը ՍԳԻ	5.0%$\pm$1 pp	P + T	2010 և 2013 թթ.	Մեկ, երկու և հինգ տարի
Հունգարիա	ԿԲ	Ը ՍԳԻ	3%	Կետ	–	Միջին ժամկետ
Իսլանդիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	2.5%	Կետ	–	Միջինը

Ինդոնեզիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	5%±1 pp	P + T	2010 և 2011 թթ. և միջինժամկետ	Միջին ժամկետ
Իսրայել	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	1%–3%	Միջակայք	–	Հաջորդ տասներկու ամիսներին, շարունակաբար
Մեքսիկա	ԿԲ	Ը ՍԳԻ	3%±1 pp	P + T	–	Միջին ժամկետ
Նոր Զելանդիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	1%–3%	Միջակայք	–	Միջին ժամկետ
Նորվեգիա	Կ	Ը ՍԳԻ	2.5%	Կետ	–	Միջին ժամկետ
Պերու	ԿԲ	Ը ՍԳԻ	2%±1 pp	P + T	–	Ամբողջ ժամանակ
Ֆիլիպիններ	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	4.5% ±1 pp	P + T	–	Երկու տարի
Լեհաստան	ԿԲ	Ը ՍԳԻ	2.5% ±1 pp	P + T	–	Միջին ժամկետ
Ռումինիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	3.5% ±1 pp	P + T	2010 և 2011 թթ.	Տարեկան նպատակ երկամյա հորիզոնով
Սերբիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	8% ±2 pp	P + T	2010, 2011 և 2012 թթ.	Միջին ժամկետ
Հարավաֆրիկյան Հանրապետություն	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	3%–6%	Միջակայք	–	Շարունակական
Հարավային Կորեա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	3% ±0.5 pp	P + T	–	Երեք տարի
Շվեդիա	ԿԲ	Ը ՍԳԻ	2% ±1 pp	P + T	–	Սովորաբար երկու տարի
Թաիլանդ	Կ և ԿԲ	Բնա-կանոն ՍԳԻ	0.5%–3%	Միջակայք	Նպատակը սահմանվում է տարեկան կտրվածքով	Ութ եռամսյակ
Թուրքիա	Կ և ԿԲ	Ը ՍԳԻ	6.5%±2 pp	P + T	2010, 2011 և 2012 թթ.	Բազմամյա (երեք տարի)
Միացյալ Թագավորություն	Կ	Ը ՍԳԻ	2%	Կետ	–	Ամբողջ ժամանակ

Ծանուցում.
ԿԲ = կենտրոնական բանկ
Կ = կառավարություն
Ը ՍԳԻ = ընդհանուր ՍԳԻ
P+T = կետ/շեղում թույլատրելի միջակայքից
pp = տոկոսային կետ

Նպատակային հորիզոն

Նպատակային հորիզոնը պայմանավորված է նրանով, թե արդյո՞ք գնաճը գտնվում է գների կայունության միջակայքում: Գնաճի 3 տոկոս կամ ցածր նպատակային ցուցանիշ ունեցող 17 երկրներում նպատակը միտված է ունենալ միջինժամկետ հորիզոն (սա ներառում է երկամյա կամ ավելի նպատակային հորիզոնները, ինչպես նաև «մշտապես» գնահատում ստացած հորիզոնները): Միջինժամկետ նպատակների առավելությունն այն է, որ դրանք տալիս են գնաճի սպասումները խարսխելու, ինչպես նաև նպատակից կարճաժամկետ շեղումների հնարավորություն՝ մասնավորապես այն պարագայում, երբ ցնցումները վնաս են հասցնում տնտեսությանը: Նպատակային հորիզոնը կարող է կախված լինել նաև դրամավարկային քաղաքա-

կանության փոխանցման մեխանիզմի ազդեցության տևողությունից: Փոխանցման մեխանիզմի ավելի երկար տևողության պայմաններում կենտրոնական բանկը չի կարող ներգործություն ունենալ գնաճի վրա կարճաժամկետ հատվածում:

Գնաճի նվազեցման (նպատակադրման) ռազմավարություն իրականացնելու դեպքում գնաճի նպատակային ցուցանիշները հաճախ սահմանվում են տարեկան կտրվածքով: Անցումային տնտեսություններ ունեցող երկրներում քաղաքականության տոկոսադրույքներ – գնաճ փոխանցման ազդեցությունը հաճախ ավելի արագ է, հետևաբար քաղաքականության ավելի կարճ ժամանակային հորիզոնը երաշխավորված է: Ընդ որում, տարեկան կտրվածքով սահմանվող նպատակը հաճախ դիտվում է որպես հաշվետվելիության հարմար ժամանակահատված: Գնաճի նվազեցման ուղին բռնած երկրները գնաճի սպասումները խարսխելու նպատակով հաճախ օգտագործում են նաև միջինժամկետ նպատակ սահմանելու պրակտիկան:

Նպատակային ցուցանիշ

Գնաճի նպատակադրում իրականացնող բոլոր 27 երկրները սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) օգտագործում են որպես իրենց գործող նպատակ, և որպես ցուցանիշ են վերցնում ընդհանուր գնաճը: Նշված երկրների շարքում բացառություն է կազմում Թաիլանդը, որտեղ որպես նպատակային ցուցանիշ ընդունվում է բնականոն գնաճը: Սա հիմնականում պայմանավորված է գործնական և գործառնական պատճառներով. ՍԳԻ-ն հրապարակվում է ամսական պարբերականությամբ, իսկ մյուս ցուցանիշները, որոնք կարող են նախընտրելի լինել տեսական նպատակներով (օրինակ՝ ՀՆԱ դեֆլյատորը), հրապարակվում են եռամսյակային պարբերականությամբ: Եթե բնականոն գնաճի ցուցանիշը պակաս տատանողական է և կարող է ավելի արագ արձագանքել քաղաքականության տոկոսադրույքին, ընդհանուր գնաճի ցուցանիշը կարևոր առավելություն ունի այն առումով, որ հասկանալի է հանրությանը: Կորեան 2000-2007 թթ. ընկած ժամանակահատվածում գնաճի նպատակային ցուցանիշը սահմանելու համար օգտագործել է բնականոն գնաճի ցուցանիշը[15],

[15] 1998-2000 թթ. ընկած ժամանակահատվածում Հր. Կորեան օգտագործել է ընդհանուր ՍԳԻ չափանիշը:

որից հետո վերադարձել է ընդհանուր ՍԳԻ ցուցանիշին: Ավելին, բնականոն գնաճի ցուցանիշը տատանողական բաղադրիչ լինելու պատճառով հաճախ չի ներառում պարենային ապրանքները: Որոշ զարգացող երկրներում պարենային ապրանքախումբը կարող է կազմել ՍԳԻ զամբյուղի շուրջ 40 տոկոսը, և նման բաղադրիչը բացառելը կարող է պարզապես նվազեցնել վարկունակությունը:

Թեև ընդհանուր ՍԳԻ-ն նախընտրելի նպատակային ցուցանիշ է, շատ կենտրոնական բանկեր բնականոն գնաճի ցուցանիշը դիտարկում են որպես տնտեսության մեջ հիմնական գնաճային ճնշումներն արտացոլող ցուցանիշ: Ավստրալիան, Կանադան, Չեխիայի Հանրապետությունը, Գանան, Հունգարիան, Նորվեգիան, Լեհաստանը և Շվեդիան ընդհանուր գնաճի ցուցանիշի հետ միասին հրապարակում են բնականոն գնաճի ցուցանիշի կանխատեսումներ:[16] Վերջին իրադարձությունները, մասնավորապես 2007 թ. նավթի ու պարենային ապրանքների գնային ցնցումները, ցույց են տալիս, թե որքան կարևոր է ճիշտ և պատշաճ մակարդակով մեկնաբանել բնականոն գնաճի ցուցանիշը: Պարենային ապրանքների և կոմունալ ծառայությունների գների աճը հանգեցրել է նրան, որ նվազել է մյուս ապրանքների ու ծառայությունների սպառման համար նախատեսված եկամուտների մակարդակը, ինչն էլ իր հերթին նպաստել է այդ հատվածներում (բնականոն գնաճ) գների աճի զսպմանը: Սակայն սխալ կլինի բնականոն գնաճի ցածր մակարդակները բացատրել լոկ այն հանգամանքով, թե այն արտացոլում է զսպված գնաճը. բնականոն գնաճը պետք է մեկնաբանվի ընդհանրապես տնտեսությունում տեղի ունեցող զարգացումների պայմաններում:

Նպատակային կե՞տ, թե՞ նպատակային միջակայք

Գնաճի կետային նպատակների, այդ թվում՝ տատանումների թույլատրելի միջակայքով կետային նպատակների առավելությունն այն է,

---

(16) Ավստրիալիայի պահուստային բանկը հետևում է բնականոն գնաճի ցուցանիշին, սակայն վերջինիս նախընտրելի ցուցանիշը միջին կրճատված գնաճի ցուցանիշն է, որի դեպքում թեպետ թերագնահատվում է վառելիքի ու պարենային ապրանքների գների զգալի փոփոխությունների ազդեցությունը, այնուամենայնիվ դրանք դուրս չեն մնում հաշվարկից: Չեխիայի Հանրապետությունում բնականոն չափանիշ է համարվում դրամավարկային քաղաքականությամբ պայմանավորված գնաճի ցուցանիշը, այսինքն՝ ընդհանուր գնաճը ճշգրտվում է ըստ անուղղակի հարկերում տեղի ունեցած փոփոխությունների առաջին փուլի ազդեցության:

որ դրանք բավականին ճշգրիտ են և շուկաներին հստակ ազդակներ են հաղորդում կենտրոնական բանկի նպատակի վերաբերյալ: Մեկ այլ առավելություն է այն, որ դրանք սիմետրիկ են, ինչն օգնում է, որպեսզի կենտրոնական բանկը հանրությանը լսելի դարձնի իր այն ցանկությունը, որ գնանկումից հարկ է խուսափել այնպես, ինչպես գնաճից: Սա հատկապես կարևորվել է այն ժամանակներում, երբ առաջացել է գնանկման խնդիր: Կետային նպատակը կարող է նաև ուղղորդել նպատակի միջնաժամկետ բնույթը. ակնհայտորեն անհնար է, որ գնաճը ամսեամիս համապատասխանի կետային նպատակներին: Ի վերջո, կետային նպատակը նախընտրելի տարբերակ է այն պարագայում, երբ գնաճն ավելի տատանողական է, քան տատանումների թույլատրելի միջակայքի սահմանները կարող են թույլ տալ:

Նպատակային միջակայքի դեպքում բավականին հստակ է՝ իրականացե՞լ է արդյոք նպատակը, թե՞ ոչ: Միջակայքերը ենթադրում են, որ կենտրոնական բանկը ճշգրտորեն չի վերահսկում գնաճի նպատակը և կարող է թույլ տալ գնաճի ժամանակավոր տատանումներ: Նմանապես, նպատակի միջակայքը թույլ է տալիս տնտեսական կայունացման որոշակի ազատություն:

Կենտրոնական բանկերի մեծ մասը, հատկապես նրանք, որ վերջերս են անցել գնաճի նպատակադրման ռազմավարության, իրենց ընտրությունը կատարել են՝ ելնելով երկու տարբերակների առավելություններից: 17 կենտրոնական բանկեր գնաճի նպատակ են ընտրել «կետ/շեղում թույլատրելի միջակայքից» չափանիշը, չորսը (Հունգարիան, Իսլանդիան, Նորվեգիան և Միացյալ Թագավորությունը)[17] գործածում են գնաճի պարզ կետային նպատակները, իսկ մնացած վեց երկրները գործածում են գնաճի նպատակի միջակայքը:

Որոշումների կայացումը գնաճի նպատակադրման ժամանակ

Այս հատվածում անդրադառնում ենք գնաճի նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերում որոշումների կայացման գործընթացին: Բանկերի մեծ մասում որոշումներ կայացնող հանձնաժողովը գնաճի նպատակային ցուցանիշի ապահովման նպատակով

[17] Միացյալ Թագավորությունում գործող պահանջի համաձայն՝ երբ գնաճը 1 տոկոսային կետով հեռանում է նպատակային ցուցանիշից, Անգլիայի բանկը պետք է հանդես գա բաց նամակով: Այնուամենայնիվ, սա հաշվետվական մեխանիզմ է և ոչ թե նպատակային միջակայքի կիրառում:

տոկոսադրույքի մակարդակի (կամ քաղաքականության միջոցառումների) վերաբերյալ որոշում կայացնելու համար նիստեր է գումարում նախապես սահմանված ժամանակացույցով: Այնուամենայնիվ, այս մեխանիզմի օգտագործման մոտեցումները բազմազան են:

Որոշումներ կայացնող մարմին

Գնաճի նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերը որոշումներ են կայացնում հանձնաժողովի մակարդակով: Նույնիսկ նշված երկրներից երկուսում (Իսրայել և Նոր Զելանդիա), որտեղ միանձնյա որոշումներ կայացնողը կառավարիչն է, գոյություն ունի փորձագետների միջև խորհրդակցություններ անցկացնելու գործելակարգ: Իսրայելում կենտրոնական բանկի կառավարիչը որոշումը կայացնում է երկու մակարդակով տեղի ունեցած համապատասխան քննարկումների արդյունքում. ընդ որում՝ առաջին մակարդակում քննարկումները լայն ձևաչափով են ընթանում, իսկ երկրորդ մակարդակում՝ ավելի նեղ ձևաչափով: Նոր Զելանդիայում Կանխիկ միջոցների պաշտոնական տոկոսադրույքի խորհրդատվական խումբը (Official Cash Rate Advisory Group) և նման գործառույթ իրականացնող երկու արտաքին անդամներ կատարում են համապատասխան խորհրդատվական աշխատանք: Տասներեք երկրում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումները կայացնում է կենտրոնական բանկի խորհուրդը, տասը երկրում տոկոսադրույքների վերաբերյալ որոշումները կայացնում է Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովը (ԴՔՀ): Առանձին ԴՔՀ ունենալը հիմնավորված է այն փաստարկով, որ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելը սովորաբար լիազորում են դրամավարկային քաղաքականության փորձագետներին: Միացյալ Թագավորությունում օրենքը պահանջում է ԴՔՀ բոլոր անդամներին նշանակել ըստ դրամավարկային քաղաքականության ոլորտում ունեցած փորձառության կամ մասնագիտական որակավորման: Որոշ երկրներում (Հայաստանում, Գանայում և Ֆիլիպիններում) որոշումների կայացման գործընթացը բաժանված է երկու փուլի. ներքին ԴՔՀ-ն կամ տեխնիկական փորձագետներից կազմված Խորհրդատվական հանձնաժողովը իր առաջարկություններն է ներկայացնում խորհրդին, որն էլ պաշտոնապես պատասխանատու է դրամավարկային քաղաքականության որոշումների համար:

Հանձնաժողովի չափը և կազմը

Որոշում կայացնող հանձնաժողովը բաղկացած է միջինը յոթ անդամից, ինչը, ըստ էության, պայմանավորված չէ տնտեսության չափերով: Լեհաստանի հանձնաժողովը, որը բաղկացած է տասն անդամից, ամենամեծն է, իսկ Սերբիայի հանձնաժողովը՝ չորս անդամից, և ամենափոքրն է նշված երկրների մեջ: Խորհրդի կամ դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի կազմի վերաբերյալ հստակ չափորոշիչ կամ օրինակելի մոդել գոյություն չունի: Կան հանձնաժողովներ, որոնք բաղկացած են միայն կենտրոնական բանկի ներքին պաշտոնատարներից և նույնքան կենտրոնական բանկի փորձագետներից՝ գումարած դրսից նշանակված անձինք (Աղյուսակ 2): Մի քանի երկրներում (այդ թվում՝ Կոլումբիայում, Գանայում, Գվատեմալայում և Ֆիլիպիններում) կառավարության անդամը ներկա է որոշումներ կայացնող մարմնի աշխատանքին: Մնացած դեպքերում (Հունգարիա, Ռումինիա, Թուրքիա և Միացյալ Թագավորություն) կառավարության անդամը նիստերին մասնակցում է դիտորդի կարգավիճակով, այսինքն՝ առանց քվեարկելու իրավունքի:

Աղյուսակ 2. Որոշումների կայացման գործընթացը գնածի նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերում

Երկիր	Հանձնաժողովի անդամների միջին թիվը	Հանձնաժողովի անդամների միջին տարիքը	Հանձնաժողովի նիստերի միջին թիվը տարեկան	Որոշումների կայացման հաճախականությունը	Որոշումների ընդունման ձևաչափը	Քվեների հրապարակում
Հայաստան	7	Չկա	12	6	Քվեարկություն	Ոչ
Ավստրալիա	9	6	11	7	Համակարծություն	Տվյալներ չկան
Բրազիլիա	8	Չկա	8	ժամկետը ամրագրված չէ	Քվեարկություն	Քվեների հավասարություն
Կանադա	6	Չկա	8	7	Համակարծություն	Տվյալներ չկան
Չիլի	5	Չկա	12	5	Քվեարկություն	Այո
Կոլումբիա	7	Չկա	12	4	Քվեարկություն	Մեծամասնական / միաձայն
Չեխիա	7	Չկա	8	6	Քվեարկություն	Այո
Գանա	7	2	6	4	Համակարծություն	Տվյալներ չկան
Գվատեմալա	8	7	9	4	Քվեարկություն	Ոչ

Հունգարիա	7	4	12	6	Քվեարկություն	Այո
Իսլանդիա	5	2	8	5	Համակարծություն, հակառակ դեպքում՝ քվեարկություն	Քվեների հավասարություն
Ինդոնեզիա	6-9	Չկա	12	5	Համակարծություն	Տվյալներ չկան
Իսրայել	Կառավարիչ	Տվյալներ չկան	12	5	Կառավարչի որոշմամբ	Տվյալներ չկան
Մեքսիկա	5	Չկա	11	6	Համակարծություն	Տվյալներ չկան
Նոր Զելանդիա	Կառավարիչ	Տվյալներ չկան	8	5	Կառավարչի որոշմամբ	Տվյալներ չկան
Նորվեգիա	7	5	8	6	Համակարծություն	Տվյալներ չկան
Պերու	7	Չկա	12	պառլամենտի ժամկետով	Քվեարկություն	Ոչ
Ֆիլիպիններ	7	Չկա	8	6	Քվեարկություն	Ոչ
Լեհաստան	10	9	12	6	Քվեարկություն	Այո՝ Գնացի հաշվետվությունում
Ռումինիա	9	5	8	5	Քվեարկություն	Ոչ
Սերբիա	4	Չկա	24	5	Քվեարկություն	Ոչ
Հարավային Աֆրիկա	8	Չկա	6	5	Համակարծություն	Տվյալներ չկան
Հարավային Կորեա	7	5	12	5	Քվեարկություն	Ոչ
Շվեդիա	6	Չկա	6	6	Քվեարկություն	Այո
Թաիլանդ	7	4	8	5	Քվեարկություն	Ոչ
Թուրքիա	7	1	12	5	Քվեարկություն	Ոչ
Միացյալ Թագավորություն	9	4	12	5	Քվեարկություն	Այո

Որոշումների կայացման գործընթաց

Գնաճի նպատակադրում իրականացնողների մեծ մասը (26 երկրից 17-ում) դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշում է կայացնում քվեարկության մեծամասնական սկզբունքով և չի կայացնում փոխհամաձայնեցված որոշում:[18] Կառավարչի՝ որպես նախագահողի, քվեն սովորաբար որոշիչ է: Ութ կենտրոնական բանկերում կայացվում է փոխհամաձայնեցված որոշում, իսկ երկու կենտրոնական բանկերում (Իսրայել և Նոր Զելանդիա) կառավարիչը համարվում է միանձնյա որոշում կայացնող (Գծանկարներ 3 և 4):

[18] *Իսլանդիայում հանձնաժողովը ձգտում է ապահովել համակարծություն, սակայն, եթե դա չի հաջողվում, ապա որոշումը դրվում է քվեարկության:*

Որոշումների կայացման պարբերականություն

Որոշում կայացնող գրեթե բոլոր մարմինները տարվա ընթացքում հանդիպում են ութից տասներկու անգամ: Լայն տարածված է ամսական պարբերականությամբ կազմակերպվող նիստերի պրակտիկան, ինչը շատ հարմար է և հիմնականում համընկնում է տվյալների ամսական հրապարակման ժամկետի հետ: Նորմալ պայմաններում վեցշաբաթյա պարբերականությամբ հանդիպումները բավարար են նորությունները և զարգացումները հաշվի առնելու համար: Արտակարգ պայմաններում հանձնաժողովը կարող է ավելի հաճախ նիստեր գումարել: Մեր բերած օրինակում 13 բանկերում նիստերը գումարվում են տարեկան 11-12 անգամ, իսկ 10-ում՝ 8-9 անգամ: Սերբիայում ԴՔՀ նիստեր են գումարվում յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ, իսկ Գանայում, Հարավային Աֆրիկայում և Շվեդիայում՝ տարեկան վեց անգամ:

Մոդելներ և կանխատեսումներ


Դրամավարկային քաղաքականության համար օգտագործվող մոդելներ.

Գնաճի նպատակադրումը պահանջում է ամուր, զարգացած տեխնիկական կարողությունների առկայություն կենտրոնական բանկում, որը հնարավորություն կտա մոդելավորել տնտեսությունը, հասկանալ փոխանցման մեխանիզմը, կանխատեսել գնաճը և տնտեսական աճը: Գնաճի նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերի մեծ մասը գործածում է մոդելների համախումբ կիրառելու մոտեցում (Աղյուսակ 3), այդ թվում՝ վիճակագրական և ընդարձակ աղյուսակային կանխատեսումներ, կառուցվածքային, մակրոտնտեսական և դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (dynamic stochastic general equilibrium, DSGE) մոդելներ: Որոշ մոդելների հիմքում տեսությունն է, մյուսները հիմնված են վիճակագրական տվյալների միջոցով ստացված արդյունքների վրա:

Մոդելների մի մասը հարմարեցվում է կարճաժամկետ կանխատեսումներին, իսկ մյուս մասը՝ ավելի երկարաժամկետ հորիզոնով կանխատեսումներին: Օգտագործելով ամենատարբեր մոդելներ՝ կենտրո-


նական բանկերն իրենց քաղաքականությունը հրապարակելու համար հնարավորություն ունեն օգտվելու ինչպես տեսությունից, այնպես էլ տվյալներից, և իհարկե՝ սեփական գնահատումներից:

Գծանկար 3. Որոշումների կայացման գործընթացը



Աղբյուրը՝ Անգլիայի բանկ և այլ կենտրոնական բանկերի ինտերնետային կայքեր:

Գծանկար 4. Որոշումների կայացման գործընթացը



Աղբյուրը՝ Անգլիայի բանկ և այլ կենտրոնական բանկերի ինտերնետային կայքեր:

Ընդարձակ աղյուսակային կանխատեսումները գործնականում կիրառվում են կարճաժամկետ հատվածում (ընդհուպ մինչև վեց ամիս) ՍԳԻ-ի ամսական կանխատեսումներ կատարելու նպատակով: Նշված կանխատեսումները կարող են ներառել տեղեկություններ պետության կողմից կարգավորվող գների մասին, ինչպես նաև ՍԳԻ-ի առանձին բաղադրիչների փորձագիտական գնահատումներ: Փոքրամասշտաբ տնտեսաչափական այնպիսի մոդելներ, ինչպիսիք վեկտորային ավտոռեգրեսիոն (VARs) և սխալների ուղղման մոդելներն են, օգտագործելով մակրոտնտեսական տվյալներում առկա տեղեկությունները, կատարում են հետագա զարգացումների կանխատեսում: Այս մոդելները հիմնականում կիրառվում են գալիք վեցից մինչև տասներկու ամսվա համար կանխատեսումներ կատարելու համար: Մոդելների օգտակարությունը պայմանավորված է տվյալների որակով. դրանց օգտակարությունը նվազում է, եթե տնտեսությունը նախկինում ենթարկվել է արագ փոփոխության, և այս պարագայում անցյալը պակաս հուսալի ուղեցույց է ապագայի համար:[19]

Փոքր չափի կառուցվածքային մոդելները, որոնց բնորոշ է չորսից վեց հավասարումների կազմը, որոշակի տեսական, ինչպես նաև որոշակի փորձարարական հիմք ունեն և կիրառելի են կանխատեսումների համար: Վերջին տարիներին շատ կենտրոնական բանկեր են իրենց կողմից գործածվող մոդելների շարքը համալրել դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության՝ DSGE մոդելով: Ներկայումս DSGE մոդելը կիրառվում է գնաճ նպատակադրող 20 կենտրոնական բանկերում, իսկ որոշ կենտրոնական բանկերում այն գտնվում է մշակման փուլում: Այս մոդելն ունի կուռ միկրոհիմքեր[20] և մոդելների մեջ առանձնանում է տեսական տրամաբանությամբ ու կապակցվածությամբ: Կարևոր առավելություն է նաև այն, որ այդ մոդելը պարունակում է ապագային միտված վարքագիծ, հատկապես գնաճի սպասումների առումով, որը առանցքային է գնաճի նպատակադրման տեսանկյունից: DSGE մոդելի կառուցումը բարդ գործընթաց է, որը հաճախ պահանջում է ընդլայնել այն հատուկ այդ

---

[19] Տնտեսաչափական տրամաբանությամբ դա նշանակում է, որ տվյալներում կառուցվածքային խզումներ կան:

[20] Միկրոհիմք ունեցող մոդելներում առանձին տնտեսավար սուբյեկտների՝ տնային տնտեսությունների և ձեռնարկությունների վարքագծային միկրոտնտեսական վերլուծություններն օգտագործվում են մակրոտնտեսական տեսությունը հիմնավորելու նպատակով:

նպատակով մշակվող մի շարք բաղադրատարրերի ներգրավմամբ, որպեսզի մոդելի արդյունքները հնարավորինս համապատասխանեն փաստացի տնտեսական զարգացումներին:

Կանխատեսումներ

Գնաճի նպատակադրում իրականացնող բոլոր հաստատությունները հրապարակում են իրենց գնաճի կանխատեսումները սովորաբար եռամսյակային հաճախականությամբ: Ութ երկրների կենտրոնական բանկեր (Ավստրալիա, Կանադա, Գանա, Հունգարիա, Նորվեգիա, Լեհաստան, Ռումինիա և Թաիլանդ) հրապարակում են նաև բնականոն գնաճի կանխատեսումներ: 16 երկիր հրապարակում է ՀՆԱ կանխատեսումներ, իսկ Նորվեգիան և Ռումինիան՝ ՀՆԱ-ի ճեղքվածքի կանխատեսումներ: Որոշ երկրների (Չեխիայի Հանրապետություն, Իսրայել, Նոր Զելանդիա, Նորվեգիա և Շվեդիա) կենտրոնական բանկեր այժմ հրապարակում են քաղաքականության տոկոսադրույքի կանխատեսումները:[21]

Գոյություն (ունեն միմյանցից (տարբերվող մի (շարք հարցադրումներ:(Առաջին. ի՞նչ տեսակի (հաստատուն կամ ոչ հաստատուն) տոկոսադրույք է ավելի հարմար կիրառել կանխատեսման համար: Մյուս հարցադրումն այսպիսին է. արդյո՞ք ժամանակի ընթացքում տոկոսադրույքի փոփոխությունը պետք է հիմնված լինի մոդելի, շուկայական, թե՞ փորձագիտական մոտեցման վրա: Մեկ այլ առանձին հարցադրում վերաբերում է հրապարակայնությանը, որովհետև հարցը, թե որքանով պետք է կենտրոնական բանկը հանրությանը տեղեկություն ներկայացնի իր քաղաքականության հետագա տոկոսադրույքների մասին, էական վիճաբանության տեղիք է տալիս:

Գոյություն ունեցող մի շարք փաստարկներ այն քաղաքականության օգտին են, որի պարագայում կենտրոնական բանկը հրապարակում է տոկոսադրույքների վերաբերյալ մոդելային հիմքի վրա կառուցված սեփական կանխատեսումը: Սա, առաջին հերթին, կարելի է դիտարկել որպես գնաճի նպատակադրման ռազմավարության թա-

[21] *Սկսած 2009 թ. հունվարից՝ Չեխիայի ազգային բանկը հրապարակում է նաև փոխարժեքի կանխատեսումները:*

փանցիկության ավելացում, և ըստ էության նպաստելու է գնաճի սպասումները խարսխելուն: Քանը (2007 թ.) փաստարկել է, որ տոկոսադրույքների վերաբերյալ կենտրոնական բանկի կանխատեսումները հրապարակելը կարող է օգնել, որպեսզի շուկաներն ավելի արդյունավետորեն գնորոշեն ակտիվները, իսկ Սելոնը (2008 թ.) պարզել է, որ Միացյալ Նահանգներում տոկոսադրույքների վերաբերյալ ավելի բացահայտ ուղեցույցներ ապահովելու արդյունքում բարելավվել են մասնավոր հատվածի կանխատեսումները: Ռոզենբերգը (2008 թ.) նկատել է, որ Շվեդիայում դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների վերաբերյալ գործադիր խորհրդի կանխատեսումները հրապարակելու արդյունքում խորհուրդն ավելի է ներգրավվել կանխատեսման գործընթացում:

Նույնքան շատ են նաև այն փաստարկները, որոնք դեմ են տոկոսադրույքների վերաբերյալ կենտրոնական բանկի կանխատեսումների հրապարակմանը: Առաջին. կենտրոնական բանկերի մեծ մասը փաստացի չունի հաղորդակցման եղանակ: Շատ դրամավարկային քաղաքականության հանձնաժողովներ իրենց ժամանակի մեծ մասն ավելի շատ ծախսում են տնտեսական իրավիճակը գնահատելու և վերլուծելու, քան տոկոսադրույքների հետագա ուղին գնահատելու վրա: Գուդհարթը (2001 թ.) համոզիչ փաստարկ է բերել հանձնաժողովի գործունեության պրակտիկ դժվարության վերաբերյալ: Խոսքը, մասնավորապես, անհատականացված մոտեցում ցուցաբերող հանձնաժողովի մասին է, որը պետք է համաձայնության գա տոկոսադրույքների ուղղվածության շուրջ. արդյո՞ք հանձնաժողովի անդամները քվեարկում են յուրաքանչյուր ամսվա համապատասխան որոշման օգտին, և ինչպե՞ս ընդհանրացնել տեսակետները: Քինգը (2007 թ.) առաջ է քաշել այն տեսակետը, թե շուկաներին պետք են ոչ թե քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի կանխատեսումները, այլ տեղեկատվություն՝ տեղի ունեցող իրադարձությունների ու տվյալների նկատմամբ ԴՔՀ-ի համընդհանուր արձագանքի վերաբերյալ: Քանը (2007 թ.) խնդրին նայելով մեկ այլ տեսանկյունից՝ նշել է, որ քաղաքականություն մշակողները, հնարավոր է, կապվածություն զգան հրապարակված կանխատեսման նկատմամբ և դրանով իսկ ավելի քիչ ուզենան փոխել ուղղվածությունը՝ ի պատասխան նոր տեղեկատվության:

Աղյուսակ 3. Մոդելներ և կանխատեսումներ

ԵՐԿԻՐ	Մոդելի տեսակները	Հրապարակվող կանխատեսումները	Տոկոսադրույքի ենթադրություն	Ում է պատկանում կանխատեսումը
Հայաստան	Միջինժամկետ կանխատեսման մոդել: Դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության DSGE մոդելը կկիրառվի զուգահեռ՝ գումարած ECM և VAR մոդելները	Գնաճի և ՀՆԱ-ի կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկ	Հաստատուն	Կենտրոնական բանկ
Ավստրալիա	DSGE մոդել՝ գումարած փոքր մոդելներ և միանդամ հավասարումներ	ՀՆԱ, գնաճ և բնականոն գնաճ	Ոչ հաստատուն եղանակ – մասնագետների ենթադրություն	Կենտրոնական բանկ
Բրազիլիա	VAR, փոքր և միջին չափի մակրոմոդելներ, DSGE	Գնաճի և ՀՆԱ-ի՝ կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկ	Հաստատուն և շուկայական	ԴՔՀ
Կանադա	DSGE մոդելների շարք՝ գումարած մակրոմոդելներ	ՀՆԱ, գնաճ և բնականոն գնաճ	Ներծին	Կառավարող խորհուրդ
Չիլի	Եռամսյակային մակրոտնտեսական մոդել, ժամանակային շարքեր և DSGE	ՀՆԱ և ՍԳԻ	Համահունչ նպատակին	Խորհուրդ
Կոլումբիա	Վիճակագրական կանխատեսման մոդելներ՝ կառուցվածքային և սիմուլյացիոն նպատակներով	Գնաճի՝ կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկ և ՀՆԱ-ի կանխատեսման տիրույթ	Քաղաքականությամբ ընդունված նորմ	Մասնագիտական աշխատակազմ
Չեխիա	DSGE մակրոմոդել	Գնաճ, բնականոն գնաճ, ՀՆԱ, տոկոսադրույք և փոխարժեք	Ներծին	Կենտրոնական բանկ
Գանա	AR, ECM (մակրո և աստիճանակարգված մոդելները մշակման փուլում են)	Ընդհանուր և բնականոն գնաճ և ՀՆԱ	Չի հրապարակվում	ԴՔՀ
Գվատեմալա	ARIMA, հարթեցնող մոդել և կիսակառուցվածքային մակրոմոդել	Գնաճ	Ոչ հաստատուն եղանակ	Մասնագիտական աշխատակազմ
Հունգարիա	Ժամանակային շարքեր, փորձագիտական, մակրո և DSGE մոդելներ	ՍԳԻ, բնականոն գնաճ և աշխատանքի շուկա	Հաստատուն	Մասնագիտական աշխատակազմ
Իսլանդիա	VAR, կառուցվածքային մակրոմոդելներ (DSGE մոդելը մշակման փուլում է)	Գնաճ	Ընդհանրացված՝ մակրոմոդելից	Մասնագիտական աշխատակազմ
Ինդոնեզիա	DSGE, մակրո և ARIMA մոդելներ	Գնաճ, ՀՆԱ և ՀՆԱ-ի բաղադրատարրեր	Սցենարներ և կանխատեսվող գնաճ	Խորհուրդ
Իսրայել	Մոդելների շարք	ՀՆԱ, գնաճ և քաղաքականության հիմնական տոկոսադրույք	Քաղաքականության հեռահար արձագանքի գործառույթ - ներծին	Մասնագիտական աշխատակազմ

Մեքսիկա	DSGE մոդել, ECM	Գնաճ, ՀՆԱ և զբաղվածություն	Ներծին	Մասնագիտա-կան աշխատակազմ
Նոր Զելանդիա	DSGE-ն հիմնական կանխատեսման մոդելն է	ՀՆԱ-ի, գնաճի և տոկոսադրույքի կանխատեսումներ	Ներծին	ԴՔՀ
Նորվեգիա	DSGE մոդելներ և մոդելների շարք ներկա շրջանի կանխատեսումների համար	Քաղաքականության հիմնական տոկո-սադրույք, տնտեսա-կան աճի ճեղքվածք և բնականոն գնաճ	Ներծին	Կառավարիչ
Պերու	Կիսակառուցվածքային, DSGE, VAR մոդելներ	Գնաճ, ՀՆԱ, Վճարային հաշվեկշիռ և ՀՆԱ-ն առևտրային գործընկեր երկրներում	Թեյլորի կանոն	Կենտրոնական բանկ
Ֆիլիպիններ	Մեկ հավասարումով, բազմաթիվ հավասարումներով (մակրո և DSGE մոդելները մշակման փուլում են)	Գնաճ	Հաստատուն	Կենտրոնական բանկ
Լեհաստան	Մակրոտնտեսական մոդելների շարք, որոնցից հիմնականը կառուցվածքային մակրոմոդել է, իսկ DSGE մոդելը մշակման փուլում է	Գնաճ և բնականոն գնաճ, ՀՆԱ և ՀՆԱ-ի բաղադրատարրեր	Հաստատուն	Մասնագիտակա ն աշխատակազմ
Ռումինիա	Գնահատում, աստիճանակարգում, մակրո, կիսակառուցվածքային մոդելներ	Գնաճ, բնականոն գնաճ և ՀՆԱ-ի ճեղքվածք	Մոդելային հենքով դրամավարկային քաղաքականության արձագանքման գործառույթ	Խորհուրդ
Սերբիա	Եռամսյակային կանխատեսման մոդել	Գնաճ	Ներծին	ԴՔՀ
Հարավային Աֆրիկա	Հիմնական մակրոկանխատեսում՝ գումարած մոդելների շարք	Գնաճ	Հաստատուն	ԴՔՀ
Հարավային Կորեա	Դինամիկ կանխատեսման մոդել, DSGE մոդել	Գնաճ և ՀՆԱ	Շուկայական	Կենտրոնական բանկ
Շվեդիա	Ժամանակային շարքերի մոդել, ցուցանիշային մոդելներ, կառուցվածքային մոդելներ (օրինակ՝ DSGE)	ՀՆԱ, ՍԳԻ, բնականոն գնաճ և ռեպո տոկոսադրույք	Ներծին	Խորհուրդ
Թաիլանդ	Մոդելների շարք (DSGE մոդելը մշակման փուլում է)	Բնականոն գնաճ և ՀՆԱ	Հաստատուն	ԴՔՀ
Թուրքիա	Եռամսյակային կանխատեսման մոդել (DSGE մոդելը մշակման փուլում է)	Գնաճ, տնտեսական աճի ճեղքվածք	Ներծին	ԴՔՀ
Միացյալ Թագավորություն	Վիճակագրական և տեսական մոդելներ: DSGE-ն հիմնական կանխատեսման մոդելն է	Գնաճ և ՀՆԱ	Շուկայական դրույքներ	ԴՔՀ

Որոշ կենտրոնական բանկերի համար քաղաքականության տոկո-սադրույքի կանխատեսումը հրապարակելուն դեմ խոսող հիմնական փաստարկներն ավելի շուտ հաղորդակցման ռազմավարության խնդիր է, այլ ոչ՝ տեխնիկական: Այստեղ իրական հարցադրումն այս-պիսին է. արդյո՞ք շուկաները և, առանձնապես, լայն հասարակայնու-

թյունը կըմբռնի տոկոսադրույքի կանխատեսման պայմանական բնույթը, հատկապես այն դեպքում, երբ կենտրոնական բանկն ինքն է սահմանում այդ տոկոսադրույքը: Մեկ այլ փաստարկի համաձայն՝ քաղաքականության տոկոսադրույքի կանխատեսումը հրապարակելու գործելակարգը կարող է կանխատեսումների և տոկոսադրույքների ուղղությունների հարթությունում բանավեճերի տեղիք տալ և հեռանալ գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար կենտրոնական բանկի կողմից տրվող հիմնական ուղերձից:

Քննարկենք, թե ում է պատկանում գնաճի կանխատեսման հարցադրումը: Որքան ավելի հստակ է նշմարվում կանխատեսման աշխատանքի հետ քաղաքականություն մշակողի առնչությունը, այնքան ավելի ուղղակիորեն է ընկալվում քաղաքականության վրա վերջինիս ունեցած ազդեցությունը: Ընդհանրապես, գնաճի նպատակադրում իրականացնող կենտրոնական բանկերում որոշում կայացնողները բավականին լայնորեն են ներգրավված կանխատեսման աշխատանքում. տասնչորս դեպքում կանխատեսումը կատարում է խորհուրդը կամ դրամավարկային քաղաքականության հանձնաժողովը,[22] վեց դեպքում՝ կենտրոնական բանկը և յոթ դեպքում՝ մասնագիտական աշխատակազմը:

Հաշվետվելիություն և թափանցիկություն

Հաշվետվելիության մեխանիզմներ

Գրականության մեջ հաճախ են արծարծվում կենտրոնական բանկի անկախության և հաշվետվելիության կապին վերաբերող թեմաներ: Գնաճի նպատակադրում իրականացնող երկրների առանձին համակարգեր, որոնք հաճախ ակտիվորեն հավասարակշռում են այս երկուսը և ենթադրում մանրամասն ու առաջադեմ այնպիսի մեխանիզմների առկայություն, որոնց պարագայում կենտրոնական բանկը հաշվետու է իր դրամավարկային քաղաքականության ընթացքի վերաբերյալ: Միացյալ Թագավորության դեպքում Թաքերը (2007 թ.) հանգամանալից անդրադարձել է 1990-ականների սկզբին անհրաժեշտություն դարձած բարեփոխումներին, որոնք վերաբերում են Անգլիայի

[22] *Այս շարքին է դասվում Նորվեգիան, որի կենտրոնական բանկի կառավարիչը կանխատեսման հիմնական պատասխանատուն է:*

բանկի անկախության ու հաշվետվելիության խնդրին: Այդ խնդիրը կարևորվել էր հատկապես այդ ժամանակ հնչեղություն ստացած տեսակետից հետո, ըստ որի «Անկախության ճանապարհին իրական խոչընդոտ էր դիտվում այն հանգամանքը, որ (Անգլիայի) Բանկը հնարավորություն չի ունենա իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության համար հաշվետու լինել Բրիտանական պառլամենտի Համայնքների պալատին: Ժողովրդավարության խորհրդարանական համակարգի պայմաններում հաշվետու պետք է լինեն նախարարները»: Նման աշխատանք է տարել Ռեդելը (2006 թ.)՝ Նոր Զելանդիայի պահուստային բանկի համար բացահայտելով ինչպես կանոնադրության հիմունքով, այնպես էլ փաստացի գործող մոնիթորինգային համակարգի հանգամանքները: Օրենսդրությամբ՝ քաղաքականության նպատակի համաձայնագրի ներքո հստակ իրավունքներ և պարտավորություններ են սահմանված Բանկի կառավարչի, Ֆինանսների նախարարի և Տնօրենների խորհրդի համար: Խորհրդի գործառույթների մեջ են մտնում դրամավարկային քաղաքականության իրականացման համար պաշտոնապես հաշվետու կառավարչի իրավունքների և պարտավորությունների կատարման մոնիթորինգը:[23]


Գնաճի նպատակադրման ռեժիմներում գործում են խորհրդարանին հաշվետվություն ներկայացնելու հատուկ ձևեր, այսպես կոչված բաց նամակներ և խորհրդարանական լսումներ: Բաց նամակները սովորաբար բանկի կառավարչի կողմից ԴՔՀ-ի անունից գրված նամակներն են, որոնք կառավարություն են ներկայացվում այն դեպքում, երբ փաստացի գնաճը չի համապատասխանում նպատակային ցուցանիշին: Նման դեպքում կենտրոնական բանկից սովորաբար պահանջվում է բացատրել, թե ինչու է գնաճը շեղվել նպատակային ցուցանիշից, ինչ գործողություններ է վերջինս ձեռնարկել գնաճը ցանկալի մակարդակ վերադարձնելու համար և որքան ժամանակում: Բաց նամակը համարվում է հրապարակայնության և հաշվետվելիության գործընթացի մի մաս, և ոչ թե կենտրոնական բանկին հանդիմանելու մղում: Այս մեխանիզմը Անգլիայի բանկ է ներմուծվել 1997 թվականին, որից հետո բաց նամակ գրելու պահանջը պետք է սկսեր գոր-

---

[23] Ռեդելը պարզաբանում է, որ «Օրենքը բանկի կառավարչին թույլ չի տալիս պարզապես պաշտոնաթող լինել քաղաքականության նպատակների իրագործումը ձախողելու համար: Օրենքում սահմանված չափանիշները ուղղակիորեն մատնանշում են թե՛ Բանկի, թե՛ դրա կառավարչի՝ նշված նպատակների իրագործման կատարողականը»:

ծել, եթե գնաճը նպատակային ցուցանիշից շեղվեր 1 տոկոսային կետով՝ երկու ուղղություններով: Ակնկալվում էր, որ ելնելով նախկինում գնաճի դրսևորած տատանողականությունից, բաց նամակի ձևաչափին դիմելու էին շուրջ 40 տոկոս դեպքերում (Բեն, 1998 թ.): Այդ օրերին, այնուամենայնիվ, գնաճի տատանողականությունը զգալիորեն նվազել էր, և միայն 10 տարի անց՝ 2007-ի ապրիլին, անհրաժեշտություն է առաջացել գրելու առաջին բաց նամակը: Մեր բերած օրինակում ութ կենտրոնական բանկեր իրենց հաշվետվական մեխանիզմներում օգտագործում են բաց նամակի ձևաչափը (գծանկար 5):

Գծանկար 5. Հաշվետվելիության մեխանիզմներ



Աղբյուրը՝ Անգլիայի բանկ և այլ կենտրոնական բանկերի ինտերնետային կայքեր:

Հաշվետվական մեկ այլ կարևոր մեխանիզմ է խորհրդարանական լսումները: Այս դեպքում կենտրոնական բանկը ելույթ է ունենում խորհրդարանում՝ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հայտարարություն անելու նպատակով: Բոլոր զարգացած արդյունաբերական երկրները, անցումային տնտեսություն ունեցող երկրների և զարգացող երկրների միայն կեսը իրենց գնաճի նպատակադրման մեխանիզմներում գործածում են խորհրդարանական լսումների որոշակի ձևաչափ (գծանկար 5):

Բաց նամակները և խորհրդարանական լսումները խորհրդարանին հաշվետու լինելու հիմնական ձևերն են: Գոյություն ունեն հաշվետվա-

կան այլ մեխանիզմներ ևս, որոնց դեպքում բանկի կառավարիչը կամ դրամավարկային քաղաքականության հանձնաժողովը հաշվետու են կենտրոնական բանկի խորհրդին, իսկ կենտրոնական բանկը, ի վերջո, հաշվետու է հանրությանը: Հանրային հաշվետվությունը սովորաբար իրականացվում է հրապարակումների և հրապարակայնության ընդգրկուն ռազմավարության միջոցով:

Աղյուսակ 4. Հաշվետվելիություն և թափանցիկություն

ԵՐԿԻՐ	Բաց ճամարկ	Խորհրդա-ժողովական լսումներ	Նամուլի ծանուցում/ ասուլիս	Արձանագրու-թյուն	Քվեարկություն	Գնաճի հաշվետվություն	Համախա-կանություն
Հայաստան	Ոչ	Տարին մեկ անգամ	ՄՀ	10 օրվա ընթացքում	Ոչ	Այո	4
Ավստրալիա	Ոչ	Տարին երկու անգամ	Ծանուցում	2 շաբաթ հետո	Տվյալ չկա	Այո	4
Բրազիլիա	Այո	Տարին վեց անգամ	ՄԱ ԳՀ-ի մասին	8 օր հետո	Հավասար քվեներ	Այո	4
Կանադա	Ոչ	Տարին երկու անգամ	ՄՀ, ՄԱ ԳՀ-ի մասին	Ոչ	Տվյալ չկա	Այո	4
Չիլի	Ոչ	Տարին չորս անգամ	ՄՀ	Այո, 2 շաբաթ հետո	Քվեներ	Այո	4
Կոլումբիա	Ոչ	Տարին երկու անգամ	ՄՀ, ՄԱ ԳՀ-ի մասին	2 շաբաթ հետո	Մեծամասնական կամ միանձնյա	Այո	4
Չեխիա	Ոչ	Ոչ (հաշվետվութ.)	ՄՀ, ՄՆ ԳՀ-ի մասին	8 օր հետո	Այո	Այո	4
Գանա	Ոչ	Ոչ	ՄՀ + ՄԱ	Ոչ	Տվյալ չկա	Այո	4-6
Գվատեմալա	Ոչ	Տարին երկու անգամ	ՄՀ + ՄԱ	4 շաբաթ հետո	Ոչ	Այո	3
Հունգարիա	Ոչ	Տարին մեկ անգամ	ՄԱ	Այո	Այո	Այո	4
Իսլանդիա	Այո	Տարին երկու անգամ	ՄՀ + ՄԱ	Այո	Հավասար քվեներ	Այո	2+2
Ինդոնեզիա	Ոչ	Ոչ	ՄՀ	Ոչ	Տվյալ չկա	Այո	4
Իսրայել	Այո	Այո	ՄՀ	2 շաբաթ հետո	Տվյալ չկա	Այո	4
Մեքսիկա	Ոչ	Ոչ կանոնավոր	ՄՀ	Ոչ	Տվյալ չկա	Այո	4
Նոր Զելանդիա	Այլ	Տարին չորս անգամ	ՄՀ, ՄԱ ԳՀ-ի մասին	Ոչ	Տվյալ չկա	Այո	4
Նորվեգիա	Ոչ	Այո	ՄՀ + ՄԱ	Ոչ	Ոչ	Այո	3
Պերու	Ոչ	Տարին մեկ անգամ	Հեռակոնֆե-րանս	Ոչ	Ոչ	Այո	4
Ֆիլիպիններ	Այո	Ոչ	ՄՀ + ՄԱ	4 շաբաթ հետո	Այո, ԳՀ	Այո	4
Լեհաստան	Ոչ	Ոչ(*)	ՄՀ + ՄԱ	3 շաբաթ հետո	Ոչ	Այո	4
Ռումինիա	Ոչ	Ոչ	ՄՀ, ՄԱ ԳՀ-ի մասին	Ոչ	Ոչ	Այո	4

Սերբիա	Այո	Ոչ	ՄՀ + ՄԱ	Ոչ	Ոչ	Այո	4
Հարավային Աֆրիկա	Ոչ	Տարին առնվազն երեք անգամ	ՄՀ + ՄԱ	Ոչ	Տվյալ չկա	Այո	2
Հարավային Կորեա	Ոչ	Այո	ՄՀ + ՄԱ	6 շաբաթ հետո	Ոչ	Այո	2
Շվեդիա	Ոչ	Տարին երկու անգամ	ՄՀ	2 շաբաթ հետո	Այո	Այո	3+3
Թաիլանդ	Այո	Ոչ	ՄՀ + ՄԱ	Ոչ	Ոչ	Այո	4
Թուրքիա	Այո	Տարին երկու անգամ	ՄՀ	Այո	Ոչ	Այո	4
Միացյալ Թագավորություն	Այո	Տարին երեք անգամ	ՄՀ, ՄԱ ԳՀ-ի մասին	2 շաբաթ հետո	Այո	Այո	4

Ծանուցում.

ԳՀ = գնաճի հաշվետվություն

ՄԱ = մամուլի ասուլիս

ՄՀ = մամուլի հաղորդագրություն

(*) = կառավարիչը նախորդող տարվա դրամավարկային քաղաքականության վերաբերյալ տարին մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Ստորին պալատին:

Հրապարակումներ և հրապարակայնություն

«Գնաճի նպատակադրումը որոշումներ կայացնելու և դրանք հանրությանը ներկայացնելու մեխանիզմ է :» (Քինգ, 2005 թ.):

Գնաճի նպատակադրման մեխանիզմ ներդնելու մտադրություն ունեցող բանկերի համար առանցքային նախապայման է հրապարակայնության ռազմավարություն ունենալը: Հասարակության հետ կապը գնաճի նպատակադրման ռազմավարության անբաժան մասն է: 1990-ականներից կենտրոնական բանկերը դարձել են ավելի թափանցիկ՝ շնորհիվ բաց քաղաքականության, որը եկավ ցրելու դրամավարկային քաղաքականության շուրջ սփռված խորհրդավորությունը: Այս առումով գնաճ նպատակադրողները ամենաթափանցիկն են (Գերաց, 2009 թ.): Դինսերը և Այխենգրինը (2007 թ.) պարզել են, որ իրենց ուսումնասիրած 100 կենտրոնական բանկերից ամենաթափանցիկներն էին Նոր Զելանդիայի պահուստային բանկը, Շվեդիայի բանկը, Անգլիայի բանկը, Չեխիայի ազգային բանկը, Կանադայի բանկը, Եվրոպայի կենտրոնական բանկը և Ֆիլիպինների կենտրոնական բանկը:

Հրապարակայնության առումով՝ կենտրոնական բանկերի միջև որոշակի նմանություն է նկատվում: Մեծ թվով կենտրոնական բանկեր են հանրությանը ներկայացնում դրամավարկային քաղաքականու-


թյան վերաբերյալ իրենց մոտեցումները և նպատակները: Նրանց մեծ մասը հրապարակում է տնտեսական վիճակին վերաբերող վերլուծություններ, այդ թվում՝ տնտեսական աճի և գնաճի կանխատեսումներ, ինչպես նաև գնահատում է այդ կանխատեսումները, հիմնական ռիսկերը: Մեծ թվով կենտրոնական բանկեր պարզաբանումներ են տալիս իրենց քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման հիմքերի առնչությամբ: Հանրության հետ կապի ռազմավարության հիմնական տարբերությունները կայանում են այն հարցադրման մեջ, թե որքան տեղեկություն է հանրությունը ստանում որոշում կայացնողների շրջանում առկա տարակարծության մասին և որքան ուղղակի կամ անուղղակի տեղեկություն է հատկացվում քաղաքականության հետագա ուղղվածության մասին (տե՛ս կանխատեսումների հատվածը, որն անդրադառնում է քաղաքականության տոկոսադրույքի կանխատեսումը հրապարակելու խնդրին):

Գնաճի նպատակադրում իրականացնողների համար հանրության հետ կապի ապահովման հիմնական մեխանիզմը գնաճի հաշվետվությունն է: Բոլոր 27 երկրները հրապարակում են նման հաշվետվություն, ընդ որում, մեծամասնությունը՝ եռամսյակային պարբերականությամբ (աղյուսակ 4): Գնաճի հաշվետվությունը սովորաբար իրենից ներկայացնում է տնտեսական վիճակի մասին կենտրոնական բանկի գնահատականը, ինչպես նաև գնաճի ու տնտեսական աճի հեռանկարների, այդ թվում՝ այս և այլ փոփոխականների վերաբերյալ կանխատեսումները: Գնաճի հաշվետվությունում հաճախ ներառվում են նաև կանխատեսումների նկատմամբ վերընթաց և վայրընթաց շարժվող հիմնական ռիսկերը, ինչպես նաև այլընտրանքային սցենարներ (հրապարակվող կանխատեսումների համար տե՛ս Աղյուսակ Գ): Գնաճի հաշվետվություն մյուս հիմնական նպատակն է՝ պարզաբանել դրամավարկային քաղաքականության իրականացման հետ կապված վերջին որոշումների հիմնավորվածությունը:

Մեկ այլ կարևոր հրապարակում է քաղաքականություն իրականացնողների նիստի արձանագրությունը: Գնաճ նպատակադրող տասնվեց հաստատություններ հրապարակում են այս արձանագրությունը սովորաբար երկուսից-չորս շաբաթ անց, թեև Բրազիլիայի կենտրոնական բանկը և Չեխիայի ազգային բանկը արձանագրությունները հրապարակում են նիստի անցկացումից ութ օր անց: Ինչպես ցույց է տրվում գծանկար 6-ում՝ զարգացած արդյունաբերական երկրների մեծ մասը հրապարակում են նիստի արձանագրու-

թյուններ[24] այն դեպքում, երբ այս գործելակարգն ավելի հավասարաչափ է բաշխված զարգացող երկրների շրջանում:

Գծանկար 6. Թափանցիկություն



Աղբյուրը՝ Անգլիայի բանկ և այլ կենտրոնական բանկերի ինտերնետային կայքեր:

Գնած նպատակադրող հաստատությունները Եվրոպայում անհատական գործելաոճ ունեցողներն են. տոկոսադրույքի վերաբերյալ քվեարկությամբ որոշում կայացնող 17 կենտրոնական բանկերից վեցը հրապարակում են անհատական քվեները: Այդ երկրներն են՝ Չիլին, Չեխիայի Հանրապետությունը, Հունգարիան, Լեհաստանը, Շվեդիան[25] և Միացյալ Թագավորությունը: Բրազիլիան և Իսլանդիան հրապարակում են քվեների հաշվեկշիռը, իսկ Կոլումբիան տեղեկացնում է, թե որոշումը կայացվել է միաձա՞յն, թե՞ ձայների մեծամասնությամբ:

---

[24] Նոր Զելանդիայում, որտեղ որոշումները կայացնում է բանկի կառավարիչը, արծանագրությունների հրապարակումը, որպես այդպիսին, իմաստազրկվում է: Ավստրալիայում արտաքին անդամներից հինգը գործարար համայնքի ներկայացուցիչներ են, և գրանցված քվեների հրապարակումը կարող է նրանց ճնշումների ենթարկել այդ հատվածի կողմից:

[25] Ոչ թե արծանագրությունում, այլ գնածի հաշվետվությունում:

Անհատական քվեները հրապարակելու պատճառներից մեկն այն է, որ այս գործողությունը շուկաներին ավելի շատ տեղեկություններ է հաղորդում քաղաքականություն մշակողների տեսակետների մասին: Անգլիայի բանկում անհատական քվեների հրապարակումը համահունչ է նաև ԴՔՀ անդամների կողմից իրականացվող անհատական հաշվետվելիության սկզբունքին: Քվեների համակշռության հրապարակումն այլընտրանքային մոտեցում է, որի դեպքում հանձնաժողովի առնչությամբ ձևավորված տեսակետների մասին տեղեկատվությունը հաղորդվում է առանց քվեարկողների ինքնությունը բացահայտելու: Անհատական քվեները չհրապարակելու փաստարկներից մեկն այն է, որ այս դեպքում անդամները իրենց դիրքորոշումը փոխելու ավելի մեծ հնարավորություն են ստանում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քվեների վերաբերյալ մանրամասները ընդգրկում են շուկայի տեսանկյունից գաղտնիք պարունակող տվյալներ, դրանք պետք է հրապարակվեն ոչ թե նիստի արձանագրության հրապարակումից հետո, այլ տոկոսադրույքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելուց հետո:

Գնաճի նպատակադրում իրականացնող բոլոր հաստատությունները դրամավարկային քաղաքականության իրականացման հետ կապված որոշման (սովորաբար՝ տոկոսադրույքի մասին) մանրամասները հրապարակում են քաղաքականության նիստի անցկացումից անմիջապես հետո. սովորաբար միաժամանակ հրապարակվում է նաև մամուլի հաղորդագրությունը կամ ծանուցումը (աղյուսակ 4): Բացի այդ, գնաճ նպատակադրող 19 հաստատություններ անցկացնում են մամուլի ասուլիս, որի ընթացքում պարզաբանումներ են տրվում ընդունված որոշման կամ գնաճի հաշվետվության հրապարակման հետ կապված հարցերի շուրջ:

Գնաճի նպատակադրման մարտահրավերներ

Գնաճի նպատակադրման պրակտիկան գոյություն ունի շուրջ քսան տարի: Այս ընթացքում ի հայտ են եկել տարբեր մեխանիզմներ, ինչպես և առաջացել են նորանոր տնտեսական տեսություններ ու միակարծիք տեսակետներ դրամավարկային քաղաքականության նպատակների վերաբերյալ: Գնաճի նպատակադրման ռեժիմի ներդրումը մի շարք երկրներում համընկել է «անշեղ կայունություն»

(,,great stability'') կոչված ժամանակաշրջանի հետ: Սա մի ժամանակաշրջան էր, երբ սպառողական գների աճը չափավոր էր, իսկ գնաճի և տնտեսական աճի տատանողականությունը՝ թույլ: 2008 թ. համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի ուժգնացմամբ գնաճ նպատակադրողները (և, անշուշտ, դրամավարկային քաղաքականություն իրականացնողները) կանգնեցին նոր ու աննախադեպ մարտահրավերների առջև:

Գնաճի նպատակադրում և ակտիվների գներ

Եթե 90-ականներին և 2000 թ. սկզբին գնաճի նպատակադրման ռազմավարությունը հիմնականում հանգեցրել է ցածր և կայուն սպառողական գների, ակտիվների գները, այդուհանդերձ, ավելի տատանողական էին: Այդ պայմաններում նոր հնչողություն էին ստանում որոշ տնտեսություններում փողի և վարկային շուկաների աճի հետ կապված մտահոգությունները: Այս համատեքստում կենտրոնական բանկերին տարիներ շարունակ մտահոգում էր այն կարևոր խնդիրը, թե արդյո՞ք նրանք պետք է հաշվի առնեն ակտիվների գները դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս, և եթե այո՝ ապա ինչպե՞ս[(26)] (տե՛ս, օրինակ, Բորիո և Ուայթ (2004 թ.)): Այն հարցին, թե ինչպես պետք է գնաճ նպատակադրող հաստատություններն արձագանքեն ակտիվների գներին, Բենը (2003 թ.) նշել է. «գնաճը և տնտեսական աճը բավականին երկարաժամկետ հորիզոնում կայունացնելու ձգտում ունեցող կենտրոնական բանկը պարտավոր է հաշվի առնել ակտիվների գնային փուչիկներից բխող հնարավոր բացասական երկարաժամկետ հետևանքները»: Սրանից հետևում է, որ կենտրոնական բանկը պետք է դրամավարկային քաղաքականության որոշումների համար վերցնի ավելի երկարաժամկետ հորիզոն՝ թերևս մեկ կամ երկու տարվա հորիզոնից ավելի:

---

(26) Տարիներ շարունակ որոշ կենտրոնական բանկեր, օրինակ՝ Ավստրալիայի պահուստային բանկը, սատարել են այն կարծիքին, թե կենտրոնական բանկերը պետք է հավուր պատշաճի ուշադրություն դարձնեն ակտիվների գների խնդրին՝ գիտակցելով, թե ինչ տեղեկատվություն կարող են դրանք պարունակել քաղաքականության դիրքորոշման և հավանական ռիսկերի առնչությամբ: Լեհաստանի ազգային բանկի կողմից քողարկված 2010 թ. Դրամավարկային քաղաքականության ուղեցույցը ավելի հստակ է նկարագրում ակտիվների գները տոկոսադրույք սահմանելու գործընթացքում:

Գնաճի նպատակադրման առանձնահատկությունը

2007 թվականից ի վեր գնաճի տատանողականության ավելացումը ծնունդ է տվել բանավեճի՝ թե որն է գնաճի ամենալավ նպատակային չափանիշը: Եղել են այնպիսի փաստարկումներ, որոնք առաջարկել են նպատակային ցուցանիշում ուղղակիորեն ներառել ակտիվների գները և, հատկապես, անշարժ գույքի (տան) գները: Փաստարկների մյուս խումբը եղել է հօգուտ «ներքին միջավայրում ձևավորվող գնաճի» նպատակադրման պրակտիկայի, որը թույլ է տալիս զերծ մնալ ներմուծված գնաճի կտրուկ տատանումներից: Գնանկման մտավախությունը շատերին ստիպել է առաջարկել նպատակային ցուցանիշի մակարդակի բարձրացում՝ զրոյական միջակայքում գտնվելուց խուսափելու նպատակով: Մյուսները կանգնելով այն փաստի առաջ, որ գնաճը կարճաժամկետ հատվածում նպատակային ցուցանիշից ներքև է, առաջարկել են նպատակային ցուցանիշի միջինժամկետ նպատակ, որպեսզի հնարավոր լինի խարսխել սպասումները: Փաստարկողների մի մասը նշում է, որ դա ավելի նպատակահարմար է, և որ գների նպատակային մակարդակն ավելի ուժեղ խարիսխ կարող է լինել գնաճի դրական սպասումների համար: Մյուս կողմից մտահոգություն կա, որ գնաճի նպատակը կարող է պակաս արդյունավետ լինել առևտրի պայմանների տևական ցնցումներին դիմակայելու տեսանկյունից:

Գնաճի նպատակադրում զրոյական միջակայքում

Տոկոսադրույքները համարվում են դրամավարկային քաղաքականության ավանդական գործիք: 2009 թ. որոշ կենտրոնական բանկեր տոկոսադրույքներն իջեցրել էին համարյա մինչև զրոյական մակարդակի: Տոկոսադրույքները սովորաբար բացասական մեծություն չեն կարող լինել, այնպես որ, եթե դրամավարկային քաղաքականության հետագա մեղմացումը դառնա անհրաժեշտություն, ապա կենտրոնական բանկը ստիպված կլինի գործադրել ոչ ավանդական դրամավարկային քաղաքականություն: Այս դեպքում ձեռնարկվող միջոցառումներից է տնտեսությունում փողի քանակության կամ վարկային ռեսուրսների ավելացումը, ինչը խթանում է անվանական ծախսումները և նպաստում գնաճի նպատակի իրագործմանը: Կենտրոնական

բանկը պետական և մասնավոր հատվածի ակտիվները ձեռք է բերում կենտրոնական բանկի միջոցներով:

Ակնհայտ է, որ գնաճի նպատակադրման ռազմավարությունը բավարար չափով ճկուն է նման քաղաքականություններ իրականացնելու համար: Անգլիայի բանկը ակտիվների ձեռքբերման ծրագիրը սկսել է 2009 թ. մարտին, իսկ Կանադայի բանկը իր դրամավարկային հաշվետվության 2009 թ. ապրիլյան թողարկմամբ արդեն հայտարարել է գնաճի նպատակադրման ռազմավարության մեջ ոչ ավանդական դրամավարկային քաղաքականություն սկսելու սեփական ծրագիրը, որի իրականացման նպատակով պայմանական որոշում է կայացրել մինչև 2010 թ. երկրորդ եռամսյակը քաղաքականության տոկոսադրույքը պահպանել արդյունավետ միջակայքի ստորին սահմանում: Գնաճի նպատակադրման ռեժիմի պայմաններում դրամավարկային քաղաքականության որոշումները հստակորեն կապված են գնաճի նպատակային ցուցանիշի հետ: Գնաճի կանխատեսված մակարդակը հիմք է ծառայում անհրաժեշտ ընդլայնման չափը, կամ, օրինակ, քաղաքականության խստացման համապատասխան ժամկետը որոշելու համար: Նպատակային ցուցանիշի մակարդակն իր հերթին ուժեղ խարիսխ է գնաճի սպասումների համար: Հատկանշական է, որ Միացյալ Նահանգներում ծավալային ընդլայնմանը զուգահեռ, նախկինից առավել հստակ ձևակերպվել է գնաճը որպես նպատակ:[27]

[27] *Բերնանկեն 2009 թ. ապրիլյան զեկույցում պարզաբանում է. «Բաց շուկայական գործառնությունների դաշնային հանձնաժողովի անդամների մեծ մասը տնտեսության վերջին եռամսյակային կանխատեսումներում նշել է, որ իրենք կուզենային ավելի երկարաժամկետ հատվածում գնաճի տարեկան ցուցանիշը տեսնել շուրջ 2 տոկոս մակարդակում»:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերջին քսան տարում գնաճի նպատակադրումը հաջողությամբ գործարկվել է մի շարք երկրներում: Այս ձեռնարկն անդրադառնում է 27 երկրներում գործադրվող համանման ռազմավարությունների հիմնական առանձնահատկություններին՝ համարելով, որ նշված երկրները գնաճի լիարժեք նպատակադրում իրականացնողներ են: Գնաճ նպատակադրողների միջև շատ ընդհանրություններ կան, այնուամենայնիվ, առանձին համակարգերում կան առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են տնտեսական, քաղաքական և մշակութային առանձնահատկություններով: Մինչև օրս գնաճի նպատակադրումը համարվում է ճկուն ռազմավարություն, որը հարմարվում է փոփոխվող միջավայրին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Առանձին երկրների ռազմավարություններ

Հայաստան

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (ՀՀ ԿԲ)
1.2	Իրավական ակտ	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունությունն ապահովելն է
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2006 թ. հունվար
1.5	Նպատակը սահմանող մարմինը	ՀՀ ԿԲ-ն Կառավարության հետ համատեղ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	4%±1.5 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Տասներկու ամիս
1.9	Հիմնական տոկոսադրույքը	Մեկշաբաթյա ռեպո տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	ՀՀ ԿԲ խորհուրդը, որի կազմում են՝ նախագահը, նախագահի տեղակալը, հինգ խորհրդի անդամներ
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Նախագահը նշանակվում է Ազգային Ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով, նախագահի տեղակալին նշանակում է ՀՀ նախագահը՝ վեց տարի ժամկետով, հինգ խորհրդի անդամներին նշանակում է ՀՀ նախագահը՝ հինգ տարի ժամկետով՝ տեղափոխման ժամանակացույցով
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Կանխատեսող խումբը՝ ներառյալ դրամավարկային քաղաքականության համար պատասխանատու խորհրդի անդամը, իր առաջարկությունները ներկայացնում է Խորհուրդ: Խորհուրդը որոշումը կայացնում է ձայների մեծամասնությամբ: Նախագահի ձայնը որոշիչ է

2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կիրառվում են եռամսյակային կանխատեսումների մոդելը (ԵԿՄ), վարքագծային հավասարման վրա կառուցված մոդելներ և ECM ու VAR մոդելները: Կիրառության մեջ կմտնի նաև Դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (dynamic stochastic general equilibrium, DSGE) միկրոմոդելը
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ԳՆաճի և ՀՆԱ-ի կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկ
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Անփոփոխ տոկոսադրույքներ
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	ՀՀ ԿԲ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Տարին մեկ անգամ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն
5.3	Արձանագրության հրապարակում	Որոշումը ընդունելուց հետո տասնօրյա ժամկետում
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Դրամավարկային քաղաքականության ծրագիր և Գնաճի եռամսյակային հաշվետվություն

Ավստրալիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Ավստրալիայի պահուստային բանկ (ԱՊԲ)
1.2	Իրավական ակտ	Ավստրալիայի պահուստային բանկի 1959 թ. Ակտի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված է. «…այնպես անել, որ դրամավարկային և բանկային քաղաքականության իրականացմամբ լավագույնս երաշխավորվի. ա) արժույթի կայունացումը, բ) լրիվ զբաղվածության պահպանումը, և գ) Ավստրալիայի ժողովրդի տնտեսական բարեկեցությունը և բարօրությունը»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1993 թ. հունիս
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կառավարությունը և Կենտրոնական բանկը
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	Սկզբում կիրառվել է հիմնական գնաճի ցուցանիշը, 1998 թվից՝ ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	Տարեկան նպատակը՝ միջինը 2–3 տոկոսային կետ տնտեսական պարբերաշրջանի արդյունքում
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ հատված
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Փողի հաշվարկային տոկոսադրույք (ֆինանսական միջնորդների միջև օվերնայթ վարկերի շրջանառությունը)
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Պահուստային բանկի խորհուրդը, որի կազմում են ինն անդամ. երեքը՝ ի պաշտոնե, կառավարիչը (խորհրդի նախագահ), կառավարչի տեղակալը, Գանձապետարանի քարտուղարը և վեց արտաքին անդամներ
2.2	Արտաքին անդամների առկայություն	Վեց արտաքին անդամներին նշանակում է Գանձապետը
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Կառավարիչը և Կառավարչի տեղակալը նշանակվում են Խորհրդի գլխավոր կառավարչի կողմից՝ մինչև յոթ տարի ժամկետով և կարող են վերանշանակվել: Նրանց պաշտոնավարումը կարող է դադարեցվել միայն խորհրդարանի որևէ պալատի հավանությամբ՝ խորհրդարանի նիստի ժամանակ: Վեց արտաքին անդամները նշանակվում են մինչև հինգ տարի ժամկետով և կարող են վերանշանակվել

2.4	Որոշումների կայացման գործընթացը	Սահմանված է Ակտով: Որոշումը կայացվում է ձայների մեծամասնությամբ: Նախագահողի ձայնը որոշիչ է: Խորհուրդը սովորաբար համակարծիք է նրան և պաշտոնական քվեարկության անհրաժեշտություն չի լինում
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Սովորաբար տարին տասնմեկ անգամ (բացառությամբ հունվարի)
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կանխատեսումների ժամանակ կիրառվում է Դատողությունների և մոդելների համադրման մոտեցումը (DSGE մոդել՝ գումարած փոքր այլ մոդելներ և միակողմանի հավասարումներ)
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ՀՆԱ-ի, գնաճի և հիմնական գնաճի կանխատեսումները հրապարակվում են տարին չորս անգամ
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ոչ հաստատուն եղանակ: Ենթադրությունը կատարվում են աշխատակազմի մասնագետները
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	ԱՊԲ (կանխատեսումները համարվում են ԱՊԲ-ի և ոչ թե Խորհրդի փաստաթղթեր)
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Կառավարիչը և ավագ ղեկավարության ներկայացուցիչները տարին երկու անգամ ելույթ են ունենում Տնտեսության հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի առջև
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Հաղորդագրություն լրատվամիջոցներով
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ծանուցում
5.3	Արձանագրության հրապարակում	Յուրաքանչյուր նիստի ավարտից երկու շաբաթ անց
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հայտարարություն
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Բրազիլիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Բրազիլիայի կենտրոնական բանկ
1.2	Իրավական ակտ	1999 թ. հունիսի 21-ի թիվ 3088 հրամանագրով պաշտոնապես սահմանվեց Բրազիլիայում գնաճի նպատակադրման ռազմավարությունը
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1999 թ. հունիս
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Ազգային դրամավարկային խորհուրդը (Խորհրդի կազմում են ֆինանսների նախարարը, Բրազիլիայի կենտրոնական բանկի կառավարիչը և Պլանավորման, բյուջեի և կառավարման նախարարը)
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	Ազգային ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	2010 և 2011 թթ. համար սահմանվել է 4.5%±2 տոկոսային կետ: 2012 թ. նպատակը կսահմանվի 2010 թ. հունիսին
1.8	Նպատակային հորիզոնը	Տարեկան նպատակ
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	SELIC, օվերնայթ տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովը, որի կազմում գործում են կենտրոնական բանկի տնօրենների խորհուրդը՝ կառավարիչը և կառավարչի տեղակալը, ովքեր պատասխանատու են դրամավարկային քաղաքականության համար, և տնտեսական քաղաքականության, միջազգային հարաբերությունների, ֆինանսական համակարգի կարգավորման և կազմակերպման, վերահսկողության, բանկերի լուծարման, մասնավորեցման ու վարչակազմի համար պատասխանատու տնօրենները
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Կենտրոնական բանկի կառավարիչը և կառավարչի մյուս տեղակալները նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից՝ նախքան Սենատի հավանությունը ստանալը: Կառավարչի և կառավարչի տեղակալի նշանակման ամրագրված ժամկետ չի գործում

2.4	Որոշումների կայացման գործընթացը	Անդամները քվեարկում են վերջնական առաջարկության հիման վրա՝ փոխհամաձայնություն ձևավորելու նպատակով: Կառավարչի ձայնը որոշիչ է
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ութ նիստ տարվա ընթացքում
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	VAR, Bayesian VAR, VECM, FAVAR, փոքր և միջին չափի մակրոմոդելներ և DSGE մոդել
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի և ՀՆԱ-ի կանխատեսման հավանականության գրաֆիկները հրապարակվում են եռամսյակը մեկ անգամ
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ուղենշային սցենար՝ հաստատուն տոկոսադրույքների օգտագործմամբ, ինչպես նաև շուկայի սցենար՝ ակնկալվող շուկայական տոկոսադրույքի օգտագործմամբ
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Գնաճի նպատակի չիրագործման դեպքում Կառավարիչը պարտավոր է բաց նամակ գրել Ֆինանսների նախարարին՝ ներկայացնելով պատճառները և գնաճի ցուցանիշը թույլատրելի միջակայք վերադարձնելուն ուղղված միջոցառումները, նման միջոցառումների իրականացման ակնկալվող ժամանակային սահմանները
4.2	Խորհրդարանական լսումներ	Տարին վեց անգամ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Այո
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Միայն Գնաճի հաշվետվությունը հրապարակելուց հետո
5.3	Արձանագրության հրապարակում	Յուրաքանչյուր նիստի ավարտից ութ օր անց
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Քվեների հավասարակշռություն
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Կանադա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Կանադայի բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Կանադայի բանկի մասին Ակտի՝ հիմնական նպատակը «Կանադայում տնտեսական և ֆինանսական բարօրությանը նպաստելն է»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1991 թ. փետրվար
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կանադայի բանկը և Կանադայի կառավարությունը
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ: Բնականոն գնաճը գործածվում է որպես գործառնական ուղեցույց: Նպատակը սահմանվում է ընդհանուր ՍԳԻ-ում փոփոխության տեմպով՝ 12-ամսյա կտրվածքով
1.7	Ընթացիկ նպատակը	2%՝ 1%–3% միջակայքի միջնակետ
1.8	Նպատակային հորիզոնը	Ընթացիկ նպատակային ցուցանիշը գործելու է մինչև 2011 թ. դեկտեմբեր
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Օվերնայթ տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Կառավարող խորհուրդը, որի կազմում են՝ կառավարիչը, կառավարչի առաջին տեղակալը և չորս տեղակալներ
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Կառավարիչը և կառավարչի առաջին տեղակալը նշանակվում են Բանկի տնօրենների խորհրդի կողմից (Կանադայի կառավարության հավանությամբ)՝ յոթ տարի ժամկետով
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Համակարծության միջոցով
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին ութ անգամ
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	TOTEM-ը (Բաց տնտեսությունների դինամիկ հավանականությունների ընդհանուր հավասարակշռության մոդել) կիրառվում է որպես կանադական տնտեսության հիմնական կանխատեսման մոդել, MUSE-ն ԱՄՆ տնտեսության կանխատեսման հիմնական մոդելն է,

		BoC-GEM-ը (Կանադայի բանկի համընդգրկուն տնտեսական մոդել) դինամիկ հավանականութունների ընդհանուր հավասարակշռության մոդելն է, որը կիրառվում է հիմնական երկրների կամ տնտեսական տարածաշրջանների վրա համընդգրկուն ցնցումների ներգործությունը գնահատելու, ինչպես նաև Կանադայի վրա վերջիններիս ազդեցությունները գնահատելու համար, BoC-GEM-Fin-ը BoC-GEM-ի տարբերակ է, որը ներառում է ֆինանսական տարամիտումները և բանկային հատվածը, Համընդգրկուն կանխատեսման մոդելն օգտագործվում է աշխարհի տնտեսական զարգացումները կանխատեսելու համար
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Ընդհանուր և բնականոն գնաճի, ինչպես նաև ՀՆԱ-ի կանխատեսման հավանականության գրաֆիկներ
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ներծին: Գնաճի նպատակի իրագործման ճանապարհին պահանջվում է քաղաքականության տոկոսադրույքի սահմանման եղանակը
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Կառավարող խորհուրդ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Բանկի տարեկան հաշվետվությունը Խորհրդարան է ներկայացվում նախարարի կողմից, իսկ հաշվետվության օրինակը տպագրվում է «Քանադա Գըզեթ» պարբերականում: Բանկի կառավարիչը/կառավարչի առաջին տեղակալը խորհրդարանի կամ Սենատի առջև հանդես են գալիս տարին երկու անգամ՝ Դրամավարկային քաղաքականության զեկույցի հրապարակումից հետո
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Այո
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն՝ տարին ութ անգամ: Մամուլի ասուլիսը տեղի է ունենում տարին չորս անգամ, Դրամավարկային քաղաքականության զեկույցի հրապարակումից հետո
5.3	Արծանագրության հրապարակում	Ոչ
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Տվյալներ չկան
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության զեկույց
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Չիլի

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Չիլիի կենտրոնական բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Չիլիի գործող Սահմանադրության 12-րդ գլխի 97-րդ հոդվածի՝ Կենտրոնական բանկի իրավական պատասխանատվությունն է՝ «ապահովել ազգային արժույթի արժեքի կայունությունը, ինչպես նաև ներքին ու արտաքին վճարումների բնականոն ընթացքը»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1999 թ. սեպտեմբեր
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Չիլիի կենտրոնական բանկ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	Տարեկան ՍԳԻ (ընդհանուր)
1.7	Ընթացիկ նպատակը	2007 թ. սկսած՝ 3±1 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Շուրջ երկու տարի
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույք՝ միջբանկային օվերնայթ տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Չիլիի կենտրոնական բանկի խորհուրդ, որի կազմում են հինգ անդամ՝ կառավարիչը, կառավարչի տեղակալը և մյուս երեք տեղակալները
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Նշանակումները կատարում է երկրի նախագահը, իսկ Սենատը՝ հաստատում: Նշանակումները կատարվում են յուրաքանչյուր երկու տարին մեկ, և պաշտոնավարումը տևում է տասը տարի: Անդամները կարող են վերանշանակվել և պաշտոնավարել նույն այդ ժամանակահատվածով: Խորհրդի անդամներից Կառավարիչ նշանակում է երկրի նախագահը՝ հինգ տարի ժամկետով կամ խորհրդի անդամի համար սահմանված ժամկետի չօգտագործված մասով: Խորհուրդն իր անդամներից ընտրում է

		փոխկառավարչին
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով: Կառավարչի ձայնը որոշիչ է
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Մակրոտնտեսական եռամսյակային մոդել, DSGE մոդել և ժամանակային շարքեր
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ՀՆԱ և ՍԳԻ՝ որոշակի ընդմիջումներով
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի ուղին պետք է համահունչ լինի նպատակային ցուցանիշին: Հանրության հետ կապի արդյունքում ճշտվում է, թե որքանով է այդ ուղին հարթ մասնավոր հատվածի ակնկալիքների ֆոնին
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Կենտրոնական բանկի խորհուրդ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Տարին չորս անգամ: Մեկ անգամ՝ Սենատի ամբողջ կազմով, երեք անգամ՝ ֆինանսական հարցերով զբաղվող հանձնաժողովի շրջանակում
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն
5.3	Արձանագրության հրապարակում	Նիստի ավարտից երկու շաբաթ անց
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Այո
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության զեկույց
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Կոլումբիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Կոլումբիայի Հանրապետության բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Կոլումբիայի Հանրապետության ազգային Սահմանադրության 1-ին ենթագլխի 373-րդ հոդվածի և 1992 թ. օրենքի 2-րդ հոդվածի՝ Կենտրոնական բանկի իրավական պատասխանատվությունն է՝ «ապահովել արժույթի գնողունակության պահպանմանն ուղղված երկրի նպատակի իրագործումը»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1999 թ. հոկտեմբեր
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Տնօրենների խորհուրդ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ.՝ 2%՝ 4% և 3% միջակայքի միջնակետ
1.8	Նպատակային հորիզոնը	Օրենքով սահմանված տարեկան նպատակ: Կենտրոնական բանկը հայտարարել է 2-4 % երկարաժամկետ նպատակային միջակայք: Գնաճի վրա քաղաքականության տոկոսադրույքների առավելագույն ներգործությունը գնահատված է 18 ամիս
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Միջամտության տոկոսադրույք (կիրառվում են նաև այլ գործիքներ)
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Տնօրենների խորհուրդ, որի կազմում են յոթ անդամ՝ ֆինանսների նախարարը, Բանկի կառավարիչը և հինգ համատնօրենները
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Լրիվ դրույքով գործող անդամները և կառավարիչը նշանակվում են չորս տարի ամրագրված պաշտոնավարման ժամկետով: Պաշտոնավարման ժամկետը կարելի է երկու անգամ երկարացնել: Երկրի նախագահը լրիվ դրույքով գործող երկու անդամների տեղափոխում է յուրաքանչյուր չորս տարին մեկ

2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով՝ մեկ անձը մեկ ձայն սկզբունքով
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Բանկը տարբեր ոլորտների համար օգտագործում է մոդելների լայն լրակազմ (վիճակագրական և կանխատեսումային, կառուցվածքային և սիմուլյացիոն)
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի և ՀՆԱ-ի կանխատեսման հավանականության գրաֆիկները և ՀՆԱ-ի կանխատեսումները հրապարակվում են Գնաճի հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Քաղաքականության նորմատիվ
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Աշխատակազմի մասնագետները
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Խորհուրդը տարին երկու անգամ Կոլումբիայի կոնգրեսին զեկուցում է տնտեսության գործերի և հեռանկարների վերաբերյալ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Գնաճի եռամսյակային հաշվետվության հրապարակումից երկու շաբաթ անց Բանկի կառավարիչը ելույթ է ունենում ազգային հեռուստատեսությամբ և ուղիղ եթերում պատասխանում է հանրության հարցերին
5.3	Արձանագրության հրապարակում	Նիստի ավարտից երկու շաբաթ անց
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Ցույց է տալիս ձայների մեծամասնությամբ կամ միաձնյա կարգով որոշում կայացնելու գործընթացը
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Չեխիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Չեխիայի ազգային բանկ
1.2	Իրավական ակտ	Չեխիայի ազգային բանկի մասին 1992 թ. դեկտեմբերին ընդունված օրենքով նշվում է, որ Ազգային բանկի հիմնական նպատակը «… գների կայունությունը պահպանելն է: Առանց հիմնական նպատակից շեղվելու՝ ՉԱԲ-ը կոչված է աջակցելու Կառավարության կողմից իրականացվող հիմնական տնտեսական քաղաքականություններին, որոնք ուղղորդված են կայուն տնտեսական աճին»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1997 թ. դեկտեմբեր
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Չեխիայի ազգային բանկ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ (2002-ից)
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ. սկսած՝ 2% ±1 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ հորիզոն՝ 12-18 ամիս
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Երկշաբաթյա տոկոսադրույք: Զեղչադրույք: Լոմբարդային դրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	ՉԱԲ-ի Տնօրենների խորհուրդ, որի կազմում կա յոթ անդամ՝ Բանկի կառավարիչը, երկու փոխկառավարիչները և չորս Գլխավոր գործադիր տնօրենները
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Անդամները նշանակվում են վեց տարի պաշտոնավարման ժամկետով և չեն կարող նույն պաշտոնը վարել երկու անգամից ավելի: Անդամներին նշանակում և ազատում է Հանրապետության Նախագահը:
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկություն՝ մեծամասնական համակարգով: Նախագահողի ձայնը որոշիչ է
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին ութ անգամ

3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Միջինժամկետ կանխատեսման մոդելը հիմնված է DSGE մակրոմոդելի վրա, կիրառվում է նաև G3 սկզբունքը
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի, ՀՆԱ-ի, տոկոսադրույքների, փոխարժեքների, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության իրականացումից բխող գնաճի կանխատեսման հավանականության գրաֆիկներ (ընդհանուր գնաճը ճշգրտվում է անուղղակի հարկերում տեղի ունեցող փոփոխությունների առաջին պարբերաշրջանի ազդեցությունները գնահատելու նպատակով)
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ներծին
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Չեխիայի ազգային բանկ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Չեխիայի ազգային բանկն առնվազն տարին երկու անգամ Խորհրդարանի պատգամավորների պալատին հաշվետվություն է ներկայացնում դրամավարկային քաղաքականության զարգացումների վերաբերյալ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ասուլիս
5.3	Արձանագրության հրապարակում	Նիստի ավարտից ութ օր անց
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չայների հավասարակշռությունը հայտարարվում է մամուլի ասուլիսում: Անհատական ձայները հրապարակվում են արձանագրության մեջ
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Գանա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Գանայի բանկ
1.2	Իրավական ակտ	Գանայի բանկի մասին 2002 թ. ընդունված օրենք, որտեղ ասվում է. «Բանկի հիմնական նպատակը գների ընդհանուր մակարդակի կայունությունը պահպանելն է: Առանց այս հիմնական նպատակից շեղվելու՝ Բանկը կոչված է աջակցելու Կառավարության կողմից իրականացվող հիմնական տնտեսական քաղաքականությանը, ինչպես նաև նպաստելու երկրի տնտեսական աճին ու բանկային և վարկային համակարգերի համար արդյունավետ ու սահուն գործառնական միջավայրի ապահովմանը՝ անկախ Կառավարության կամ որևէ այլ իշխանական մեխանիզմի հրահանգների»:
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2002 թ., պաշտոնապես՝ 2007 թ. մայիսին
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կառավարություն և Կենտրոնական բանկ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանո՞ւր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	9.2%±3 տոկոսային կետ: Մինչև 2012 թ.՝ 5%±3 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	18-24 ամիս
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Բազիսային տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Օրենքի համաձայն՝ առաջարկությունները նախաձեռնվում են Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի (ԴՔՀ) կողմից, իսկ Տնօրենների խորհուրդը պաշտոնապես պատասխանատու է դրամավարկային քաղաքականության որոշումների համար: Գործնականում, դրամավարկային քաղաքականության վերաբերյալ ԴՔՀ կողմից կայացված որոշումները երբեք չեղյալ չեն համարվել Խորհրդի կողմից:

		Խորհրդի կազմում ընդգրկված են տասներկու անդամ՝ Բանկի կառավարիչը՝ որպես նախագահող, Կառավարչի առաջին և երկրորդ տեղակալները և ինը տնօրեններ: Ինը տնօրեններից մեկը Ֆինանսների և տնտեսական պլանավորման նախարարության ներկայացուցիչն է: Նիստերին մասնակցում է նաև Բանկի քարտուղարը: ԴՔՀ-ն բաղկացած է յոթ անդամից՝ Կառավարչից, երկու տեղակալներից, դրամավարկային քաղաքականության վերլուծության և բանկային վարչության պետերից և երկու արտաքին անդամներից:
2.2	Արտաքին անդամների առկայություն	Երկու արտաքին անդամներին նշանակում է Ֆինանսների և տնտեսական պլանավորման նախարարությունը
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Կառավարչին և կառավարչի տեղակալներին նշանակում է երկրի Նախագահը՝ Պետական Խորհրդի հետ խորհրդակցությամբ: Այս պաշտոնյաների պաշտոնավարման ժամկետը չորս տարի է, և նրանք կարող են վերանշանակվել: Խորհրդի անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով և իրավունք ունեն վերանշանակվել
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Փոխհամաձայնության միջոցով
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին վեց անգամ
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Ավտոռեգրեսիվ կանխատեսման մոդել, սխալների ուղղման կանխատեսման մոդել. մակրոտնտեսաչափական մոդելը և աստիճանակարգման մակրոտնտեսական մոդելը մշակման փուլում են
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Ընդհանուր և բնականոն գնաճի և ՀՆԱ-ի կանխատեսման գրաֆիկները հրապարակվում են դրամավարկային քաղաքականության հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Չի հրապարակվում
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Չկան: Երկրի խորհրդարանը կարող է օրենքի համաձայն հրավիրել Բանկի կառավարչին

5.	Հաղորդակցում և հրապարակումներ	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ասուլիս
5.3	Արձանագրության հրապարակում	Վիճակագրական ամփոփագրերը հրապարակվում են յուրաքանչյուր դրամավարկային քաղաքականության նիստից հետո
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Ոչ
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն
5.6	Հաճախականություն	Տարվա մեջ չորսից վեց անգամ, դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի յուրաքանչյուր նիստից հետո

Գվատեմալա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Գվատեմալայի բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Գվատեմալայի բանկի մասին նոր գլխավոր օրենքի՝ Կենտրոնական բանկի քաղաքականության հիմնական նպատակը գների կայունությանը նպաստելն է:
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1991 թ-ից Բանկը հայտարարում է գնաճի նպատակները: 1995 թ-ից Բանկը հայտարարում է գնաճի տիրույթները: 2000 թ-ից Բանկի դրամավարկային քաղաքականությունը սկսել է զարգանալ գնաճի նպատակադրման ռազմավարությամբ: 2005 թ-ից Բանկը դրամավարկային քաղաքականության իրականացման համար որդեգրել է գնաճի նպատակադրման ռազմավարությունը:
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Դրամավարկային խորհուրդ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ. դեկտեմբեր՝ 5%±1 տոկոսային կետ: 2013 թ. դեկտեմբեր՝ 4%±1 տոկոսային կետ:
1.8	Նպատակային հորիզոնը	Մեկ, երկու և հինգ տարի ժամանակային հորիզոններ
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Առանցքային՝ ուղղորդող տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային խորհուրդ: Ներկայումս Խորհրդի կազմում կա ութ անդամ՝ Բանկի կառավարիչը, Ֆինանսների նախարարը, Գյուղատնտեսության նախարարը, մեկ անդամի նշանակում է Ազգային համալսարանը, մեկ անդամի՝ Առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության պալատը և մեկ անդամի՝ Գվատեմալայի բանկային ասոցիացիան: Գվատեմալայի բանկի գլխավոր կառավարիչը և Բանկերի գլխավոր տնօրենը Դրամավարկային խորհրդի մշտական խորհրդատուներ են, սակայն նրանք չունեն քվեարկելու իրավունք: Մյուս մշտական խորհրդատուներն են՝ Տնտեսագիտական հարցերով կառավարիչը, Ֆինանսական հարցերով կառավարիչը, Իրավական հարցերով կառավարիչը և Տնտեսական ուսումնասիրությունների վարչության տնօրենը

2.2	Արտաքին անդամների առկայություն	Ութ անդամներից յոթը արտաքին են: Կառավարիչը Դրամավարկային խորհրդում միակ ներքին անդամն է:
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Կառավարչին նշանակում է Հանրապետության Նախագահը՝ չորս տարի պաշտոնավարման ժամկետով
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Դրամավարկային խորհուրդը՝ մեկշաբաթյա պարբերականությամբ
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կիրառվում է մոդելների շարք, որը ներառում է ARIMA-ն, ցուցչային հարթեցման մոդելը և կիսակառուցվածքային մակրոմոդելը
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Կիսակառուցվածքային մակրոմոդելի հիման վրա կատարվող գնաճի կանխատեսումներն օգտագործվում են տոկոսադրույքի կոնկրետ (ոչ մշտական) ենթադրությունը կառուցելու համար
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Չի հրապարակվում
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Բանկի մասնագիտական աշխատակազմ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Կառավարիչը պարտավոր է տարին երկու անգամ ելույթ ունենալ Երկրի Կոնգրեսում՝ ներկայացնելով դրամավարկային քաղաքականության իրականացման և քաղաքականության նպատակների իրագործման ընթացքը
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Կառավարիչը մամուլի ասուլիս է հրավիրում որոշումը կայացնելուց անմիջապես հետո
5.3	Արձանագրության հրապարակում	Ներկայացված փաստարկն ամփոփ վիճակով տեղադրվում է Բանկի կայքէջում՝ Դրամավարկային խորհրդի յուրաքանչյուր նիստի ավարտից մեկ ամիս անց
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Ոչ
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն
5.6	Հաճախականություն	Տարին երեք անգամ

Հունգարիա

1.	**Գնածի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Հունգարիայի կենտրոնական բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Հունգարիայի կենտրոնական բանկի մասին ընդունված օրենքի՝ ՀԿԲ-ի հիմնական նպատակն է՝ «…հասնել և պահպանել գների կայունություն»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2001 թ. հունիս
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կենտրոնական բանկ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	2007 թ-ից՝ 3% տարեկան
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Կենտրոնական բանկի երկշաբաթյա պարտատոմսի տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային խորհուրդ: Խորհրդի կազմում կա նվազագույնը հինգ անդամ (ներկայումս՝ ինն անդամ, որոնցից երկուսի լիազորությունը դադարում է 2010-ին)՝ կառավարիչ, կառավարչի երկու տեղակալներ և արտաքին անդամներ: Նիստին մասնակցում է նաև Կառավարության ներկայացուցիչը, որը քվեարկության իրավունք չունի
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չորսն են (2010 թվականից սկսած)
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Վեց տարի
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Մեծամասնական համակարգով: Ձայների հավասարության դեպքում Կառավարչի ձայնը որոշիչ է
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամիսը մեկ անգամ

3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կարճաժամկետ կանխատեսումներ կատարելու համար կիրառվում են սովորական ժամանակային շարքեր, իսկ ավելի երկարաժամկետ կանխատեսումների համար՝ մակրոտնտեսաչափական և DSGE մոդելներ
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Ընդհանուր ՍԳԻ-ի, բնականոն գնաճի, ՀՆԱ և աշխատանքի շուկայի ցուցանիշների կանխատեսումները հրապարակվում են գնաճի եռամսյակային հաշվետվությունում: Գնաճի և ՀՆԱ ցուցանիշներն ընդգրկող հավանականությունների բաշխման գրաֆիկները հրապարակվում են գնաճի եռամսյակային հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Քաղաքականությունը ենթակա չէ փոփոխության
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Բանկի մասնագիտական աշխատակազմ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Հունգարիայի կենտրոնական բանկի կառավարիչը յուրաքանչյուր տարի հաշվետվությամբ ելույթ է ունենում Խորհրդարանում
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Ժամը 14:00-ին՝ մամուլի հաղորդագրության տեսքով, տոկոսադրույքը սահմանող նիստի ավարտին
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Տոկոսադրույքը սահմանող հերթական նիստի ավարտից հետո
5.3	Արձանագրության հրապարակում	Արձանագրությունը՝ ոչ ամփոփված, կրճատված տեսքով, հրապարակվում է միևչև հաջորդ տոկոսադրույքի սահմանման նիստը
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Անհատական ձայներ
5.5	Գնաճի հաշվետվություն	Գնաճի եռամսյակային հաշվետվություն
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Իսլանդիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Իսլանդիայի կենտրոնական բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Իսլանդիայի կենտրոնական բանկի մասին ընդունված թիվ 36/2001 օրենքի, որը փոփոխությունների է ենթարկվել 2009 թ. փետրվարին, Բանկի հիմնական նպատակը գների կայունությունն է: Բանկի պարտավորությունն է՝ նպաստել Կառավարության հիմնական տնտեսական քաղաքականության նպատակների իրագործմանը, եթե դա չի վտանգում Բանկի հիմնական նպատակի իրագործմանը
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2001 թ. մարտ
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Բանկը նպատակը սահմանում է Վարչապետի համաձայնությամբ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	12-ամսյա աճ ընդհանուր ՍԳԻ-ի ցուցանիշում
1.7	Ընթացիկ նպատակը	2.5%
1.8	Նպատակային հորիզոնը	Միջին հորիզոն
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	7-օրյա գրավադրված վարկերի տոկոսադրույք, ընթացիկ հաշվի դեպոզիտային տոկոսադրույք և Կենտրոնական բանկի 28-օրյա ավանդային հավաստագրի տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից՝ կառավարչից, փոխկառավարչից, գլխավոր տնտեսագետից և երկու արտաքին անդամներից
2.2	Արտաքին անդամների առկայություն	Երկու արտաքին անդամներ
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Կառավարիչը և փոխկառավարիչը նշանակվում են հինգ տարի ժամկետով՝ պաշտոնավարման երկրորդ ժամկետի նշանակման հնարավորությամբ: Երկու արտաքին անդամները նույնպես նշանակվում են հինգ տարի ժամկետով:
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Հնարավորության դեպքում՝ համաձայնությամբ, մյուս դեպքերում Կառավարիչը անդամներին հրավիրում է քվեարկության: Ձայների հավասարության դեպքում Կառավարչի ձայնը որոշիչ է:
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին առնվազն ութ անգամ

3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կանխատեսման հիմնական մոդելը եռամսյակային մակրոտնտեսական մոդելն է, որը հիմնականում փորձարարական (էմպիրիկ) գնահատման, սխալների շտկման մոդել է, միաժամանակ հնարավորություն է տալիս կառուցելու հեռահար սպասումներ: Բանկը կիրառում է նաև նորքեյնսյան տեսակի փոքր կառուցվածքային մոդել, իսկ միջին չափի DSGE մոդելը մշակման փուլում է
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Եռամսյակային մակրոտնտեսական կանխատեսումը տարին չորս անգամ հրապարակվում է Դրամավարկային տեղեկագրում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Մակրոտնտեսական մոդելից բխող տոկոսադրույքի ուղին (Թեյլորի հեռահար կանոնը տոկոսադրույքների հարթեցման եղանակի հետ միասին), ինչպես նաև ոչ մոդելային հենքի վրա կառուցված այլ ենթադրություններ
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Տնտեսագիտական միավորի աշխատակազմ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Եթե ՍԳԻ-ն սահմանված նպատակից թե՛ նվազման, թե՛ աճի ուղղությամբ շեղվում է ավելի քան 1.5 տոկոսային կետով, ապա Կենտրոնական բանկը պարտավոր է Կառավարություն ներկայացնել բաց նամակ՝ բացատրելով նպատակից շեղման պատճառը և այդ ուղղությամբ Բանկի արձագանքները
4.2	Խորհրդարանական լսումներ	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովից պահանջվում է տարին երկու անգամ ելույթ ունենալ խորհրդարանի առջև
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ասուլիս
5.3	Արձանագրության հրապարակում	Դրամավարկային քաղաքականության նիստերի արձանագրությունները հրապարակվում են
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Ձայների համակշռման տվյալները զետեղվում են արձանագրության մեջ: Անհատական ձայներն ամփոփվում են Բանկի տարեկան հաշվետվությունում
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային տեղեկագիր
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ, որոնցից երկուսը համառոտ քարմացումներ են

Ինդոնեզիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Ինդոնեզիայի բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Ինդոնեզիայի բանկի մասին ընդունված թիվ 23/1999 օրենքի՝ «… Ինդոնեզիայի բանկի նպատակն է՝ հասնել և պահպանել ռուփիայի արժեքի կայունությունը»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2005 թ. հուլիս
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կառավարությունը՝ Ինդոնեզիայի բանկի հետ խորհրդակցությամբ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր թե բնականոն	Ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ.՝ 5.0%±1 տոկոսային կետ 2011 թ.՝ 5.0% 1 տոկոսային կետ: Միջինից դեպի երկարաժամկետ՝ շուրջ 3%:
1.8	Նպատակային հորիզոնը	Միջնաժամկետ հորիզոն:
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Ինդոնեզիայի բանկի տոկոսադրույք (քաղաքականության դրույքն է. Ինդոնեզիայի բանկն ունի տոկոսադրույքի միջանցք, որն ուղղորդում է միջբանկային փողի շուկայի տոկոսադրույքները):
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Կառավարիչների խորհրդի կազմում են՝ Կառավարիչը, Կառավարչի ավագ տեղակալը և առնվազն չորս տեղակալներ, որոնց թիվը, սակայն, չպետք է գերազանցի յոթը: Ներկայումս ընդգրկված են ութ անդամներ:
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա:
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Անդամներն առաջադրվում և նշանակվում են երկրի Նախագահի կողմից՝ Ներկայացուցիչների Պալատի համաձայնությամբ: Պաշտոնավարման ժամկետը հինգ տարի է, և անդամները միայն մեկ անգամ վերընտրվելու իրավունք ունեն:
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Խորհուրդը ձգտում է փոխհամաձայնության գալ: Եթե դա չի հաջողվում, ապա Կառավարիչն օգտագործում է որոշում կայացնելու իր լիազորությունը:
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Սովորաբար՝ յուրաքանչյուր ամիս:

3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Ինդոնեզիայի բանկը կիրառում է մոդելների մի ամբողջ շարք. GEMBI-ն (Ինդոնեզիայի Բանկի Ընդհանուր Հավասարակշռության Մոդել), DSGE մոդել, որն օգտագործվում է քաղաքականության սիմուլյացիոն նպատակներով: SOFIE-ն (Ինդոնեզիայի Տնտեսության Կարճաժամկետ Կանխատեսման Մոդել) կանխատեսման հիմնական մոդելն է: ՀՆԱ բաղադրատարրերի եռամսյակային կանխատեսման, գնաճի (ինչպես բնականոն, այնպես էլ ոչ բնականոն), դրամական ագրեգատների և փոխարժեքի համար կիրառվում է մակրոտնտեսաչափական մոդելը: Ժամանակային շարքերի մոդելները (ARIMA և այլն) նույնպես օգտագործվում են գնաճի, փոխարժեքի և մի քանի այլ առանցքային ու ընթացիկ ցուցանիշների ամսական կանխատեսումները հեշտացնելու համար:
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի, ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի բաղադրատարրերի համալիր կանխատեսումները հրապարակվում են:
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Հիմնված է գնաճի սցենարների ու սպասումների վրա:
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Կառավարիչների խորհուրդ:
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում:
4.2	Խորհրդարանական լսումներ	Նախորդ տարում իրականացված դրամավարկային քաղաքականության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև հաջորդ տարվա համար ծրագրված դրամավարկային քաղաքականությունը և քաղաքականության նպատակներն ու խնդիրները հաշվետվության տեսքով ներկայացվում են երկրի Նախագահին և Ներկայացուցիչների պալատ:
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Այո:
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն:
5.3	Արձանագրության հրապարակում	Չի կիրառվում:
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում:
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն:
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ:

Իսրայել

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Իսրայելի բանկ:
1.2	Իրավական ակտ	Համաձայն Իսրայելի բանկի մասին ընդունված թիվ 5714-1954 օրենքի՝ Բանկի հիմնական նպատակը «… արժույթի արժեքի կայունությունն է Իսրայելում և Իսրայելից դուրս, ինչպես նաև Իսրայելում արտադրության, զբաղվածության, ազգային եկամտի և կապիտալ ներդրումների բարձր մակարդակի ապահովումը»: Ներկայումս քննարկման փուլում է օրենքի նոր նախագիծը, որում առաջնահերթություն է տրվում գների կայունության խնդրին:
1.3	Գործառնական անկախություն	Այո (դե ֆակտո): Գնաճի լիարժեք նպատակադրման ռեժիմին անցում է կատարվել 1997 թ. հունիսին:
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	Ոչ պաշտոնապես՝ 1992 թ.:
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կառավարությունը՝ Ինդոնեզիայի բանկի կառավարչի հետ խորհրդակցությամբ:
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ:
1.7	Ընթացիկ նպատակը	Նպատակային տիրույթը՝ 1%-3%:
1.8	Նպատակային հորիզոնը	Հաջորդող 12-ամսյա կտրվածքով:
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Կարճաժամկետ տոկոսադրույք (Իսրայելի բանկի և բանկերի միջև օվերնայթ գործառնությունների գծով):
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Կառավարիչը միակ որոշում կայացնողն է: Կառավարիչը որոշումները կայացնում է երկմակարդակ քննարկումների՝ լայն և նեղ շրջանակներով տեղի ունեցող հանդիպումների արդյունքում:
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա:
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բանկի Կառավարչին նշանակում է Պետության Նախագահը՝ Ֆինանսների նախարարի առաջարկությամբ: Կառավարիչը և Կառավարչի տեղակալը նշանակվում են հինգ տարի պաշտոնավարման ժամկետով և ունեն վերանշանակման իրավունք: Կառավարչի տեղակալի առաջին նշանակումը չորս տարի ժամկետով է:
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քննարկումները տեղի են ունենում երկու մակարդակով՝ լայն և նեղ շրջանակներով կազմակերպվող հանդիպումների ձևաչափով: Հանդիպումների նեղ ձևաչափի ժամանակ հետազոտությունների և շուկայական գործառնությունների վարչությունների տնօրենները մյուս ղեկավար օղակների պատասխանատուների հետ միասին իրենց գրավոր առաջարկություններն են ներկայացնում տոկոսադրույքի վերաբերյալ:

2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Յուրաքանչյուր ամիս:
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Իսրայելի բանկը կանխատեսումներ կատարելու համար կիրառում է մոդելների շարք:
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ՀՆԱ-ի, գնաճի և քաղաքականության հիմնական տոկոսադրույքի հետ կապված զարգացումների հավանականության բաշխման գրաֆիկները հրապարակվում են եռամսյակային գնաճի հաշվետվությունում՝ ներկայացնելով նաև համապատասխան ցուցանիշների տիրույթները:
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Նորքեյնսյան մոդելը հիմնված է ռացիոնալ սպասումների և այն ենթադրության վրա, որ ակնկալվող գնաճը և համընդհանուր տնտեսական փոփոխականների վերաբերյալ ակնկալիքները կարճաժամկետ հատվածում գերակշիռ ազդեցություն են թողնում գնաճի վրա: Մոդելն ունի քաղաքականության հեռահար արձագանքի գործառույթ, այդ պատճառով այն ներծին է: Կիրառվում են նաև իներցիոն EC մոդելը և NK կառուցվածքը:
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Մասնագիտական աշխատակազմ:
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Կիրառվում է, սակայն այս ընթացակարգը սահմանված չէ օրենքով:
4.2	Խորհրդարանական լսումներ	Այո:
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Այո:
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն:
5.3	Արձանագրության հրապարակում	Տոկոսադրույքի վերաբերյալ հայտարարություն անելուց երկու շաբաթ անց:
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում, քանի որ Կառավարիչը որոշումները կայացնում է միանձնյա: Այնուամենայնիվ Իսրայելի բանկը հրապարակում է նեղ ձևաչափով տեղի ունեցած հանդիպման արդյունքում գրանցված քվեների քանակը:
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո:
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ:

Մեքսիկա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Մեքսիկայի բանկ:
1.2	Իրավական ակտ	Համաձայն Մեքսիկայի Սահմանադրության թիվ 28 հոդվածի՝ Կենտրոնական բանկի հիմնական նպատակը մեքսիկական արժույթի գնողունակությունը պահպանելն է:
1.3	Գործառնական անկախություն	Այո:
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2001 թ.:
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կառավարիչների խորհուրդը:
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞р, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ:
1.7	Ընթացիկ նպատակը	Բազմամյա գնաճի նպատակ: Ներկա նպատակը՝ 3%±1 տոկոսային կետ:
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ:
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	2008 թ. հունվարից՝ միջբանկային օվերնայթ տոկոսադրույք:
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Կառավարիչների խորհուրդը: Խորհրդի կազմում գործում են հինգ անդամներ՝ Կառավարիչը և կառավարչի չորս տեղակալները:
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա:
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բանկի Կառավարչին նշանակում է Հանրապետության Նախագահը, իսկ նշանակումը հաստատվում է Սենատի կամ մշտական հանձնաժողովի կողմից: Պաշտոնավարումը՝ վեց տարի: Մյուս անդամներին նշանակում է Նախագահը, իսկ նշանակումը հաստատվում է Սենատի կամ մշտական հանձնաժողովի կողմից: Պաշտոնավարումը՝ ութ տարի:
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Փոխհամաձայնության միջոցով:
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարվա մեջ տասնմեկ անգամ, այսինքն՝ հանդիպումներն անցկացվում են ամեն ամիս՝ բացառությամբ դեկտեմբեր ամսվա:

3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	DSGE մոդել: Սխալների շտկման մոդել:
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ԳՆաճ, ՀՆԱ և զբաղվածություն:
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Կանխատեսման մեջ կիրառվող տոկոսադրույքը ներծին է: Այն հիմնված է կորստի գործառույթը նվազեցնող օպտիմալ կանոնի վրա (արդյունաբերական արտադրանքի ճեղքվածք և գնաճի ճեղքվածք), որը պայմանավորված է տնտեսական մի շարք հանգամանքներով:
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Մասնագիտական աշխատակազմ:
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում:
4.2	Խորհրդարանական լսումներ	Բանկի Կառավարչին կարող են հրավիրել խորհրդարանական լսումների, եթե խորհրդարանը զգում է դրա անհրաժեշտությունը:
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Այո:
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն:
5.3	Արձանագրության հրապարակում	Ոչ:
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում:
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո:
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ:

Նոր Զելանդիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Նոր Զելանդիայի պահուստային բանկ:
1.2	Իրավական ակտ	Նոր Զելանդիայի պահուստային բանկի մասին 1989 թ. ընդունված օրենքը սահմանում է, որ Պահուստային բանկի հիմնական գործառույթն է՝ ապահովել «… գների ընդհանուր մակարդակի կայունությունը»: Օրենքը սահմանում է նաև, որ Ֆինանսների նախարարը և Պահուստային բանկի Կառավարիչը համատեղ ներկայացնում են գների կայունության հասնելու և դրա պահպանմանն ուղղված հատուկ նպատակներ սահմանող առանձին համաձայնություն, որը հայտնի է որպես Քաղաքականության նպատակների համաձայնություն (ՔՆՀ): ՔՆՀ-ի պահանջներից է՝ Պահուստային բանկը, անհրաժեշտության դեպքում, պետք է իրագործի նաև այլ նպատակներ (օրինակ՝ խուսափի տոկոսադրույքների և արդյունաբերական արտադրանքի շուրջ ձևավորվող անհարկի անորոշություններից):
1.3	Գործառնական անկախություն	Այո:
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1989 թ. դեկտեմբեր:
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Բանկի կառավարիչը և Ֆինանսների նախարարը:
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանո՞ւր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ:
1.7	Ընթացիկ նպատակը	Միջինը՝ 1%-3%՝ միջինժամկետ հատվածում: Նպատակը Ֆինանսների նախարարի և Բանկի կառավարչի միջև ձևավորված վերոնշյալ համաձայնությունն է, որն ուժի մեջ է նրանց պաշտոնավարման ընթացքում:
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ:
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Փողի հաշվարկային (պաշտոնական) տոկոսադրույք:
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Կառավարիչը միակ որոշում կայացնողն է: Փողի հաշվարկային (պաշտոնական) տոկոսադրույքի խորհրդատվական խումբը խորհրդատվական ծառայություններ է մատուցում կառավարչին:
2.2	Արտաքին անդամների առկայություն	Երկու արտաքին խորհրդականներ:

2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բանկի կառավարչին և Խորհրդի անդամներին նշանակում է Ֆինանսների նախարարը: Խորհուրդը նախարարին խորհրդատվություն է տալիս կառավարչի նշանակման վերաբերյալ: Կառավարիչը նշանակվում է հինգ տարի պաշտոնավարման ժամկետով. ժամկետը կարող է երկարացվել: Փողի հաշվարկային (պաշտոնական) տոկոսադրույքի խորհրդատվական խումբ. ներքին անդամների պաշտոնավարման ժամկետները որոշակիացված չեն: Նրանցից ոմանք անդամ են ի պաշտոնե (օրինակ՝ Կանխատեսման միավորի պատասխանատու): Մյուսներին հրավիրում է կառավարիչը: Արտաքին խորհրդականները նշանակվում են երկու տարով:
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Կառավարչի կողմից:
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին ութ անգամ:
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	DSGE մոդելը (Քիվի Գնաճի նպատակադրման տեխնոլոգիա) կանխատեսման կենտրոնական մոդելն է:
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ՀՆԱ-ի, գնաճի և տոկոսադրույքի կանխատեսումները հրապարակվում են տարին չորս անգամ՝ Դրամավարկային քաղաքականության հայտարարության տեսքով:
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ներծին:
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով:
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Օրենքը սահմանում է, որ Խորհուրդը պարտավոր է գնահատել, թե որքանով են Բանկի Դրամավարկային քաղաքականության հայտարարությունները «… համահունչ Բանկի հիմնական գործառույթի էությանը և Ֆինանսների նախարարի հետ կնքված համաձայնությամբ սահմանված նպատակներին»: Այսինքն, նրանք պարտավոր են որոշակի գնահատական տալ Դրամավարկային քաղաքականության

		հայտարարության յուրաքանչյուր քողարկմանը:
4.2	Խորհրդարանական լսումներ	Յուրաքանչյուր եռամսյակ Բանկի կառավարիչը և առաջատար մասնագետները ներկայանում են Խորհրդարան «Ֆինանսների ու ծախսերի առանձին հարցերով զբաղվող հանձնաժողովում» դրամավարկային քաղաքականության մասին ընթացող քննարկումներին մասնակցելու համար:
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Այո:
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ծանուցում յուրաքանչյուր որոշման համար: Մամուլի ասուլիս տարին չորս անգամ՝ դրամավարկային քաղաքականության հայտարարությունը հրապարակելու ժամանակ:
5.3	Արձանագրության հրապարակում	Չի կիրառվում:
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Տվյալներ չկան:
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության հայտարարություն:
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ:

Նորվեգիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Նորվեգիայի բանկ
1.2	Իրավական ակտ	2001 թ. մարտի 29-ի թվագրությամբ Արքայական կարգադրագիրը սահմանում է, որ դրամավարկային քաղաքականության իրականացումը «… պետք է ուղղորդված լինի ցածր և կայուն գնաճային միջավայրի պահպանմանը, ինչպես նաև նպաստի տնտեսական աճի և զբաղվածության կայունացմանը»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2001 թ. մարտ
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կառավարությունը
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	Մինչև 2.5%՝ ժամանակի ընթացքում
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Հիմնական տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Նորվեգիայի բանկի գործադիր խորհուրդ, որի կազմում են՝ կառավարիչը (նախագահողը), կառավարչի տեղակալը և հինգ արտաքին անդամներ
2.2	Արտաքին անդամների առկայություն	Հինգ արտաքին անդամներ
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բոլոր յոթ անդամներին նշանակում է Թագավորը: Բանկի կառավարիչը և կառավարչի տեղակալը նշանակվում են վեց տարի պաշտոնավարման ժամկետով և իրավունք ունեն մեկ անգամ ևս վերանշանակվել: Մնացած հինգ անդամները նշանակվում են չորս տարի պաշտոնավարման ժամկետով և կարող են վերանշանակվել ընդհանուր առմամբ 12 տարի ժամանակահատվածով
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Փոխհամաձայնությամբ:
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Յուրաքանչյուր վեց շաբաթը մեկ անգամ

3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կիրառվում են DSGE մոդելներ և ներկա շրջանի կանխատեսումների իրականացման նպատակով գործածվող մոդելների շարք:
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքի, տնտեսական աճի ճեղքվածքի, ՍԳԻ-ի և հարկադրույքների փոփոխություններով ճշգրտված ՍԳԻ-ի ցուցանիշների կանխատեսման հավանականությունների բաշխման գրաֆիկները հրապարակվում են Դրամավարկային քաղաքականության հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ներծին
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Կառավարիչ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Կառավարիչը՝ վարկային զեկույցի հետ կապված, դրամավարկային քաղաքականության վերաբերյալ գնահատականներ է տալիս Ֆինանսական և տնտեսական հարցերով մշտական հանձնաժողովի հրավիրած բաց լսումներում
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Դրամավարկային քաղաքականության հայտարարության տեսքով
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ասուլիս և մամուլի ծանուցում
5.3	Արձանագրության հրապարակում	Չի կիրառվում
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Փոխհամաձայնությամբ կայացված որոշում
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն
5.6	Հաճախականություն	Տարին երեք անգամ

Պերու

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Պերուի կենտրոնական պահուստային բանկ
1.2	Իրավական ակտ	Պերուի Սահմանադրության համաձայն՝ բանկի նպատակն է՝ պահպանել դրամավարկային կայունություն
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2002 թ. հունվար
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Տնօրենների խորհուրդ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Ընդհանուր գնաճ
1.7	Ընթացիկ նպատակը	2007 թվականի սկզբից՝ 2%+1 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Բոլոր ժամանակներում
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Բազային տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Տնօրենների խորհուրդ, որը բաղկացած է յոթ անդամից, ներառյալ՝ կառավարիչը
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Գործադիր մարմինը նշանակում է չորս անդամներին, այդ թվում՝ Կենտրոնական բանկի նախագահին: Կոնգրեսը վավերացնում է նախագահի նշանակումը և նշանակում է մնացած երեք անդամներին: Խորհրդի բոլոր անդամների վերանշանակման օրը յուրաքանչյուր ընդհանուր ընտրությունների տարվա հուլիսի 28-ն է: Վերանշանակումը պետք է իրականացվի առաջին իսկ օրենսդրական նախաձեռնության մեկնարկի պահից 30 օրվա ընթացքում: Անդամները պետք է լինեն պերուացիներ և չպետք է ներկայացնեն որևէ հաստատություն կամ որևէ կոնկրետ շահ
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կիսակառուցվածքային եռամսյակային ժամանակահատվածի կանխատեսման մոդել, DSGE մոդել (MEGA-D մոդել), VAR տեսակի մոդելներ կարճաժամկետ հատվածում կանխատեսումներ կատարելու համար

3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի հաշվետվությունում հրապարակվում են հետևյալ կանխատեսումները. Գնաճի և ՀՆԱ-ի կանխատեսման հավանականու-թյունների բաշխման գրաֆիկներ, ՀՆԱ-ի բաղադրատարրեր, Պետական հատվածի հաշվեկշիռ, Վճարային հաշվեկշիռ, Պերուի հիմնական առևտրային գործընկերների ՀՆԱ-ի աճ և գնաճ, Առևտրի պայմաններ
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Կանխատեսումներում տոկոսադրույքի վերա-բերյալ ենթադրությունը պայմանավորված է տնտե-սական միջավայրում տեղի ունեցող զարգացում-ներով: Ներկայումս տոկոսադրույքները սահման-վում են ըստ Թեյլորի կանոնի վրա հիմնված եղանակի
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Կենտրոնական բանկ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Տնօրենների խորհրդի նախագահը պարբերաբար՝ տարին մեկ անգամ, ներկայանում է Խորհրդարան՝ Կառավարության բյուջեի առնչությամբ դրամավարկային ենթադրությունները պարզաբանելու նպատակով, ինչպես նաև այն դեպքերում, երբ նրան հրավիրում են դրամավարկային քաղաքականության հետ կապված միջոցառումները և կանխատեսումները ներկայացնելու համար
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Տեղեկատվական ծանուցման տեսքով
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Հեռախոսային ասուլիսը մամուլի և առևտրային բանկերի ներկայացուցիչների հետ սովորաբար տեղի է ունենում առավոտյան՝ համապատասխան որոշումից հետո
5.3	Արձանագրության հրապարակում	Չի կիրառվում
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Մինչև 2008 թվականը՝ տարին երեք անգամ: 2009 թվականից՝ տարին չորս անգամ

Ֆիլիպիններ

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Ֆիլիպինների կենտրոնական բանկ
1.2	Իրավական ակտ	Կենտրոնական բանկի մասին նոր օրենքի համաձայն՝ Բանկի առաջնային նպատակն է՝ «… ապահովել գների կայունությունը, որը բարենպաստ հող է ստեղծում տնտեսության հավասարակշռված և կայուն աճի համար»:
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2002 թ. հունվար
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Ազգային կառավարությունը (Զարգացման բյուջեի և կոորդինացիոն հանձնաժողովի միջոցով)՝ Ֆիլիպինների կենտրոնական բանկի հետ խորհրդակցությամբ: Գնաճի նպատակը հայտարարվում է երկու տարվա կանխատեսմամբ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Միջին տ/տ փոփոխություն ընդհանուր ՍԳԻ ցուցանիշում
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ.՝ 4.5%±1 տոկոսային կետ: 2011 թ.՝ 4.0%±1 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Երկու տարի
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Հիմնական քաղաքականության տոկոսադրույք հետևյալ գործիքների համար՝ օվերնայթ փոխառություն կամ հակադարձ ռեպո համաձայնություն, օվերնայթ փոխատվություն կամ ռեպո համաձայնություն, ժամկետային օվերնայթ փոխառություն/փոխատվություն, հակադարձ ռեպո/ռեպո, ինչպես նաև հատուկ դեպոզիտային հաշիվներ:
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային խորհուրդ:
2.2	Արտաքին անդամների առկայություն	Արտաքին անդամներ չկան, թեպետ Դրամավարկային խորհրդի կազմում ընդգրկված է Կառավարության ներկայացուցիչը
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Դրամավարկային խորհրդի կազմում ընդգրկված են յոթ անդամ, որոնք նշանակվել են Ֆիլիպինների Նախագահի կողմից: Նրանցից մեկը Կառավարության անդամ է: Մնացած անդամները պաշտոնավարում են վեց տարի ժամկետով, իրավունք ունեն վերանշանակվել և զբաղեցրած դիրքից կարող են ազատվել միայն հիմնավոր պատճառաբանության դեպքում

2.4	Որոշումների կայացման գործընթացը	Խորհրդատվական հանձնաժողովը ներքին, տեխնիկական հարցերով զբաղվող մարմին է, որի կազմում ներառված են Բանկի բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց հանձնարարված է քննարկել և դրամավարկային քաղաքականության առնչությամբ առաջարկություններ ներկայացնել դրամավարկային խորհուրդ: Խորհրդատվական հանձնաժողովը նիստեր է գումարում վեց շաբաթը մեկ անգամ՝ նախքան դրամավարկային խորհրդի նիստը: Խորհրդատվական հանձնաժողովի կազմում ընդգրկված են հինգ անդամ՝ կառավարիչը, կառավարչի տեղակալը դրամավարկային կայունության հարցերով, կառավարչի տեղակալը վերահսկողության և ստուգումների հարցերով, Գանձապետական վարչության կառավարիչ-տնօրենը և Դրամավարկային քաղաքականության կառավարիչ-տնօրենը: Դրամավարկային խորհուրդը որոշում կայացնող մարմին է, որն իրականացնում է քաղաքականության տոկոսադրույքների ընտրության գործառույթ: Որոշումները կայացվում են քվեարկությամբ
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Խորհրդատվական հանձնաժողովը և Դրամավարկային խորհուրդը հանդիպում են վեց շաբաթը մեկ անգամ
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Միանդամ և բազմանդամ հավասարումների մոդելներ: Տարեկան մակրոմոդելը և եռամսյակային DSGE մոդելը մշակման փուլում են
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի կանխատեսման հավանականությունների բաշխման գրաֆիկը հրապարակվում է գնաճի հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Քաղաքականության հաստատուն տոկոսադրույքներ
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Ֆիլիպինների կենտրոնական բանկ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Այո
4.2	Խորհրդարանական լսումներ	Տնտեսական զարգացումների մասին եռամսյակային բաց նամակը ներկայացվում է Նախագահին և Կոնգրես
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Լրատու հաղորդագրության տեսքով

5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն և մամուլի ասուլիս՝ համապատասխան որոշումը ընդունելուց հետո
5.3	Արձանագրության հրապարակում	Նիստի ընթացքում հնչեցված առանցքային հարցերը բոլոր մյուս կարևոր հարցերի հետ միասին ամփոփվում և հաստատվում են Դրամավարկային խորհրդի կողմից, իսկ համապատասխան որոշում ընդունելուց հետո դրանք հրապարակվում են
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Լեհաստան

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Լեհաստանի ազգային բանկ
1.2	Իրավական ակտ	Լեհաստանի ազգային բանկի մասին օրենքը սահմանում է, որ «… ԼԱԲ-ի գործունեության հիմնական նպատակը գների կայունությունը պահպանելն է. միաժամանակ Բանկը պետք է սատարի Կառավարության կողմից տնտեսական քաղաքականության իրականացմանն այնքանով, որքանով դա չի հակասում Ազգային բանկի հիմնական նպատակի իրագործմանը»:
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1998 թ.
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Դրամավարկային քաղաքականության խորհուրդ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	Ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	2004 թ. սկսած՝ 2.5%±1 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ հորիզոն
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Հաշվարկային դրույք (հիմնական բաց շուկայական գործառնությունների գծով եկամտաբերությունը որոշող դրույքը)
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային խորհուրդը, որը բաղկացած է տասն անդամից՝ Ազգային բանկի նախագահ (նախագահող) և ինն արտաքին անդամներ
2.2	Արտաքին անդամների առկայություն	Ինը
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Դրամավարկային քաղաքականության խորհրդի արտաքին անդամների պաշտոնավարման ժամկետը վեց տարի է (ենթակա չէ երկարաձգման): Ազգային բանկի նախագահին նշանակում է երկրի խորհրդարանը՝ Լեհաստանի Նախագահի առաջարկությամբ՝ վեց տարի պաշտոնավարման ժամկետով: Կարող է վերանշանակվել միայն մեկ անգամ: Ինն անդամներից երեքին նշանակում է Խորհրդարանի Ստորին պալատը, մյուս երեքին՝ Վերին պալատը, և մնացած երեքին՝ Լեհաստանի Նախագահը:

		Լեհաստանի ազգային բանկի մասին օրենքը սահմանում է, որ Դրամավարկային խորհրդի անդամները պետք է լինեն ֆինանսական ոլորտի մասնագետներ: Իրականում ԴՔԽ-ի անդամների մեծ մասը տնտեսագետներ են: Պաշտոնավարելու տարիներին անդամները չեն կարող գիտական, հետազոտական կամ կրթական գործունեությունից զատ զբաղվել այլ մասնագիտական գործունեությամբ և գործունեություն ծավալել որևէ քաղաքական կուսակցությունում կամ արհեստակցական միությունում
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Ձայների մեծամասնության սկզբունքով: Նախագահողի ձայնը որոշիչ է
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կիրառվում է մակրոտնտեսական մոդելների շարք, որոնցից հիմնականը եռամսյակային կառուցվածքային մակրոմոդելն է. DSGE մոդելը մշակման փուլում է
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի և ՀՆԱ-ի կանխատեսման հավանականությունների բաշխման գրաֆիկները հրապարակվում են գնաճի հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Քաղաքականության հաստատուն տոկոսադրույքներ
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Մասնագիտական աշխատակազմ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Դրամավարկային քաղաքականության խորհուրդը նախաձշում է դրամավարկային քաղաքականության տարեկան ուղղությունները և դրանք, Նախարարների խորհրդի ներկայացրած բյուջեի նախագծի հետ միասին, որպես տեղեկատվություն ներկայացնում է Խորհրդարանի Ստորին պալատ (Սեյմ): ԴՔԽ-ն դրամավարկային քաղաքականության ուղղությունների կատարողականի հաշվետվությունը Սեյմ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտին հաջորդող հինգ ամսվա ընթացքում
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն

5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Այո
5.3	Արձանագրության հրապարակում	Այո
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Անհատական քվեները չեն հրապարակվում արձանագրության մեջ: Դրա փոխարեն յուրաքանչյուր անդամի ձայնը հրապարակվում է գնաճի հաշվետվությունում
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին երեք անգամ

Ռումինիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Ռումինիայի ազգային բանկ
1.2	Իրավական ակտ	Ռումինիայի ազգային բանկի մասին թիվ 312/28 հունիս 2004 թ. օրենքի համաձայն՝ Ազգային բանկի հիմնական նպատակն է՝ ապահովել և պահպանել գների կայունությունը: Հիմնական նպատակից չշեղվելու պայմանի պահպանմամբ՝ ՌԱԲ-ը նաև սատարում է Կառավարության կողմից տնտեսական քաղաքականության իրականացմանը
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2005 թ. օգոստոս
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Ռումինիայի ազգային բանկը Ռումինիայի կառավարության հետ համատեղ սահմանում է նպատակը
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Ընդհանուր գնաճի տեմպ
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ.՝ 3.5%±1 տոկոսային կետ: 2011 թ. տարեվերջ՝ 3.0%±1 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Տարեկան նպատակը սահմանված է երկամյա հորիզոնով (ներկայի համար)
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույք: Մշտական հնարավորության գործիքների (դեպոզիտային և վարկային) գծով տոկոսադրույքը սահմանվել է ±4 տոկոսային կետ՝ դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքից
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Տնօրենների խորհուրդը, որը բաղկացած է հինգ անդամից՝ Ազգային բանկի կառավարչից (նախագահող), կառավարչի առաջին տեղակալից (փոխնախագահող), կառավարչի երկու տեղակալներից և հինգ ոչ գործադիր (արտաքին) անդամներից: Պետական ֆինանսների նախարարը և այդ նախարարության պետքարտուղարներից մեկը կարող են խորհրդի նիստերին մասնակցել առանց քվեարկության իրավունքի

2.2	Արտաքին անդամների առկայություն	Հինգը
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Խորհրդի անդամներին նշանակում է Ռումինիայի խորհրդարանը՝ վերջինիս երկու Պալատների մշտական հանձնաժողովների առաջարկությամբ: Խորհրդի անդամները նշանակվում են հինգ տարի պաշտոնավարման իրավունքով, և այդ իրավունքը կարող է երկարացվել
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Ձայների քվեարկությամբ
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին ութ անգամ
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Գնաճի կանխատեսում մոտակա ժամանակաշրջանի համար. ARMAX մոդելի կիրառում և ՍԳԻ բաղադրիչների փորձագիտական գնահատում: ՀՆԱ-ի կանխատեսում մոտակա ժամանակաշրջանի համար. OLS և 2SLS գնահատում՝ սխալների շտկման մեխանիզմի գործադրմամբ: Միջինժամկետ կանխատեսում. Վերլուծությունների և միջինժամկետ կանխատեսումների մոդել, Փոքր, կիսակառուցվածքային աստիճանակարգման մոդել՝ Նորքեյնսյան սկզբունքով
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի և ՀՆԱ-ի ճեղքվածքի կանխատեսումները հրապարակվում են գնաճի հաշվետվությունում: ՍԳԻ բաղադրիչների և բնականոն գնաճի կանխատեսումները նույնպես հրապարակվում են:
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Տոկոսադրույքի կանխատեսումը բխում է մոդելային հենքով դրամավարկային քաղաքականության արձագանքման ֆունկցիայից (Թեյլորի կանոն): Չի բացառվում նաև այլընտրանքային աշխատանքային վարկածների կիրառումը, ինչը ենթադրում է տոկոսադրույքների խտացված հետագծի առկայություն կամ Խորհրդի կողմից արված առաջարկությունների ընդունում, սակայն Թեյլորի կանոնի շրջանակում
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Ռումինիայի ազգային բանկի խորհուրդ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում

4.2	Խորհրդարանական լսումներ	ՌԱԲ-ի տարեկան հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են մակրոտնտեսական, ֆինանսական, դրամավարկային և արտարժութային ոլորտների հիմնական զարգացումները, ինչպես նաև նախորդ տարում իրականացված դրամավարկային քաղաքականությունը և գալիք տարվա ուղղությունները, ներկայացվում է Խորհրդարան
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրություն Խորհրդի հերթական նիստից հետո, և մամուլի ասուլիս՝ տարին չորս անգամ, ինչին զուգահեռ հրապարակվում է գնաճի հաշվետվությունը
5.3	Արձանագրության հրապարակում	Ոչ
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Ոչ
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Սերբիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Սերբիայի ազգային բանկ
1.2	Իրավական ակտ	Սերբիայի ազգային բանկի մասին օրենքով սահմանված է, որ Ազգային բանկի հիմնական նպատակն է՝ հասնել գների կայունության և պահպանել դա: Բացի հիմնական նպատակի իրագործումից՝ ՍԱԲ-ի խնդիրն է նաև՝ ձգտել պահպանել ֆինանսական կայունությունը: Իր հիմնական նպատակից չշեղվելու պայմանի պահպանմամբ բանկը նաև սատարում է Սերբիայի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությանը՝ շուկայական տնտեսության սկզբունքներին համահունչ
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	Ոչ պաշտոնապես՝ 2006 թ. սեպտեմբերից և պաշտոնապես՝ 2009 թ. հունվարից
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Սերբիայի Հանրապետության ազգային բանկը՝ Կառավարության հետ համագործակցությամբ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Ընդհանուր գնաճ
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ. մեկնարկային փուլ՝ 8%±2 տոկոսային կետ 2010 թ. տարեվերջ՝ 6%±2 տոկոսային կետ 2011 թ. տարեվերջ՝ 4.5%±1.5 տոկոսային կետ 2012 թ. տարեվերջ՝ 4%±1.5 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Միջինժամկետ հորիզոն
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Երկշաբաթյա ռեպո համաձայնագրի տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով. բաղկացած է չորս անդամից՝ Բանկի կառավարչից և երեք փոխկառավարիչներից: Ֆինանսների նախարարը կարող է մասնակցել Խորհրդի նիստերին, սակայն չունի քվեարկության իրավունք
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բանկի կառավարչին նշանակում է Ազգային Ժողովը: Երեք փոխկառավարիչներին նշանակում է ՍԱԲ-ի խորհուրդը: Կառավարիչը նշանակվում է հինգ տարի պաշտոնավարման ժամկետով և ունի վերընտրվելու իրավունք

2.4	Որոշումների կայացման գործընթացը	Ձայների քվեարկությամբ: Կառավարչի ձայնը որոշիչ է
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամիսը երկու անգամ
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Եռամսյակային կանխատեսման մոդել
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի կանխատեսման հավանականության բաշխման գրաֆիկը հրապարակվում է Գնաճի հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Քաղաքականության տոկոսադրույքի ուղին ներծին է: Այս մասին տեղեկացվում է բանավոր, սակայն մոտ ապագայում նախատեսվում է համապատասխան գրաֆիկի կիրառում
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Եթե գնաճը շեղվում է նպատակից ավելի քան վեց ամիս շարունակ, ապա ՍԱԲ-ը պարտավոր է շեղման պատճառների բացատրությունը, ձեռնարկվելիք միջոցառումները և գնաճը նպատակային տիրույթ վերադարձնելու համար պահանջվող ժամանակի մասին գրավոր ներկայացնել Կառավարություն:
4.2	Խորհրդարանական լսումներ	ՍԱԲ-ը պատրաստում և Խորհրդարան է ներկայացնում իր գործունեության և գործառնական արդյունքների մասին տարեկան հաշվետվություն, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հաշվետվություն: Խորհրդարան է ներկայացվում նաև երկրի բանկային և ընդհանուր ֆինանսական համակարգում տեղի ունեցած զարգացումների մասին տարեկան հաշվետվություն՝ հաջորդ տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի հետ մեկտեղ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/ մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ասուլիս
5.3	Արձանագրության հրապարակում	Ոչ
5.4	Անհատական քվեների/ քվեների հավասարակշռության հրապարակում	Ոչ
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Հարավաֆրիկյան Հանրապետություն

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Հարավաֆրիկյան պահուստային բանկ
1.2	Իրավական ակտ	Ինչպես ՀԱՀ Սահմանադրությունում, այնպես էլ Հարավաֆրիկյան պահուստային բանկի մասին թիվ 90/1989 օրենքում սահմանված է, որ բանկի հիմնական նպատակն է՝ պահպանել արժույթի արժեքը՝ հավասարակշռված և կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով: Բանկն իր հիմնական խնդիրը տեսնում է գների կայունության հասնելու և պահպանելու, ինչպես նաև ֆինանսական կայունություն ապահովելու գործում
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2000 թ. փետրվար
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Հարավաֆրիկյան Կառավարությունը՝ Պահուստային բանկի հետ խորհրդակցելուց հետո
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	2009 թ. հունվարից՝ 12-ամսյա աճ ընդհանուր ՍԳԻ-ում
1.7	Ընթացիկ նպատակը	3%-6%
1.8	Նպատակային հորիզոնը	Շարունակական հիմունքներով
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Ռեպո համաձայնագրի տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով. այն բաղկացած է ութ անդամից՝ Բանկի կառավարչից, երեք կառավարչի տեղակալներից և Բանկի ավագ ղեկավարության չորս ներկայացուցիչներից
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Հարավաֆրիկյան Հանրապետության Նախագահը Պահուստային բանկի կառավարչին և կառավարչի տեղակալներին նշանակում է Ֆինանսների նախարարի և Բանկի տնօրենների խորհրդի հետ խորհրդակցությունից հետո: ԴՔՀ մյուս անդամներին նշանակում է Բանկի կառավարիչը: Բանկի կառավարիչը և կառավարչի տեղակալները նշանակվում են հինգ տարի պաշտոնավարման ժամկետով և իրավունք ունեն վերընտրվել
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Փոխհամաձայնությամբ

2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին վեց անգամ
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Հիմնական մակրոտնտեսաչափական մոդելը կիրառվում է գնաճի նպատակադրման խնդիրների համար: Կիրառվում են նաև համանման այլ մոդելներ
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի կանխատեսման հավանականության բաշխման գրաֆիկը երկու անգամ հրապարակվում է Դրամավարկային քաղաքականության տեղեկագրում: Կենտրոնական կանխատեսումների հիմնական տարրերը նկարագրվում են ԴՔՀ հայտարարությունում, որը հրապարակվում է հերթական նիստից հետո
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Հաստատուն
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Բանկի կառավարիչը Ֆինանսների պորտֆելային հանձնաժողովում ելույթ է ունենում տարին առնվազն երեք անգամ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Ազգային հեռուստատեսությամբ՝ ուղիղ հեռարձակմամբ
5.3	Արձանագրության հրապարակում	Հրապարակվում է Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի հայտարարությունը
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Տվյալներ չկան
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության տեղեկագիր
5.6	Հաճախականություն	Տարին երկու անգամ

Հարավային Կորեա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Կորեայի բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Կորեայի բանկի մասին 2003 թ. ընդունված օրենքի՝ Բանկի հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է
1.3	Գործառնական անկախություն	2003 թ-ից
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1998 թ. ապրիլ
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Նպատակը սահմանում է Բանկը՝ Կառավարության հետ խորհրդակցելուց հետո
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	2007 թ. ընդհանուր ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	3%±0.5 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Եռամյա հորիզոն
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Կորեայի բանկի բազային տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով. բաղկացած է յոթ անդամից՝ Բանկի կառավարչից (նախագահող), կառավարչի առաջին տեղակալից և հինգ արտաքին անդամներից
2.2	Արտաքին անդամների առկայություն	Լրիվ դրույքով գործող հինգ արտաքին անդամներ
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Կառավարչին նշանակում է երկրի Նախագահը՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով: Անդամների նշանակումներն իրականացնելիս Կորեայի բանկի կառավարիչը, Ռազմավարության և ֆինանսների նախարարը, Ֆինանսական ծառայությունների հանձնաժողովի նախագահը, Կորեայի առևտրաարդյունաբերական պալատի նախագահը և Կորեայի բանկերի միության նախագահը առաջադրում են մեկական թեկնածու: Ընտրված անդամները նշանակվում են չորս տարի պաշտոնավարման ժամկետով և իրավունք ունեն վերընտրվելու
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով

2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Կորեայի բանկի Դինամիկ կանխատեսման մոդել և DSGE մոդել
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Հրապարակվում են ՀՆԱ-ի և գնաճի կետային կանխատեսումները
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ներծին
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Կորեայի բանկ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Բանկի կառավարիչը հաշվետվություն է ներկայացնում Ազգային Ժողովի Ֆինանսատնտեսական հարցերով զբաղվող հանձնաժողովին
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ասուլիս
5.3	Արձանագրության հրապարակում	Նիստի ավարտից վեց շաբաթ անց՝ առաջին երեքշաբթի օրը
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Չի կիրառվում
5.5	Գնաճի հաշվետվություն	Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն
5.6	Հաճախականություն	Տարին երկու անգամ

Շվեդիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Շվեդիայի Թագավորության բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Շվեդիայի Թագավորության բանկի մասին ընդունված օրենքի՝ հիմնական նպատակը գների կայունության պահպանումն է
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	Հայտարարվել է 1993 թ. հունվարին, սակայն կիրառվել է 1995 թվականից
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Շվեդիայի Թագավորության բանկ
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր թե բնականոն	Տարեկան փոփոխություն ընդհանուր ՍԳԻ-ում
1.7	Ընթացիկ նպատակը	Կետային տիրույթը սահմանված է 2%±1 տոկոսային կետ թույլատրելի միջակայքով
1.8	Նպատակային հորիզոնը	Նորմալ հանգամանքներում՝ երկամյա հորիզոն, սակայն այլ հանգամանքներում այս ժամանակահատվածը կարող է երկարացվել
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Ռեպո գործառնությունների տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Շվեդիայի բանկի գործադիր խորհուրդ. բաղկացած է վեց անդամից՝ կառավարչից (նախագահող) և հինգ կառավարչի տեղակալներից
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չկա
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բոլոր անդամները նշանակվում են Ընդհանուր խորհրդի կողմից, իսկ վերջինս, իր հերթին, նշանակվում է Շվեդիայի խորհրդարանի կողմից: Նշանակումները վեց տարով են. գործում է փոխատեղումների ռեժիմ: Անդամներն ունեն վերընտրվելու իրավունք:
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով. Կառավարիչի ձայնը որոշիչ է:
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին վեց անգամ

3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Ժամանակային շարքերի մոդել, ցուցանիշային մոդելներ, կառուցվածքային մոդելներ (օրինակ՝ DSGE), ինչպես նաև մի շարք ավելի փոքր մոդելներ, որոնք կենտրոնանում են տնտեսության մեջ գոյություն ունեցող մի շարք կարևոր խնդիրների վրա
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ՀՆԱ-ի, ՍԳԻ-ի, բնականոն գնաճի և ռեպո տոկոսադրույքի կանխատեսման հավանականության բաշխման գրաֆիկները հրապարակվում են դրամավարկային քաղաքականության հաշվետվությունում և դրամավարկային քաղաքականության տվյալների թարմացման տեղեկագրում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	2007 թ. տարեսկզբից կանխատեսումները կատարվում են տոկոսադրույքի ներծին եղանակով
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Կառավարիչների խորհուրդ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Չի կիրառվում
4.2	Խորհրդարանական լսումներ	Տարին երկու անգամ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Այո
5.2	Մամուլի ծանուցում/ մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի հաղորդագրությունը հրապարակվում է դրամավարկային քաղաքականության հերթական նիստին հաջորդող օրը
5.3	Արձանագրության հրապարակում	Նիստի ավարտից երկու շաբաթ անց
5.4	Անհատական քվեների/ քվեների հավասարակշռության հրապարակում	Այո
5.5	Գնաճի հաշվետվություն	Հրապարակվում են դրամավարկային քաղաքականության հաշվետվությունը և դրամավարկային քաղաքականության տվյալների թարմացման տեղեկագիրը
5.6	Հաճախականություն	Երեք դրամավարկային քաղաքականության հաշվետվություն հրապարակվում է տարեկան պարբերականությամբ, իսկ մյուս երեք դեպքերում հրապարակվում է դրամավարկային քաղաքականության տվյալների թարմացման տեղեկագիրը

Թաիլանդ

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Թաիլանդի բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Թաիլանդի բանկի մասին թիվ 2485 B.E. (փոփոխված B.E.2008) օրենքի՝ «… Թաիլանդի բանկն իրականացնում է դրամավարկային քաղաքականություն՝ Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի կողմից նախանշված ուղղություններին համահունչ, որի նպատակն է՝ ապահովել դրամավարկային կայունություն և ձևավորել դրամավարկային քաղաքականություն»
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2000 թ. մայիս
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովը, որի համար հիմք է վերցվում մեկ տարվա ժամանակահատվածը, բայց ոչ ուշ, քան դեկտեմբերը: Նպատակին հասնելու համար Բանկը պայմանավորվածություն է ձեռք բերում Ֆինանսների նախարարի հետ, որից հետո անհրաժեշտ է ստանալ Կառավարության հավանությունը
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր թե բնականոն	Բնականոն գնաճ (բացառությամբ՝ չմշակված սննդամթերքի և էներգետիկ ռեսուրսների)
1.7	Ընթացիկ նպատակը	Նպատակային տիրույթը սահմանված է 0.5% - 3% (միջին եռամսյակային):
1.8	Նպատակային հորիզոնը	Ութ եռամսյակ
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Միօրյա ռեպո գործառնության տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով (ԴՔՀ): Հանձնաժողովի կազմում գործում են յոթ անդամ՝ Բանկի կառավարիչը (նախագահող), երկու կառավարչի տեղակալներ և չորս արտաքին անդամներ
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չորսն են
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բանկի կառավարիչը նշանակվում է հինգ տարի պաշտոնավարման ժամկետով և կարող է միայն մեկ անգամ վերընտրվել: Արտաքին անդամների համար սահմանված է պաշտոնավարման եռամյա ամրագրված ժամկետ, սակայն նրանք չեն կարող նույն պաշտոնը զբաղեցնել երկու ժամկետ անընդմեջ
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության մեծամասնական սկզբունքով

2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Տարին ութ անգամ, ինչը պետք է համապատասխանի պահուստային պահպանման ժամանակահատվածին (երկու շաբաթ)
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Թաիլանդի բանկը կիրառում է մոդելների շարք. • Մակրոտնտեսական մոդելը կիրառվում է դրամավարկային քաղաքականության ոլորտում որոշումների հետ կապված տնտեսական փոփոխականները կանխատեսելու նպատակով, • մյուս մոդելները, այդ թվում՝ կիսակառուցվածքային մոդելը և դինամիկ հավասարակշռության ընդհանուր մոդելը, մշակման փուլում են
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Բնականոն գնաճի և ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականության բաշխման գրաֆիկները հրապարակվում են գնաճի հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Տոկոսադրույքները հաստատուն են և գերակա կանխատեսման ամբողջ ժամանակահատվածի համար
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	ԴՔՀ
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Ըստ Թաիլանդի բանկի և Ֆինանսների նախարարության միջև կնքված նոր պայմանավորվածության՝ այն դեպքում, երբ նպատակը չի իրագործվում, ԴՔՀ-ն պետք է բաց նամակ ներկայացնի Ֆինանսների նախարարություն՝ պարզաբանումներ տալով չիրագործման պատճառների առնչությամբ, ինչպես նաև ներկայացնելով այն միջոցառումները, որոնց կիրառման շնորհիվ գնաճը վերադառնալու է նպատակային տիրույթ
4.2	Խորհրդարանական լսումներ	Տարին երկու անգամ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Մամուլի ասուլիս
5.3	Արձանագրության հրապարակում	Ոչ
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Ոչ
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Թուրքիա

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Թուրքիայի Հանրապետության կենտրոնական բանկ
1.2	Իրավական ակտ	Թուրքիայի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքով սահմանված է, որ Բանկի հիմնական նպատակն է՝ հասնել և պահպանել գների կայունությունը
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	2006 թ. հունվար
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովը գնաճի նպատակը սահմանում է երկրի Կառավարության հետ համատեղ՝ դրամավարկային քաղաքականության ռազմավարություն շրջանակներում
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանուր, թե՞ բնականոն	Տարեկան ՍԳԻ
1.7	Ընթացիկ նպատակը	2010 թ.՝ 6.5%±2 տոկոսային կետ: 2011 թ.՝ 5.5%±2 տոկոսային կետ: 2012 թ.՝ 5.0% ± 2 տոկոսային կետ
1.8	Նպատակային հորիզոնը	Բազմամյա հորիզոն (երեք տարի)
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Օվերնայթ տոկոսադրույքներ: Իրացվելիության ամենավերջին պատուհանի տոկոսադրույքներ: Օվերնայթի և մեկշաբաթյա ժամկետայնությամբ փոխառության գործիքների տոկոսադրույքներ
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային Քաղաքականության հանձնաժողով. հանձնաժողովի կազմը հետևյալն է՝ Բանկի կառավարիչ (նախագահող), չորս կառավարչի տեղակալներ, մեկ անդամ՝ ընտրված Խորհրդի կողմից վերջինիս կազմից, և մեկ անդամ, որը կնշանակվի համատեղ հրամանագրով՝ Կառավարչի առաջարկով: Գանձապետարանի քարտուղարը/տեղակալը կարող է մասնակցել նիստերին՝ առանց քվեարկության իրավունքի
2.2	Արտաքին անդամների առկայություն	Մեկ արտաքին անդամ ակադեմիական ոլորտի ներկայացուցիչ է
2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բանկի կառավարիչը և փոխկառավարիչը նշանակվում են հինգ տարի պաշտոնավարման ժամկետով և կարող են վերանշանակվել: Համատեղ հրամանագրով նշանակված արտաքին անդամի պաշտոնավարման ժամկետը նույնպես հինգ տարի է

2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով. Կառավարչի ձայնը որոշիչ է
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Եռամսյակային կանխատեսման մոդել: DSGE մոդելը մշակման փուլում է
3.2	Հրապարակվող կանխատեսումները	Գնաճի կանխատեսման հավանականության բաշխման գրաֆիկը հրապարակվում է գնաճի հաշվետվությունում
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Ներծին
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Այն դեպքում, երբ նպատակը չի իրագործվում, Բանկը բաց նամակ է ներկայացնում Կառավարություն՝ պարզաբանումներ տալով պատճառների առնչությամբ
4.2	Խորհրդարանական լսումներ	Տարին երկու անգամ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Չի կիրառվում:
5.3	Արձանագրության հրապարակում	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի նիստի ամփոփագիրը հրապարակվում է նիստին հաջորդող ութ աշխատանքային օրերի ընթացքում
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Ոչ
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ

Միացյալ Թագավորություն

1.	**Գնաճի նպատակադրման ռազմավարություն**	
1.1	Դրամավարկային հաստատությունը	Անգլիայի բանկ
1.2	Իրավական ակտ	Համաձայն Անգլիայի բանկի մասին 1998 թ. ընդունված օրենքի՝ Բանկի հիմնական նպատակներն են. «…ա) պահպանել գների կայունություն, և բ) չշեղվելով հիշյալ նպատակից՝ սատարել Նորին մեծության կառավարության տնտեսական քաղաքականությանը, այդ թվում՝ աճի և զբաղվածության նպատակների իրագործմանը»: Դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի կողմից հաշվետվության ներկայացման ընթացակարգը տարեկան կտրվածքով հաստատվում է Միացյալ թագավորության գլխավոր գանձապետի (Ֆինանսների նախարար) կողմից
1.3	Գործառնական անկախություն	Այո
1.4	ԳՆ ներդրման ամսաթիվը	1992 թ. հոկտեմբեր
1.5	Նպատակը սահմանող մարմինը	Կառավարությունը: Նպատակը յուրաքանչյուր տարի վերահաստատվում է Գլխավոր գանձապետի կողմից՝ բյուջեի տարեկան ներկայացման գործընթացում
1.6	Նպատակի ցուցանիշը՝ ընդհանու՞ր, թե՞ բնականոն	12-ամսյա աճ ընդհանուր ՍԳԻ-ում
1.7	Ընթացիկ նպատակը	Գնաճի տարեկան տեմպի 2% կետային նպատակ
1.8	Նպատակային հորիզոնը	Բոլոր ժամանակներում
1.9	Քաղաքականության հիմնական տոկոսադրույքը	Մեկշաբաթյա ռեպո տոկոսադրույք
2.	**Որոշումների կայացում**	
2.1	Որոշում կայացնող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով: Հանձնաժողովի կազմը բաղկացած է ինն անդամներից՝ Բանկի կառավարչից (նախագահող), երկու կառավարչի տեղակալներից, Բանկի գլխավոր տնտեսագետից, Շուկաների հարցերով պատասխանատու գործադիր տնօրենից և չորս արտաքին անդամներից
2.2	Արտաքին անդամների առկայություն	Չորս արտաքին անդամներ, որոնք նշանակվել են ըստ դրամավարկային ոլորտում ունեցած փորձառության

2.3	Անդամների նշանակման ժամկետները	Բանկի կառավարիչը և կառավարչի տեղակալները նշանակվում են Թագավորական գահի կողմից՝ Կառավարության խորհրդով՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով, որը հնարավոր է երկարացնել միայն մեկ անգամ: Գլխավոր տնտեսագետը և Շուկաների հարցերով պատասխանատու գործադիր տնօրենը նշանակվում են Կառավարչի կողմից՝ գլխավոր գանձապետի հետ խորհրդակցությունից հետո: Արտաքին անդամները նշանակվում են գլխավոր գանձապետի կողմից երեք տարի պաշտոնավարման ժամկետով, որը հնարավոր է երկարացնել միայն մեկ անգամ
2.4	Որոշումների կայացման գործընթացը	Քվեարկության միջոցով. մեկ անձը՝ մեկ ձայն սկզբունքով: Մեծամասնական վիճակի բացակայության դեպքում Կառավարչի ձայնը որոշիչ է: Փոքրամասնություն կազմած անդամին հարց է տրվում, թե նա տոկոսադրույքի ինչ մակարդակ էր նախընտրել
2.5	Որոշում կայացնող նիստի գումարման հաճախականություն	Ամսական
3.	**Մոդելավորում և կանխատեսում**	
3.1	Կենտրոնական բանկի կողմից օգտագործվող մոդելները	Անգլիայի բանկը կիրառում է մոդելների շարք, ինչպես վիճակագրական, այնպես էլ՝ տեսական: DSGE-ն հիմնական կանխատեսման մոդելն է (Անգլիայի բանկի եռամսյակային մոդել)
3.2	Հրապարակվող կանխատեսումները	ԳՆաճի և ՀՆԱ-ի կանխատեսման հավանականության բաշխման գրաֆիկները յուրաքանչյուր եռամսյակ հրապարակվում են գնաճի հաշվետվությունում:
3.3	Տոկոսադրույքի վերաբերյալ ենթադրություն կանխատեսումներում	Կանխատեսումները պայմանավորված են տոկոսադրույքների վերաբերյալ շուկայի ակնկալիքներով և հաստատուն դրույքներով
3.4	Կանխատեսում կատարող մարմինը	Դրամավարկային քաղաքականության հանձնաժողով
4.	**Հաշվետվական մեխանիզմներ**	
4.1	Բաց նամակ	Եթե գնաճը նպատակից որևէ ուղղությամբ (դեպի վեր կամ վար) շեղվում է ավելի քան 1 տոկոսային կետով, ապա Բանկի Կառավարիչը պարտավոր է բաց նամակ գրել Գլխավոր գանձապետին՝ բացատրելով դրա պատճառները և ներկայացնելով Բանկի ընթացիկ գործողությունները

4.2	Խորհրդարանական լսումներ	Տարին երեք անգամ
5.	**Հաղորդակցում և հրապարակումներ**	
5.1	Քաղաքականության վերաբերյալ որոշման անմիջապես հայտարարում	Մամուլի հաղորդագրություն
5.2	Մամուլի ծանուցում/մամուլի ասուլիս՝ որոշումը կայացնելուց հետո	Չի կիրառվում
5.3	Արձանագրության հրապարակում	Դրամավարկային Քաղաքականության հանձնաժողովի նիստի ավարտից երկու շաբաթ անց:
5.4	Անհատական քվեների/քվեների հավասարակշռության հրապարակում	Անհատական քվեները հրապարակվում են:
5.5	Գնաճի հաշվետվություն	Այո:
5.6	Հաճախականություն	Տարին չորս անգամ:

Օգտագործված գրականություն

Ball, L. and Sheridan, N. (2003), 'Does Inflation Targeting matter?', *NBER Working Paper no. W9577*.

Bean, C. (1998), "The new UK monetary arrangements: A view from the literature", *Economic Journal*, Vol. 108, Issue 451, pages 1,795–809, available at http://economia.unipv.it/pagp/pagine_personali/gascari/bean98.pdf.

Bean, C. (2003), "Inflation targeting: the UK experience", *Bank of England Quarterly Bulletin*, Winter, pages 479–94.

Bernanke, B. and Mihov, I. (1997), "What does the Bundesbank target?", *European Economic Review*, Vol. 41, pages 1,025–53.

Bernanke, B. and Woodford, M. (2005), "The Inflation Targeting Debate", Chicago, Illinois, University of Chicago Press.

Borio, C. and White, W. (2004), "Whither monetary and financial stability? The implications of evolving policy regimes", *BIS Working Paper no. 147*.

Dincer, N. and Eichengreen, B. (2007), "Central Bank Transparency: where, why and with what effects?", *NBER working paper no. 13003*, available at www.nber.org/papers/w13003.pdf.

Geraats, P. (2009), "Trends in Monetary Policy Transparency", *CESifo Working Paper no. 2584*.

Goodhart, C A E (2001), 'Monetary transmission lags and the formulation of the policy decision on interest rates', *Federal Reserve Bank of St. Louis Review, July*, pages 165–82, available at www.research.stlouisfed.org/publications/review/01/05/165-182Goodhart.qxd.pdf.

Gürkaynak, R., Levin, A. and Swanson, E. (2006), "Does Inflation Targeting Anchor Long-Run Inflation Expectations? Evidence from Long-Term Bond Yields in the US, UK and Sweden", available at www.cepr.org/pubs/new-dps/dplist.asp?dpno=5808.asp.

Hammond, G., Kanbur, R. and Prasad, E. (eds) (2009), *Monetary Policy Frameworks for Emerging Markets*, Edward Elgar.

Hyvonen, M. (2004), "Inflation Convergence Across Countries", *Reserve Bank of Australia Working Paper no. 2004–04*, available at www.rba.gov.au/rdp/RDP2004-04.pdf.

Kahn, G. A. (2007), "Communicating a policy path: the next frontier in central bank transparency?", available at www.kansascityfed.org.

King, M. (2005), “Monetary Policy: Practice Ahead of theory”, available at www.bankofengland.co.uk/publications/speeches/2005/ speech245.pdf.

King, M. (2007), “The MPC Ten Years On”, available at www.bankofengland.co.uk/publications/speeches/2007/ speech309.pdf.

Levin, A. T., Natalucci, F. M. and Piger, J. M. (2004), “The macroeconomic effects of inflation targeting”, *Federal Reserve Bank of St. Louis Review, July/August*, Vol. 86, No. 4.

Orphanides, A. and Williams, J. C. (2003), “Imperfect knowledge, inflation expectations and monetary policy”, *NBER Working Paper no. 9884*.

Reddell, M. (2006), “Monetary policy accountability and monitoring”, available at www.rbnz.govt.nz/monpol/about/2851362.html.

Rosenberg, I. (2008), “The monetary policy decision-making process”, available at www.bis.org/review/r080617d.pdf.

Sellon, G. H. (2008), “Monetary policy transparency and private sector forecasts: evidence from survey data”, *Federal Reserve Bank of Kansas City Economic Review*.

Svensson, L E O (2007), “Optimal inflation targeting: further developments of inflation targeting” in Mishkin, F. and Schmidt-Hebbel Santiago, K. (eds), *Monetary Policy Under Inflation Targeting*, Banco Central de Chile.

Tucker, P. (2007), “Central banking and Political Economy: The Example of the UK’s Monetary Policy Committee”, available at www.bankofengland.co.uk/publications/speeches/2007/ speech312.pdf.

Vega, M. and Winkelried, D. (2005), “Inflation Targeting and Inflation Behaviour: A Successful Story?”, *International Journal of Central Banking*, Vol. 1(3), December.

Woodford, M. (2003), “Interest and Prices: Foundations of a Theory of Monetary Policy”, *Princeton, New Jersey, Princeton University Press.*

Կենտրոնական բանկերի վերաբերյալ ձեռնարկներ

ԿԲԳՀԿ-ի վերաբերյալ ձեռնարկները տե՛ս հետևյալ կայքում. www.bankofengland.co.uk/education/ccbs/handbooks_lectures.htm.

Որոշ ձեռնարկներ հասանելի են նաև արաբերենով, իսպաներենով և ռուսերենով:

1. State of the art of inflation targeting Gill Hammond

2. Forecasting banknotes Mohamed Afzal Norat
3. Liquidity forecasting Simon T. Gray
4. Developing financial markets (A) Simon T. Gray and Nick Talbot
5. Monetary and financial statistics (S) Monetary and Financial Statistics Division
6. Monetary operations (A) (R) (S) Simon T. Gray and Nick Talbot
7. Consumption theory (S) Emilio Fernandez-Corugedo
8. Unit root testing to help model building Lavan Mahadeva and Paul Robinson
9. Banking and monetary statistics (A) (S) John Thorp and Philip Turnbull
10. Basic bond analysis (A) (S) Joanna Place
11. Foreign exchange reserves management (S) John Nugee

Հեռանկարներ. Տեխնիկական հարցեր

1. Estimating general equilibrium models: an application with labour market frictions Federico S Mandelman and Francesco Zanetti

Վերջին ԿԲԳՀԿ հրապարակումներ

Blake, A. P. and Kirsanova, T. (2008), "Discretionary policy and multiple equilibria in LQ RE models", *University of Exeter Working Paper no. 08/13*, October.

Blake, A. P. and Markovic, B. (2008), "The conduct of global monetary policy and domestic stability", *Bank of England Working Paper no. 353*. Available at www.bankofengland.co.uk/publications/workingpapers/wp353.pdf.

Gondat-Larralde, C. and James, K. R. (2008), "IPO pricing and share allocation: the importance of being ignorant", *The Journal of Finance*, Vol. 63, Issue 1, pages 449–78.

Hammond, G., Kanbur, R. and Prasad, E. (2009), "Monetary policy challenges for emerging market economies", *Cornell University Working Paper no. 48925*.

Hammond, G., Kanbur, R. and Prasad, E. (eds) (2009), "Monetary policy frameworks in emerging markets", *Edward Elgar*.

Mandelman, F. S. and Zanetti, F. (2008), "Technology shocks, employment, and labour market frictions", *Federal Reserve Bank of Atlanta Working Paper no. 2008–10*.

Mumtaz, H. and Surico, P. (2008), “Evolving international inflation dynamics: evidence from a time-varying dynamic factor model”, *CEPR Discussion Paper no. 6767*.

Mumtaz, H. and Surico, P. (2009), “The transmission of international shocks: a factor augmented VAR approach”, *Journal of Money, Credit and Banking*, Vol. 41, Issue 1, pages 71–100.

Soffritti, M. and Zanetti, F. (2008), “The advantage of tying one’s hands: revisited”, *International Journal of Finance and Economics*, Vol. 13, pages 135–49.

Thomas, C .and Zanetti, F. (2008), “Labor market reform and price stability: an application to the euro area”, *Bank of Spain Working Paper no. 0818*.

Zanetti, F. (2008), “Labour and investment frictions in a real business cycle model”, *Journal of Economic Dynamics and Control*, Vol. 32, Issue 10, pages 3,294–314.

Zanetti, F. (2009), “Effects of product and labor market regulation on macroeconomic outcomes”, *Journal of Macroeconomics*, Vol. 31, Issue 2, pages 320–32.

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2010